






ԼԵԻՈՆ ՀԱՆԹ

123

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ



491.99-5
6 30

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

III
3868
A

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

Դպրոցական վեցերորդ տարուան համար

Կազմեց

ԼԵՒՈՆ ՀԱՆԹ



Տ Պ Ա Ր Մ Ն

ՀԱՄԱԶԳԻՍԹԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պ Է Յ Ր ՈՒ Յ

1950

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

ՇԵՂՈՒՄՆԵՐ ԶԻՄՆԱԿԱՆ ԹԵՔՈՒՄԵՆ

Առաջին հատում

ՀՈՒՈՎԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Ա. ՇԵՂՈՒՄՆԵՐ ՄԻԱՅՆ ԵԶԱԿԻ ՑՐԱԿԱՆՈՒ ՄԷՋ

Կան բաւական թիւով բառեր, որոնք մէկ, երկու կամ բոլոր հոլովներու մէջ կը չեղին հոլովման ընդհանուր ձեւէն:

Ամենէն աւելի տրական հոլովն է ենթական չեղումի, երբեմն ինքը մինակ, երբեմն միւս հոլովներուն հետ:

Կը չիլի միայն տրականը, միւս հոլովները կանոնաւոր թողնելով, հետեւեալ դէպքերուն մէջ.

ա. Եղակի տրականը կ'ըստանայ ու ձայնաւորը, յոգնակի ձման, փոխանակ ի ստանալու.

1. Բոլոր լծորդութիւններու անորոշ դերբայները. խաղալու, աեսնելու, խօսելու:

2. Խուսիք մը ուրիշ բառեր, որոնցմէ ամենէն քործածականներն են՝ ձի, ծով, հող, հով, շահ, դար, մամ, հայ, գլուխ, արեւ, մարդ, աղայ, անգամ, հեղ, մահ, էշ (իշու):

բ. Եղակի տրականը կ'ըստանայ ամ մասնիկը, փոխանակ ի ձայնաւորի.

1. Ուղղականի մէջ ում մասնիկով վերջացող բառերը. ուսում-ուսման, խաւարում-խաւարման, ներում-ներման, հոլովում-հոլովման: Ասոնք կրնան և կանոնաւոր տրական ունենալ, մանաւանդ երբ երեք

բաղաձայն իրարու վրայ զիջուելուն պատճառ կը դառնան. հնչալման, պէտք է ըսել՝ հնչալումի. անկման, լաւ է ըսել՝ անկումի:

2. Գրաբարի մէջ ըն մասնիկը ունեցող և աշխարհաբարի մէջ այդ մասնիկը նետած բառերուն մեծագոյն մասը. ձուկ-ձկան, քոռ-քոռան, մուկ-մկան, բեռ-բեռան, լեռ-լեռան, եզ-եզան, դուռ-յուռան:

3. Խումբ մը ուրիշ բառեր, որոնցմէ ամենէն գործածականներն են՝ մանուկ-մանկան, աղջիկ-աղջկան, երիկ-երկան, կնիկ-կնկան, աւուն-աւեան, գաւուն-գաւան, անուն-անուան. այլ և տուն-տան, տուն-տան:

դ. Քանի մը բառեր կը պահեն միայն տրական հոլովի մէջ գրաբարէ եկած իրենց յատուկ վերջաւորութիւնները.

1. Կայսր-կայսեր, կայսրէն, կայսրով:

2. Ժողովաւոր-ժողովորդեան, ծնունդ-ծննդեան, արիւն-արեան. կը գործածուին նաեւ կանոնաւոր ձևերը՝ ժողովուրդի, ծնունդի, արիւնի:

3. Սէր-սիրոյ-սէրէ-սիրով. սկսած է գործածուիլ նաեւ տրականի ժողովրդական կենդանի ձևը՝ սիրու. «Աստու սիրուն»:

Բ. ՇԵՂՈՒՄՆԵՐ ՏՐԱԿԱՆԻ ՈՒ ՐԱՅԱՌԱԿԱՆԻ ՄԷՋ

Ժամանակ ցոյց տըւող բառերուն մեծագոյն մասը իր յատուկ ուան վերջաւորութիւնը ունի տրականի համար և լրնէ վերջաւորութիւնը բացառականի համար. գործիականը կանոնաւոր է. օր, օրուան, օրեր-նէ, օրով:

Այսպէս կը հոլովուին՝ ժամանակ, ցարի, ամիս, շաբաթ, իրիկուն, եօթնէ, կեսօր, ամառ, ձմեռ, ցեւեկ, գիշեր, հիմակ, հերու, վաղը, ասեմ:

Այսպէս կը հոլովուին նաեւ՝ հեղ, անգամ և մահ բառերը. հեղ, հեղու = հեղուան, հեղւրնէ. անգամ, անգամուն = անգամուան, անգամւրնէ. մահ, մահու = մահուան, մահւրնէ:

Այս ուան տրականով ժամանակ ցոյց տըւող վերի բառերէն շատերը իրենց կանոնաւոր ի ձայնաւորով, երբեմն ալ ու ձայնաւորով տըրականները ունին: Ուան տրականը և լրնէ բացառականը միշտ ժամանակի տեւողութիւնը, երկարութիւնը աչքի առաջ ունի. իսկ ի-ով, ու-ով կամ ե-ով եղած ժամանակի բառերը այդ ժամանակի տեւողութիւնը աչքի առաջ չունին, այլ միայն ժամանակի տնունը: Օրինակ. գործս կ'աւարտեմ երկու շաբթուան ընթացքին (ո՛չ շաբաթի). գալ շաբթու անգամ մը մեղի հանդիպէ՛ (ո՛չ շաբթուան). ամսըւան մը գործ է (ո՛չ ամսի). ստացայ ամսու (կամ ամսի) հինգին դրած նամակդ (ո՛չ թէ ամսըւան):

Գ. ՇԵՂՈՒՄՆԵՐ ՆՐՄԻՑ ՀՈՒՈՎՆԵՐՈՒՆ ՄԷՋՆ ԱԼ

ա. Արիւն սկսութիւն ցոյց տըւող բառերէն հայր, մայր և եղբայր անունները ունին իրենց յատուկ հոլովման ձեւը.

հայր—հօր—հօրմէ—հօրմով

մայր—մօր—մօրմէ—մօրմով

եղբայր—եղբօր—եղբօրմէ—եղբօրմով:

Այսպէս կը հոլովուին նաեւ այն բառեր, որոնց երկ-րորդ մասը այդ երեքէն մէկն ու մէկն է. այսպէս՝ հօրեղբայր, ծըծ-մայր, հոգեհայր:

բ. Ազգականութիւն ցոյց տըւող քանի մը բառեր կը հոլովուին -ոջ, -ոջմէ, -ոջմով վերջաւորութիւններու յաւելումով.

Այդ բառերն են՝ եոյր, ցալ, անեք, կեսուր, կիճ, ալիւ քնկեք և քեր. ինչպէս և ասոնցմով իրենց երկրորդ մասը կազմող բարդութիւնները՝ դասընկեր, հողատէր, մօրաքոյր եւ այլն:

գ. Աստուած բառը իր առանձին հոլովումն ունի. աստուած-աստըծու-աստըծմէ-աստըծմով:

դ. Ուրիւն վերջացող բառերը կը հոլովուին հետեւեալ ձեւով՝ -ութիւն, -ութեան, -ութենէ, -ութեամբ:

Ասոնց գործիականը սովորական ու ձեւովն ալ կը գործածուի. ուրեմբ աւելի իբրեւ մակբայ, ուրիւնով աւելի իբրեւ խնդիր:

Դ. ՇԵՂՈՒՄՆԵՐ ՅՈՒՆԱԿԻ ՀՈՒՈՎՄԱՆ ՄԷՋ

1. Ժողովուրդներու անուններէն ոմանք յոգնակի տրական հոլովի մէջ՝ իրենց կանոնաւոր ձեւերուն կից՝ կը գործածուին նաեւ Գրաբար ձեւով աց, ից, ոց վերջաւորութեամբ: Օրինակ՝ հայեր, հայերու=հա-յոց. պարսկներ, պարսկներու=պարսից. յոյներ, յոյներու=յունաց:

2. Երբ ցի վերջացող և որտեղացի ըլլալը ցոյց տըւող բառերուն յոգնակի ուղղականը է մասնակով է կաղմըւած, տրական հոլովը կ'ըլ-լայ ոց մասնակի յաւելումով, ի՞նչ վերջաւորութիւնը քննելէն ետքը: Օրինակ՝ գիւղացիներ և գիւղացիներու կամ գիւղացիք և գիւղացոց:

3. Գրաբար ձեւով յոգնակին ունի՞ք վերջացող տոհմի անունները տրական հոլովին մէջն ալ կը պահեն գրաբար ձեւը՝ եանց. այսպէս՝ Բաղրատունիներ-Բաղրատունիներու կամ Բաղրատունիք-Բաղրատուն-եաց: Լեւոնիներ-Լեւոնիներու կամ Արծրունիք-Արծրունեաց:

4. Նոյնպէս տոհմը որոշող եանց-նեք վերջաւորութեան փոխարէն յաճախ կը գործածենք գրաբարակերպ եմք (այսինքն եանք) ձեւը. այն ատեն տրականն ալ կ'ըլլայ եմց (այսինքն եանց). Յակոբեանները=

Թակոբենք, Թակոբեաններու—Թակոբենց. Պոռնեաներ—Պոռնենք. Պը-
նոռնց. Ծերեաններ—Ծերենք, Ծերենց:

5. Կի՞ն ու աղջիկ բառերը՝ իրենց կանոնաւոր ձեւերուն կից՝ ու-
նին նաեւ գրաբար ձեւով՝ կ'սեմայի—կ'սեմաց, աղջկունք—աղջկանց:

6. Իսկ տղայ ու մարդ բառերը յոգնակիի մէջ ունին իրենց ուրոյն
լրիւ հոլովումը.

տղաք—տղոց—տղոցմէ—տղոցմով

մարդիկ—մարդոց—մարդոցմէ—մարդոցմով:

1. Կազմե՛ք նախադասութիւններ, ուր գործածուին հետեւեալ բառե-
րուն եզակի տեսակներ:

Ձի, ծով, շահ, հայ, գլուխ, մարդ, տղայ.

Ուտում, ներում, հակում, յուզում.

Ժողովուրդ, ծնունդ, արիւն:

2. Գրե՛ք մէյ-մէկ տողի վրայ հետեւեալ բառերուն չորս հոլովները
եզակի:

Աղջիկ, մանուկ, տուն, շուն, աշուն:

3. Գործածե՛ք նախադասութիւններու մէջ հետեւեալ անունները գա-
նազան հոլովներով:

Լեռ, դուռ, մուկ, ձուկ, թոռ:

4. Շինե՛ք հոլովական տախտակը հետեւեալ անուններուն, եզակի ու
յոգնակի:

Աստուած, սէր, մահ, էջ:

5. Գործածե՛ք հետեւեալ բառերը երկ-երկու նախադասութիւններու
մէջ, ուր անգամ մը տեւողութիւնը շեշտուի, անգամ մը՝ ոչ:

Տարի, ամիս, չաբաթ, օր, վաղը, այսօր:

6. Արտագրե՛ք գրաբարով յոգնակիները վերածելով արդի աւսար-
հիկ ձեւերուն:

Մշեցիք հարթավայրի բնակիչ են, սասունցիք լեռներու: Լեռնո-
ցոց լեզուն միշտ աւելի կոշտ է:

Թիֆլիզեցոց բարբառին մէջ հոլովումը բաւական նման է պոլսե-
ցոց բարբառին:

Խրիմցիք գաղթած են Անիէն միջին դարերուն:

Յունաց, իտալացոց և սպանիացոց բարբերուն մէջ չատ կան ընդ-
հանուր գծեր, իբրեւ հարաւի ժողովուրդներ:

Հայոց պատմութիւնը լաւ գիտնալու և լաւ հասկնալու համար
պէտք է գիտնալ նաեւ վրացոց, պարսից, արաբացոց, յունաց, հոռ-
մայեցոց և բիւզանդացոց պատմութիւնը, իսկ նոր դարերու համար
ալ՝ թուրքաց, ռուսաց և ընդհանրապէս եւրոպացոց:

Մեր պատմութեան մէջ տիրող թագաւորական զխաւոր տները եղած են՝ Արաաշէսեանք, Արշակունիք, Բագրատունիք, Արծրունիք և Ռուբինեանք:

Սիւնեաց նախարարութիւնը կ'իյնայ Հայաստանի հիւսիս-արեւելեան սահմաններուն վրայ:

Սեւանի լճին կ'ըսեն նաեւ Գեղարքունեաց ծով, այդպէս ալ Վանի լճին կ'ըսենք Բզնունեաց ծով:

Շատ մը զպրօցներ ունին տղոց ու աղջկանց առանձին բաժանումներ, թէեւ հետզհետէ սկսած է ընդհանրանալ խառն կրթութիւնը:

Կարմիր խաչի Տիկնանց Միութիւնը երէկ իրիկուն ներկայացում ունէր. քաղաքիս տիկնանց ու օրիորդաց մեծ մասը անգամ է այդ ընկերութեան:

7. Ի՞նչ սեսակ բառերու վրայ է, որ ամենեւնի աւելի մնացեր են Գրաբար յոգնակի ձեւերը. ի՞նչ է պատճառը:

8. Հոլովէ՛լ լրիւ ամեն մէկը երկու տողի վրայ՝ նախ եզակին ու քակր՝ յոգնակին:

Տղայ ու աղջիկ, մարդ ու կին, քոյր ու եղբայր:

9. Գրե՛լ նախադասութիւններ, ուր գործածուին տղայ ու մարդ բառերու յոգնակին չորս հոլովներն ալ:

10. Կազմե՛լ ութիւն մասնիկի հոլովական քախսակը. քովը օրինակով մը:

11. Ո՞ր վերջաւորութիւններն են, որոնք իրենց յատուկ հոլովումը ունին կամ որեւէ հաստատ անանկացութիւն մը:

12. Ինչպէ՞ս կ'ապօքոցանես, որ հարս, լեռ, հիմ, եղ բառերը գրաբարի մէջ եղած են հարսն, լեռն, հիմն, եզն:

13. Ո՞ր հոլովն է, որ ամենեւնի աւելի շատ կ'օգտագործուի. ո՞ր հոլովն է, որ ամենեւնի քիչ օգտագործուի:

14. Իրենց իմաստով ի՞նչ սեսակ բառերն են, որ ամենեւնի աւելի հոլովական ընդհանուր ձեւն են կը օգտագործուին:

15. Շան, տան, դարնան ու աշնան տական հոլովները բոլորը նոյն ձեւով են առաջացած:

16. Ն՞րք կը գործածենք գործիական հոլովը:

17. Ն՞րք կը գործածենք բացառական հոլովը:

18. Ն՞րք կը գործածենք տական հոլովը:



ԵՐԿՐՈՐԴ ԲԱՏՈՒԱԾ

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Ա. ԴԵՐԱՆՈՒՆ

Ա. Անուաններուն մէջ կայ խումբ մը, որ բոլորովէն ինքնայատուկ դիրք կը գրաւէ. այդ խումբին պատկանող անուանները իրենք որոշ իմաստ չունին, բայց կը գործածուին ուրիշ անուաններու փոխարէն և ո՛ր անունին տեղը որ դրուած ըլլան՝ այդ անունին իմաստը կ'առնեն: Տեսակ մը պարապ ու թափանցիկ աման, որ միշտ կ'առնէ իր մէջ լեցուած հեղուկին գոյնը:

Ճես եմ ամենէն երկար տպրողը. ըսաւ արծիւը: — Ո՛չ, ես քեզմէ ալ աւելի երկար կ'ապրիմ. պատասխանեց հսկայ կաղնին:

Այս վէճին մէջ գործածուած ես բառը առաջին անգամ արծիւ ըսել է. երկրորդ անգամ միեւնոյն ես բառը հսկայ կաղնին է: Ճիսկ ես հինգերորդ կարգի աշակերտ այսինչն եմ:

Այս ես-ին նման պարապ աման մըն է նաև դուն: Ասոնց պէս ալ ասիկա, անիկա, հոս, հոն, մեք, ձեք և ուրիշներ:

Իր յատուկ ու որոշ իմաստը չունեցող այս անուանները սովորական գոյականներէն ու ածականներէն, այսինքն բուն անուաններէն, զանազանելով՝ կ'անուանենք դերացում: Ըսել կ'ուզէ բուն անուններուն դերը խաղացող անուն:

Բ. Դերանուններու մեծ մասի մէկ խոշոր առանձնայատկութիւնն ալ ան է, որ երեք դէմք ունին. դիմորոշ յօդերուն ու բայական ժամանակներուն նման իրարմէ քիչ մը տարբեր երեք ձևեր՝ նայելով թէ խօսողի, լսողի, թէ՞ երրորդի մը փոխարէն են դրուած:

Դերանունին առաջին դէմքը ցոյց կու տայ խօսողը կամ խօսողին մօտիկ ըլլալը կամ խօսողին վերաբերիլը: Իր բնորոշող հնչիւնն է ս. օրինակ՝ ես, այս, ասիկա, հոս, ասանկ:

Դերանունին երկրորդ դէմքը ցոյց կու տայ լսողը կամ լսողին մօտիկ ըլլալը կամ լսողին վերաբերիլը: Իր բնորոշ հնչիւնն է դ, որը շատ տեղ դարձած է աւելի հնչեղ. կ'արտասանենք ու կը դրենք Տ՝ Օրինակ՝ դուն, այդ, աճիկա, հոգ, աճանկ:

Դերանուշին երրորդ դէմքը ցոյց կու տայ այն անձը, այն իրը կամ այն տեղը, որու մասին որ կը խօսինք կամ որուն աւելի մօտիկ է մեր յիշած իրը, տեղը կամ որուն կը վերաբերի մեր ըսածը: Իր բնորոշ հնչիւնն է ն. օրինակ՝ ինք, ան, անիկա, հոն, անանկ:

Այսպէս երեք գիմաձեւ ունեցող դերանուշները կ'անուանենք դիմակաւն դերանուշներ:

Դերանուշները սկիզբը եղած են սովորական բուն անուշներ, բայց շատ յաճախ դործածուելով ուրիշ բառերու համար ծառայական գերի մէջ՝ հետզհետէ տուժած են իրենց սեփական շշանակութիւնը, արտաքուստ ալ բաւական տաշուհի են ու մաշուհի և դարձեր են գիմակ, փոխանակ կենդանի գէմքի:

Գ. Դերանուշները թիւով շատ չեն. ընդամենը քանի մը տասնակ: Բայց կենդանի խօսքի մէջ շատ կը քործածուին և մեծ մասամբ ալ ունին իրենց յատուկ հոլովական ձեւերը, տարբեր բուն անուշներու կանոնաւոր հոլովումէն, որով հարկ կ'ըլլայ անոնց վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնենք:

Դիմաւոր դերանուշները կը բաժնենք հինգ խումբի՝

- 1) Անձնական դերանուշներ
- 2) Ցուցական դերանուշներ
- 3) Ատաղմական դերանուշներ
- 4) Բաղդատական դերանուշներ և
- 5) Տեղական դերանուշներ

19. Բուն անուշներուն տեղը, ուր որ յաւմարի, գի'ւ ան դերանուշներ, միայն այնպէս, որ իմաստին յսակութիւնը բնաւ չխանգարուի:

Այս առտու մեծ եղբայրս նաւակ մը վարձեց: Եղբայրս, քոյրս ու ես մտանք մէջը: Եղբայրս ու ես կը թիավարէինք. եղբայրս շատ վարպետ կը թիավարէ:

Քուրիկա ալ նստաւ ղեկին առջեւը. քուրիկա ալ վերցուց ղեկին թելերը. քուրիկա ալ նաւակը կը ղեկավարէր:

Ծովը կայտառ կը ծփար թեթեւ. ծովն ալ մեղի պէս սրտով ուրախ էր: Վերէն կը խնդար պայծառ արեւ մը. արեւը վերէն ոսկի լոյսեր կը թափէր ծովափերուն վրայ:

Քոյրս երգել սկսաւ. քրոջս անուշ ձայնը փռուեցաւ ջրի ծովափերուն վրայ. քրոջս ձայնն ալ կարծես կը ծփար պայծառ արեւին տակ:

Ու նաւակը չեչտ կը սլանար կապոյտ ծովափերուն վրայէն. մեր նաւակն ալ մեղի նման գոհ էր ու զըւարթ:

20. Վերի վարժութեան մեջ ի՞նչ անուշներու տեղ դրիւ ան դերանուշներ:

Ձ1. Ան, անոնք, հոն դերանուցներուն տեղը դի՛ր իրենց բուն անուցները:

Շոգենաւը սուլեց երրորդ անգամ: Ան կը պատրաստուէր ճամբայ ելլելու:

Նաւապետը քարձրացաւ իր վերի կամրջակը և կեցաւ հոն:

Պիչ մը ետքը իր առջևի խողովակին մէջ բաներ մը ըսաւ ան. և նաւուն ետեւի մեծ պտուտակը սկսաւ բանիլ:

Ան կը բանէր սկիզբը շատ ծանր-ծանր և նաւը դանդաղ կը հեռանար ցամաքի եզերքէն:

Իսկ հոն խռնուեր էր ահագին բաղմուսիւն: Անոնք եկեր էին իրենց սիրելիները ճամբու դնելու: Բարձր ու աղմուկով ամենքը կը խօսէին, ճամբու դնողները հոսկէ, ճամբորդները հոնկէ:

Բայց քիչ-քիչ աղմուկը պակսեցաւ. նաւը արդէն բաւական քաղուեր էր: Մարդ մը հոն ձեռքերը բերնին առջևը խողովակ շինած բան մը կը պոռար. բայց հոս լսող ու հասկըցող չկար:

Հիմա ձեռքեր ու թաշկինակներ կը շարժէին միայն. շատերուն աչքերը արցունքոտ էին. անոնք բոլորն ալ սիրելիներէ կը բաժնուէին:

Մինչև որ նաւը քիթը դարձուց դէպի բաց ծովը և ան արդէն կ'երթար շոգիին բոլոր ուժովը:

Բարի՛ ճանապարհ:

Ձ2. Պերանուն հնարուելուն եւ դերանուն գործածուելուն պատճառը ի՞նչ է:

Ձ3. Որո՞եք՝ թե ամեն անգամ ո՞վ է ես-ը, ո՞վ է դուն եւ ո՞վ է ան. ինչե՞ն գիտցար:

Երեք աղջիկ նստեր էին պարտէզը խորհուրդի. մեր Զապէլը, վերի յարկի Արաքսին և քովի փաստաբանին աղջիկը: Կարեւոր նամակ մը կար գրուելիք և քիչ մը դժուար գործ էր:

Մեր ճարպիկ Զապէլը խօսքը ուղղեց յանկարծ փաստաբանին աղջկանը.

— Ալ երկար խօսիլը աւելորդ է. ես հիմա կ'երթամ կը բերեմ թուղթն ու գրիչը. դուն կը թելադրես մէկ-երկու տող, ան ալ թող նստի գրէ, աղուոր գիր ունի:

— Ո՛չ.— բողոքեց փաստաբանին աղջիկը.— դուն գնա՛ր բե՛ր թուղթն ու գրիչը. ան կը թելադրէ, ես ալ կը գրեմ:

— Ինչո՞ւ.— հակառակեցաւ Արաքսին Զապէլի թէն քաշելով:— Դո՞ւն ինչու չես թելադրեր. ես կը բերեմ թուղթն ու գրիչը. ան ալ թող գրէ:



Բ. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ.

Ա. 1. Անձնական դերանունները միայն անձը ցոյց տալու բառերուն տեղը կը դրուին:

Երեք զոյգ են. առաջին դէմքը՝ ես և մեք. երկրորդ դէմքը՝ դու և դուք. երրորդ դէմքը՝ ինք և իրեք:

Կը հոլովուին հետեւեալ ձևով.

Նշ. Ուղ.	ես	դու	ինք, ինքը
Տր.	ինծի	քեզի, քեզ	իրեն
Բաց.	ինծմէ, ինծմէն	քեզմէ, քեզմէն	իրմէ, իրմէն
Գործ.	ինծմով	քեզմով	իրմով
Յոգ. Ուղ.	մենք	դուք	իրենք
Տր.	մեզի, մեզ	ձեզի, ձեզ	իրենց
Բաց.	մեզմէ, մեզմէն	ձեզմէ, ձեզմէն	իրենցմէ, իրենցմէն
Գործ.	մեզմով	ձեզմով	իրենցմով

2. Տեսակ մը անձնական դերանուն կ'ըստացուի նաեւ զիմորոշ յօդերու յաւելումովը ինք դերանունին վրայ.

ա. դէմք = ինք—ս ինք—ներ—ս կամ ինք—ներ—նիս

բ. դէմք = ինք—դ ինք—ներ—դ ինք—ներ—նիդ

գ. դէմք = ինք—ը ինք—ներ—ը ինք—ներ—նին

Եւ յաճախ իմաստը աւելի շեշտելու համար այս անձնականները կը գործածուին հիմնական ձևերուն հետ.

ես ինքս մենք ինքներս, կամ մենք ինքներնիս

դուն ինքդ դուք ինքներդ, դուք ինքներնիդ

ան ինքը անոնք ինքները, անոնք ինքներնի:

Բայց այս բոլոր կազմովի անձնականները կը գործածուին միայն ուղղական հոլով, իբրեւ ենթակայ:

3. Ինքը դերանունը միացած իր գրաբար հայցական ըստած ձևին հետ և նորէն զիմորոշ յօդերու օգնութեամբ կ'առաջացընէ աւելի բարդ տեսակի անձնական դերանուններ.

ինքըզինք—ս = ես ինծի ինքըզինք—նիս = մենք մեզի

ինքըզինք—դ = դուն քեզի ինքըզինք նիդ = դուք ձեզի

ինքըզինք—ը = ան իրեն ինքըզինք—նին = անոնք իրենց:

Եւ ասոնցմէ ամեն մէկը կը հոլովուի զիմորոշ յօդ ունեցող առանձններու սովորական հոլովումով.

ինքըզինքս—ինքըզինքիս—ինքըզինքէս—ինքըզինքովս.

ինքըզինքնիս—ինքըզինքնուս—ինքըզինքնուս (ռաց):

Պէտք է ուշ դնել սակայն, որ ասոնց ուղղականները իբրեւ են-

Թական գործածուիլ չեն կրնար. որովհետև իրենց լմաստին մէջ հոլովուած բառ մը ունին՝ ճես ինծիք, ճգուն քեզիք, որ կը խանգարէ բառին իբրեւ ենթական գործածուիլը. ենթական կրնան ըլլալ միայն մագուր ուղղական հոլովները:

Բ. Յուցական գերանունները փոխանակ անունը տալու, կարծես մատով ցոյց կու տան այն իրն ու անձը, որու մասին որ կը խօսուի:

1. Յուցական գերանունները հետեւեալներն են.

ա. դէմք = այս, սա, ասիկա, սա, սըւիկա.

բ. պէմք = այդ, ատ, ատիկա, դա, դըւիկա.

գ. դէմք = այն, ան, անիկա, — —

Ասոնցմէ առաջին շարքը՝ այս, այդ, այն՝ կը գործածուին ածականաբար, միշտ գոյականի մը առջեւէն: Գոյականաբար այսինքն անկախ ու առանձին կրնան գործածուիլ, երբ ամբողջ նախադասութեան մը տեղն են դրուած: Այս պարագային միշտ անհոլով կը մնան նոյնիսկ հոլով պահանջող կցորդներու հետ: Այս աչքի առաջ ունենալովք, ձևայ մասին իրմէ տեղեկութիւն խնդրեցիք, ճեացի այսք:

Երկրորդ շարքը՝ աս, աս, ան ձեւերը՝ գրական լեզուի մէջ կը գործածուին ընդհանրապէս գոյականաբար. բայց ժողովրդական կենդանի խօսքին մէջ կը բռնեն այս, այդ, այն ածականներուն տեղը, որ գրաբարէն եկած ձեւեր են ու ժողովուրդը չի գործածեր:

Սա և դա կը գործածուին ածականաբար, երբ կը շեշտենք և ետեւէն կու գայ բացատրական նախադասութիւն մը: Պէտք չէ մոռնալ սա՝ կէտը, որ... և: Սա ու դա գոյականաբար հաւասար են աս ու աս գերանուններուն, միայն աւելի ուժեղ շեշտ մը ունին իրենց վրայ:

Ասիկա, ասիկա, անիկա, ինչպէս և իրենց աւելի կրճատ ձեւերը՝ ասիկ, ասիկ, անիկ կամ ասի, ասի, անի, նոյնպէս և սըւիկա ու դըւիկա կը գործածուին միայն գոյականաբար: Նըւիկա երրորդ դէմքին միայն բացառականը կը պատահի՝ սըկէ-նըկէ ձեւին մէջ:

2. Յուցական գերանուններուն հոլովումը.

Ոգակի

Ուղ.	աս, ասիկա.	ատ, ատիկա.	ան, անիկա.	սա, սըւիկա.	դա, դըւիկա.
Տր.	ասոր	ատոր	անոր	սըւոր	դըւոր
Բաց.	ասկէ	ատկէ	անկէ	սըկէ	դըկէ
Գործ.	ասով	ատով	անով	սըւով	—

Յոգնակի

Ուղ.	ասոնք	ատոնք	անոնք	սըւոնք	դըւոնք
Տրա.	ասոնց	ատոնց	անոնց	սըւոնց	դըւոնց
Բաց.	ասոնցմէ	ատոնցմէ	անոնցմէ	սըւոնցմէ	դըւոնցմէ
Գործ.	ասոնցմով	ատոնցմով	անոնցմով	սըւոնցմով	դըւոնցմով

3. Յուզական ղերանուները մատնանիշ կ'ընեն ինչպէս իրերն ու երկույթները, այնպէս ալ անձերը, որոնց մասին որ կը խօսինք: Այս վերջին պարագային շատ կը մօտենան անձնական ղերանուներու երրորդ դէմքին, քանի որ ան ալ անձ մը կը փոխարինէ, որու մասին որ կը խօսուի: Եւ մասնաւորապէս ցուցական ղերանուներուն երրորդ դէմքը՝ ան, որու մատնանշելու կարողութիւնը շատ է տկար, համեմատած աս և աս առաջին երկու դէմքերուն. այդ պատճառով ալ ան և ինքը, անոնք և իրենք ղերանուները ընդհանրապէս իրար կը փոխարինեն:

Մանաւանդ երբ պարբերութեան մէջ միայն մէկ հատ երրորդ դէմքով անձ կայ, անոր տեղը անխտիր կերպով կրնանք դնել և՛ ան և՛ ինքը ղերանուները, ձեամակները իրեն յանձնեցի՞ր» = «Նամակները անոր յանձնեցի՞ր». «Շատոնց է իրմէն լուր չունիմ» = «Շատոնց է անկէ լուր չունիմ». «Իրմով լրացաւ մեր խումբը» = «Անով լրացաւ մեր խումբը». «Իրենք էին մեզի զգուշացընողը» = «Անոնք էին մեզի զգուշացընողը». «Հարցը իրենցմէ կախում չունի» = «Հարցը անոնցմէ կախում չունի». «Ինքը ըսաւ ինծի» = «Ան ըսաւ ինծի»:

Իսկ երբ պարբերութեան մէջ մէկէ աւելի երրորդ դէմքի անձեր կան՝ մեծ զգուշութեամբ միայն կարելի է ղերանուն գործածել, որ մտքի չփոթութիւն չառաջանայ: Եւ աչքի առաջ պէտք է ունենալ, որ այդ պարագային ինքը ղերանուին գործածութիւնը հիմնական նախադասութեան ենթակային կը վերաբերի, իսկ ան ղերանունին գործածութիւնը կը վերաբերի ոչ-ենթակային: Ավաճառականը նայեցաւ յաճախորդին և հասկըցաւ, որ չահը մնալու էր անոր և յոգնութիւնը՝ իրեն. և ըսաւ անոր պարգապէս, թէ ինքը այդ գործը ձեռնտու չէր գտներ իրեն համար. բայց ծառայութիւն մը մատուցած ըլլալու համար կրնար ընդունիլ անոր առաջարկը, եթէ ստացուելիք չահին դոնէ մէկ մասը մնար իրեն: «Կինը աղուոր մանչ մը ունէր և շատ հպարտ էր անով», «Կինը աղուոր մանչուկ մը ունէր և հպարտ էր իրմով», կինը հպարտ էր ի՛ր վրայ:

24. Ընդգծե՛ դերանունները արագգրութեանդ վրայ:

Պաշտօնակիրքս երկու շաբաթ է բացակայ է քաղաքէս. խոստացեր էր նամակ գրել ինծի. բայց մինչև հիմա ոչ-մէկ լուր չունիմ իրմէն: Ինքն ալ անշուշտ ինձմէ նամակի կ'ըստասէ:

Դուն երբ իրեն հանդիպելու ըլլաս ճամբուդ վրայ, շատ կը խնդրեմ քեզմէ. ըսես իրեն, որ իրմէն սպասած թղթերս յանձնէ քեզի. եթէ ինքը դեռ ուշանալու է. դուն կը բերես ինծի և կը յուսամ ներող կ'ըլլաս, որ այսպէս մեզմով կ'ըզբաղեցընեմ քեզի:

Դերձակեանները իրենք ներկայ չէին երէկ իրիկուն. տիկնոջ տը-
կար ըլլալը հիմա քեզմէ իմացայ. եթէ առաջընէ դուք մեզի
յայտնած ըլլայիք, մենք ալ չէինք երթար երէկ իրիկուն. կ'երթա-
յինք ուրիշ իրիկուն մը անոնք, դուք, մենք բոլորս միասին. ժամա-
նակը աւելի ուրախ կ'անցնէր մեզի համար:

26. Լրացուի հետեւեալ նախադասութիւնները յարմար անձնական
դերանունով մը եւ քովը փակագծի մեջ կը նշանակես ո՛ր դէմով ըլլա-
լը՝ (ա), (բ), (գ):

Ընկերս մօտեցաւ...: Փառաւոր ծեծ կերաւ...: Յաջողելու հա-
մար պէտք է վկայական մը բերես...: Այս տոմսակը յանձնէ՛, խնդ-
րեմ...: Մարդը շատ դժգոհ մնաց...: Բայց դժգոհութիւնը ծած-
կեց...: Բու մայրդ ալ կը հպարտանայ շարունակ...: ...քսան հո-
գի եղանք: Շատ բարեւ էր ըրեր...: Պէտք է շնորհակալութիւն
յայտնէիր...: Երկար առեն է լուր չունիմ...: Այս տեսակ վարմունք
չի սպասեր եղեր...:

28. Արագրէ՛ նախորդ հրահանգը անձնականի փոխարէն ցուցա-
կան դերանուն մը դնելով տեղը:

27. Գրէ՛ մեկ տղի մը վրայ երեք անձնական դերանուններուն ե-
զակի եւ յոգնակի տրականները. տակի տղին վրայ անոնց բացառական-
ները, երրորդ տղին վրայ անոնց գործիականները:

28. Նոյն ձեւով կը վարուիս երեք ցուցական դերանուններուն հետ:

29. Ընդգծուած բառերուն տեղը պիտի դնես ինքը կամ ան դերա-
նունը:

Դուն իբրեւ թէ փարիզ հանդիպեր ես հօրս, խնդրեր ես հօրմէս
երեք ամսըւան նոր յետաձգում պարտքիդ և տըւեր ես հօրս նոր
մուրհակ մը:

Մինասեանը փարիզ հանդիպեր է հօրս, խնդրեր է հօրմէս երեք
ամսըւան նոր պայմանաժամ և տըւեր է հօրս նոր մուրհակ մը:

Մինասեանը փարիզ հանդիպեր է հօրս. հայրս թէեւ պահանջեր է
դրամը Մինասեանէն, սակայն Մինասեանը շատ է խնդրեր և նոր
մուրհակ մըն է տըւեր հօրս երեք ամսէն վճարելի:

Հայրս փարիզ հանդիպեր է Մինասեանին, պահանջեր է դրամը
Մինասեանէն, սակայն Մինասեանը շատ է խնդրեր հօրմէս և հայրս
նորէն երեք ամիս ժամանակ է տըւեր Մինասեանին:

Ուր որ մեքի շփոթութիւն կ'առաջանայ՝ պէտք չի դերանուն գոր-
ծածես, պէտք է դնես անունը:

30. Ո՞վ են «անոնք» եւ ո՞վ են «իրենք». ինչո՞ւ:

Չօրքը անցաւ յարձակողականի բանի տեղ չդնելով թշնամիին
սպառնալիքը իրենց թիւը (=իրենք) թէեւ աւելի նըւազ էր անոնց
թիւէն, բայց իրենց որակը աւելի բարձր էր:

Զօրքը անցաւ յարձակողականի բանի տեղ չդնելով թշնամիին սպառնալիքը թէ և անոնց թիւը (=անոնք) աւելի նըւազ էր իրենց թիւէն, բայց որակով աւելի բարձր էին անոնք։

31. Ընդգծուած բառերուն տեղը դի՛ր ան կամ ինքը դերանունը. նշանակե՛ Երկուեմ ալ, եթէ կարելի է. եւ ետեւը փակագծի մէջ բացառե՛ք, բէ ինչո՞ւ։

Մարդը գալուէն պէս այս նամակը կը յանձնեն մարդուն։

Մարդը եկաւ թէ չէ՝ նամակը յանձնեցի մարդուն։

Մարդը՝ որ եկաւ, եղբայրս նամակը յանձնեց խկոյն մարդուն։

Ես ապրանքը ստացայ վաճառականէն, դուն ալ ստացար վաճառականէն. բայց այս տղան չէ ստացեր վաճառականէն, այլ անոր օգնականէն։

Պատիկը կը խաղար շան հետ. կը վազէր դէպի եունը, կը մօտենար եանը և նորէն կը փախչէր եունէն, մինչև որ պզտիկն ալ, եունն ալ յոգնեցան և եունը թողնց ու հեռացաւ ջղայեմ։

32. «Ինգիմֆը» ծանր դերանունը փոխարինէ սլարգ անձնական դերանունով կամ «ֆու անձը» անունով։

Կը տեսնեմ, որ դուն շատ կը սիրես ինքըզինքդ, ինքըզինքդ զատ բանի մը մասին չես հոգար. շարունակ զբաղուած ես ինքըզինքովդ։ Աղուոր բան չէ մարդուս համար միշտ ինքըզինքով զբաղւած ըլլալը, ինքըզինքէն զատ բանի մը կարեւորութիւն չտալը։ Ասոր կ'ըսեն եսականութիւն, որ մեծ թերի մըն է ընկերական կեանքի մէջ։

Ես ալ դժբաղդարար ընաւ չեմ հաւնիր ինքըզինքիս ու միշտ դժգոհ եմ ինքըզինքէս ու չեմ ախորժիր ուրիշները ինքըզինքովս ըզբաղցընել։ Դիտե՛մ, ասիկա ալ աղուոր բան չէ. ինքըզինքն ու իր կարողութիւնները գնահատող և ինքըզինքէն գոհ եղող մարդիկը աւելի վճռական կ'ըլլան և աւելի բաղդաւոր։

Գ. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Ու. 1. Ստացական դերանունները որեւէ բանի մը ո՞ր դէմքին պատկանիլը ցոյց կու տան՝ խօսողի՞ն. որուն որ կը խօսուի՞, թէ որո՞ւ մասին որ կը խօսուի. և վեց հատ են.

Եղակի

ա. դէմք=իմ կամ իմին
բ. դէմք=սու կամ քուկին
գ. դէմք=իր կամ իրեն

Յոգնակի

մեր կամ մերին
ձեր կամ ձերին
իրենց։

Ստացական դերանունները, երբ ուրիշ անունի մը առջեւն են դրած, այսինքն երբ ածականաբար են առնուած, իրենք կը մնան միշտ անփոփոխ: Իսկ իր վրան ստացական բանեցող անունը անպատճառ յօդ կ'առնէ. եզակի ստացականներուն հետ՝ դիմորոշ յօդ, յոգնակի ստացականներուն հետ՝ որոշիչ յօդ. այսպէս՝

իմ գիրքս, իմ գրքերս. մեր գիրքը, մեր գրքերը
քու գիրքդ, քու գրքերդ. ձեր գիրքը, ձեր գրքերը
իր գիրքը, իր գրքերը. իրենց գիրքը, իրենց գրքերը:

2. Ստացական դերանունները միշտ կարելի է գեղջել, եթէ նախադասութեան, այսինքն խօսքին իմաստի չեղտը իր վրայ չէ. վերջին պարագային գեղջել չենք կրնար. «Ամենէն գեղեցիկը քու նկարդ էր». «Եկուր աշխատինք ի՛մ սեղանիս վրայ»:

Եթէ գեղջուածը եզակի ստացական մըն է, իր գոյականը ոչ-մէկ փոփոխութիւն չի կրեր. եթէ գեղջուածը յոգնակի ստացական մըն է, իր գոյականի որոշիչ յօդը կը փոխարինուի համապատասխան դիմորոշ յօդով. այսպէս՝

Եզ.	իմ	պարտէզս	=	պարտէզս
	քու	պարտէզդ		պարտէզդ
	իր	պարտէզը		պարտէզը
	իմ	պարտէզներս		պարտէզներս
	քու	պարտէզներդ		պարտէզներդ
	իր	պարտէզները		պարտէզները

Յոգ.	մեր	պարտէզը	=	պարտէզ-նիս
	ձեր	պարտէզը		պարտէզ-նիդ
	իրենց	պարտէզը		պարտէզ-նին
	մեր	պարտէզները		պարտէզ-ներ-նիս
	ձեր	պարտէզները		պարտէզ-ներ-նիդ
	իրենց	պարտէզները		պարտէզ-ներ-նին

Միավանկ անուններուն առջեւը լաւագոյն է միշտ յոգնակի ստացական դերանունը պահել, քանի որ կրճատման ժամանակ դիմորոշ յօդերով մնալիք եզակին ու յոգնակին իրարու կը նոյնանան ու կը չըփոթուին.

մեր գիւղը և մեր գիւղերը = գիւղ-եր-նիս
ձեր գիրքը և ձեր գրքերը = գրք-եր-նիդ
իրենց տունը և իրենց տները = տն-եր-նին:

Բ. Ստացական դերանունները առաջացած են աւձնական դերանուններէն: Գրաբարը, ինչպէս որ յատուկ հայցական հոլով մը ունի սեռի խնդիրը որոշելու համար, այնպէս ալ առանձին սեռական կոչ-

ուող հոլով մը ունի գերանուներուն մէջ, յատկապէս պատկանելու-
թիւնը ցոյց տալու համար, գերանուներուն տրական հոլովին թողնե-
լով միայն ուղղութիւնը ցոյց տալը: Անձնական գերանուներուն այդ
գրաբար սեռական հոլովներն են, որ եղիւր են մեր արդի ստացական
գերանուները:

Այնպէս որ իր ստացականը ինքն գերանուէն է առաջացած. և
այդ պատճառով ալ, ինչպէս որ ինքն ու ան գերանուները իմաստով
իրարու շատ են մօտիկ և յաճախ իրարու տեղ կը գործածուին, այդ-
պէս ալ պատկանելութիւնը ցոյց տալու համար իր և անոր (ան գե-
րանուի տրականը) շատ անգամ իրար կը փոխարինեն, այդպէս ալ
իրեանց և անոնց. հետեւեալ կանոնով որ կը համապատասխանէ ինքր և
ան գերանուներու ընդհանուր գործակցութեան կանոնին:

1. Եթէ նախադասութեան ենթական առաջին կամ երկրորդ դէմ-
քով է, իր գերանունը պատկանելով երրորդ դէմքին, չի կրնար վե-
րաբերիլ ենթականին, որով իր և անոր հաւասար արժէք կ'ըստանան.
«Մենք զնեցինք իր տունը» = «մենք գնեցինք անոր տունը» «Դուք իր
հայրը պիտի ճանչնաք» = «դուք անոր հայրը պիտի ճանչնաք». «Ես ալ
իր կարծիքէն եմ» եւ ալ անոր կարծիքէն եմ». «Հանէ՛ քլիսարկդ ի՛ր
դարակէն» = «հանէ՛ քլիսարկդ անոր դարակէն»:

2. Եթէ նախադասութեան ենթական առաջին կամ երկրորդ դէմ-
քով է, բայց ունի հետը երկու հատ երրորդ դէմքի տարբեր պատկա-
նելութիւններ ցոյց տըւող անուններ, մէկուն տեղը կը գործածենք իր,
իսկ միւսին՝ անոր. «Եղբայրս փոքրիկ մը ունի, փոքրիկն ալ ընկե-
րուհի մը. երէկ ես պտոյտի տարի անոր փոքրիկը իր ընկերոջը
հետ». կամ՝ «Ես պտոյտի տարի իր փոքրիկը անոր ընկերոջը հետ»:
«Դուն ո՛չ իր (օրինակ՝ ընկերոջս) հայրն ես տեսեր, ո՛չ ալ անոր (այ-
սինքն հօրը) աշխատանքը» = «Դուն ոչ անոր հայրն ես տեսեր, ոչ ալ
իր (այսինքն հօրը) աշխատանքը»:

3. Իսկ եթէ նախադասութեան ենթական երրորդ դէմքով է, բո-
լոր իր-երը կը վերաբերին ենթականին. ուրիշ երրորդի մը վերաբե-
րիւր ցոյց տալու համար կ'ըսենք՝ անոր. «Մարդը իր սննեակը տա-
րաւ անոր փաստարանը». «Մարդը անոր սննեակը տարաւ իր փաստա-
րանը». «Կալուածատէրը յայտնեց իրենց գործակատարին անոնց հա-
մաձայնութիւնը». «Կալուածատէրը յայտնեց անոնց գործակատարին
իրենց համաձայնութիւնը»:

Գ. Ստացական գերանուները գործածուիլ կրնան նաեւ գոյակա-
նաբար, երբ նախորդ խօսքի ընթացքը թոյլ կու տայ, որ իր քովի
գոյականը զեղչենք. այդ պարագային իր վրայ կ'առնէ գոյականին
գիմորոյ յօդը ու կ'ըստացուի.

ա. զէմք = իմ-ս կամ իմ-ին-ս, մեր ք կամ մեր-ինք-ը
 բ. զէմք = քու-կ-դ կամ քու-կ-ին-դ, ձեր-ը կամ ձեր-ինք-ը
 գ. զէմք = իր-ը կամ իր-եք-ը, իրեց-ը կամ իրեց-ինք-ը

ՆԱԿԱԿԱՆ ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

	ա. զէմք	բ. զէմք	գ. զէմք
Նշ.	Ուղ. իմ-ին-ս, իմ-ս	քու-կ-ին-դ, քու-կ-դ	իր-եք-ը, իր-ը
Տրա.	իմ-ին-իս, իմ-իս	քու-կ-ին-իդ	իր-եք-ին
Բաց.	իմ-ին-ես, իմ-ես	քու-կ-ին եդ	իր-եք-եք
Գործ.	իմ-ին-ովս, իմ-ովս	քու-կ-ին-ովդ	իր-եք-ովը
Յոգ.	Ուղ. իմ-ին-ներ-ս	քու-կ-ին-ներ-դ	իր-եք-ներ-ը
Տրա.	իմ-ին-ներ-ուս	քու-կ-ին-ներ-ուդ	իր-եք-ներ-ուք
Բաց.	իմ-ին-ներ-ես	քու-կ-ին-ներ-եդ	իր-եք-ներ-եք
Գործ.	իմ-ին-ներ-ովս	քու-կ-ին-ներ-ովդ	իր-եք-ներ-ովը

Իմ, մեր և ձեր ստացականները իրենց յոգնակիներուն համար ունին և երկրորդ ձեւ մը՝ իմոց, մերոց, ձերոց, փոխանակ իմին-նորս, մերինները, ձերինները ըսելու, որոնք կը հղովուին հետեւեալ ձեւով.

իմոնք, իմոնց, (իմոցմէ), (իմոցմով)
 մերոնք, մերոնց, մերոցմէ, մերոցմով,
 ձերոնք, ձերոնց, ձերոցմէ, ձերոցմով

ՅՈՒՆԱԿԱՆ ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

	ա. զէմք	բ. զէմք	գ. զէմք
Նշ.	Ուղ. մեր-ին ք, մեր-ք	ձեր-ին ք, ձեր-ք	իրեց-ինք-ը, իրեց-ը
Տրա.	մեր-ին-ին	ձեր-ին-ին	իրեց-ին-ին
Բաց.	մեր-ին-եք	ձեր-ին-եք	իրեց-ին եք
Գործ.	մեր-ին-ովը	ձեր-ին-ովը	իրեց-ին-ովը
Յոգ.	Ուղ. մեր-ին-ներ-ք	ձեր-ին-ներ-ք	իրեց-ին-ներ-ը
Տրա.	մեր-ին-ներ-ուք	ձեր-ին-ներ-ուք	իրեց-ին-ներ-ուք
Բաց.	մեր-ին-ներ-եք	ձեր-ին-ներ-եք	իրեց-ին-ներ-եք
Գործ.	մեր-ին-ներ-ովը	ձեր-ին-ներ-ովը	իրեց-ին-ներ-ովը

ինչպէս ամեն բառի տրական հոլովը իր քովի պատկանեալի գեղջումովը կ'առաջացընէ գոյականաբար յօդաւոր հոլովում մը, նոյնը կը պատահի նաև ստացական դերանուններու տրական հոլովներուն հետ.

իմ-ին-իս	կափարիչը =	իմ-ին-ին-ը
քուկ-ին-իդ	»	քուկ-ին-ին-ը
իր-են-ին	»	իր-են-ին-ը
մեր-ին-ին	»	մեր-ին-ին-ը
ձեր-ին-ին	»	ձեր-ին-ին-ը
իրենց-ին-ին	»	իրենց-ին-ին-ը
իմ-ին-ներ-ուս	կափարիչը =	իմ-ին-ներ-ուն-ը
քուկ-ին-ներ-ուդ	»	քուկ-ին-ներ-ուն-ը
իր-են-ներ-ուս	»	իր-են-ներ-ուն-ը
մեր-ին-ներ-ուն	»	մեր-ին-ներ-ուն-ը
ձեր-ին-ներ-ուն	»	ձեր-ին-ներ-ուն-ը
իրենց-ին-ներուն	»	իրենց-ին-ներ-ուն-ը

Եւ ասոնցմէ ամեն մէկը լրիւ կերպով կը հոլովուի առաջացընելով շատ աւելի բարդ ձևեր. քուկ-ին-ներ-ուն-ներ-ովը, մեր-ին ներ-ուն-էն, ձեր-ին-ներ-ուն-ներ-էն, և այլն:

33. Ստացական դերանուններուն բովեց զեղջուած անունները վերականգնէ:

Ո՞ւր են տեսարակները. իմինս տո՛ւր ինծի. Ձեր այգին մերինէն շատ հեռու է: Մեր ընկերները քուկիներէդ աւելի ճարպիկ են: Ես իմ գնդակովս կը խաղամ, ան ալ թող խաղայ իրենովը: Ձեր տնեցիք դեռ գիւղն են, մերոնք այսօր արդէն քաղաք իջան: Ձերոնք ամեն բանի մէջ արագ են և յայտնի է մերոնց դանդաղկոտութիւնը: Չսիրեցի ձեր լեռները. ո՞ւրկէ կրնան համեմատուիլ մերիններուն:

34. Վերականգնէ՛ զեղջուած ստացական դերանունը:

Որոշումս յայտնէ ժողովիդ և պատասխանիդ վաղը կը հաղորդէք քարտաշարիս: Նամակիդ հետեւեալ տողերը մասնաւոր ուշադրութիւնս գրաւեցին: Դիտցէ՛ք, գրաւելու են տներնիդ, եթէ իսկոյն չըլլայցընէք վճարումնիդ: Վճարումնի՞ս թէ վճարումներնիս:

Իրիկունը եկո՛ւր պարտէզնին. շատ հեռու է թաղերնիս: Ի՞նչ գին կ'ուզես պատկերնուդ համար: Շատ գոհ կ'երեւան դպրոցնուն: Քիչ-քիչ ամենքն ալ հեռացան տեղերնուն: Շլացուցին մեզի խոշոր-խոշոր խօսքերովնին: Աս ի՞նչ է. ամեն կողմ զէնք է կախուած պատերնուդ: Կը դառնայի գիւղերնուս, երբ հանդիպեցայ կառքերնուդ:

35. Զեղջի՛ ստացական դերանունին կապուած անունը առանց իմաստի յստակութիւնը պիտո՛ւնելու:

Իմ գրածս ալ գէշ է, թէեւ քու գրածդ աւելի յաջող է անշուշտ: Մեր դուռները միշտ բաց են, ձեր դռներուն պէս չեն: Կարկուտը մեծ լիսաւ տըւաւ մեր նոր տուններուն, բայց կը յուսամ ձեր ծառերը ազատուած ըլլան: Մեր աչքերը յառած էին անոր, իսկ ան կրակ կը թափէր իր աչքերէն: Ձեր տղաքը ցրուեցան, մնացին միայն մեր տղաքը, թէեւ կարծեմ ձեր աշակերտներէն ալ մէկ-երկուքը խառնըւած էին մեր տղաքներուն:

36. Զեղջի՛ ստացական դերանունը,

Իմ գիրքս: Քու խօսքդ: Քանի մը հոգի բերաւ իր հետը, իմ տետրակներս: Քու արտագրութիւններդ: Կեցեր էր անասունը իր ձագուկներուն քովիկը: Ո՛ւր է մեր գիրքը: Կորսուեր են մեր գրքերը: Ես ալ չեմ գտներ մեր տետրակները: Միթէ կորսուեր են նաեւ ձեր տետրակները: Ձեր յոյսը չարդարացաւ: Չիրականացաւ և ո՛չ-մէկը մեր սպասումներէն: Մերերը կը քալեն յենած իրենց գաւազանին, պատանիները կը քալեն կրթնած իրենց վստահութեան:

37. Կազմի՛ երկուրդ դեմքի եզակի ու յոգնակի ստացական դերանուններուն լրիւ հոլովական տախտակը իրարու կից:

38. Իրարմով փոխանակի՛ իր ու անոր ստացականները, առանց խօսքին իմաստ փոխելու:

Ես յայտնեցի գործարանի տիրոջը, որ կը գնեմ իր ամբողջ պատարաստ մթերքը:

Անոնց ամարանոցը դուռն պիտի վարձեաւ եղեր, իրա՞ն է: Ես վարձեր եմ արդէն, բայց ոչ թէ անոնց ամարանոցը, այլ անոնց դիմացի ամարանոցը: Գրիգորեանները պիտի վարձեն անոնց ամարանոցը:

Պայուսակը յանձնեցի անոր ընկերոջը, որ տանի անոնց տունը:

Մեր պզտիկ վաճառականը իր գնդիկները տըւեր է ընկերոջը և անոր նկարները սեփականներ է իրեն: Հիմա ինչքան ալ կը պահանջէ իր ընկերը, որ ետ տայ անոր գնդիկները և ստանայ իր նկարները, օգուտ չը՛նէր:

39. Գրի՛ ամեն մեկուն դէմը իր հաւասարը, երբ գեղջըւած է դերանունը:

Իմ ձեռքս==

մեր ձեռքը==

Իմ ձեռքիս==

մեր ձեռքին==

Իմ ձեռքէս==

մեր ձեռքէն==

Իմ ձեռքովս==

մեր ձեռքովը==

իմ ձեռքերս==	մեր ձեռքերը==
իմ ձեռքերուս==	մեր ձեռքերուն==
իմ ձեռքերէս==	մեր ձեռքերէն
իմ ձեռքերովս==	մեր ձեռքերովը==

40. Գրե՛ նախորդ հրահանգին ամեն մէկուն դէմը իր հաւատարմ երբ զեղջուած է անունը :



Դ. ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Բաղդատական զերանուենները չափը, ձեւը, քանակը կը ցուցնեն, բայց ո՛չ որոշ չափի մը կամ որոշ առարկայի մը հետ համեմատելով, այլ անորոշ համեմատութեամբ մը կարծես ցոյց տալով համեմատութեան առարկան. որ կ'ենթադրուի կա՛մ խօսողին աւելի մօտիկ կա՛մ որուն որ կը խօսուի, կա՛մ որուն մասին որ կը խօսուի :

Բաղդատական դերանուններն են .

ա . դէմք==այսչափ. այսքան. այսպիսի. այսպէս. ասանկ. սոյն.

բ . դէմք==այդչափ. այդքան. այդպիսի. այդպէս. ատանկ. — —

գ . դէմք==այնչափ. այնքան. այնպիսի. այնպէս. անանկ. նանկ. նոյն.

Միադէմ==նոյնչափ. նոյնքան. նոյնպիսի. նոյնպէս.

որչափ. որքան. որպիսի. որպէս

— ինչքան. ինչպիսի. ինչպէս.

1. Ասոնցմէ սույն ու նոյն կը գործածուին միայն իբրեւ ածական :

2. Պիսի վերջադրոյները եզակի ձեւով կ'ըլլան միայն իբրեւ ածական, բայց յօգնակիները կ'առնուին գոյականաբար և բոլոր հոլովներով. այսպիսիները, այսպիսիներուն, այսպիսիներէն, այսպիսիներով :

3. Պես և անկ վերջադրոյները եզակիի մէջ կը գործածուին միայն ուղղական ու գործիական հոլովներով. ասանկով, ատանկով, այսպէսով, այդպէսով. Յոգնակիի մէջ ամեն հոլով ալ ունին. ասանկները, ատանկներուն, ատանկներէն, այսպէսները, այսպէսներուն, այսպէսներով եւ այլն :

4. Չափ ու քան վերջով կազմուածները սովորական անուններու պէս եզակի ու յօգնակի բոլոր հոլովներով ալ կը գործածուին, երբ գոյականաբար առնուած ըլլան :

Բ. Տեղական դերանուշները մատնանիշ կ'ընեն տեղը, առանց որոշ կերպով տեղին անունը տալու, միեւնոյն ժամանակ կը հասկըցնեն խօսողի՞ն է աւելի մօտիկ, թէ՞ որուն որ կը խօսուի կամ որուն մասին որ կը խօսուի:

Տեղական դերանուշներն են.

ա. դէմք=հոս, հոստեղ, հուսա, այստեղ, այսկողմ, ասդին.
բ. դէմք=հոտ, հոտտեղ, հուտա, այդտեղ, այդկողմ, —
գ. դէմք=հոն, հոնտեղ, հունա, այնտեղ, այնկողմ, անդին.

Ասոնք բոլորն ալ կը գործածուին միայն իբրեւ գոյական:

1. Հոս, հոս, հոն միայն ուղղական և բացառական ունին և միայն եղակի, իրենց տրականն ու գործիականը, ինչպէս և ամբողջ յոգնակին կը լրացնեն հոստեղ կամ այստեղ բառերէն փոխառաբար: Բացառականը կ'ըլլայ հոս-կէ, հոս-կէ, հոն-կէ:

2. Տեղ կամ կողմ գոյական անուններու օգնութեամբ կազմուած տեղական դերանուշները կը հոլովուին կանոնաւոր կերպով: Եւ առանց յոգնակին երկու ձեւով կրնայ ըլլալ՝ եւ կամ ներ մասնիկներով, նայելով թէ իբրեւ մէկ երկվանկ բառ մը կը նկատուի, թէ անջատ երկու միավանկ բառեր: Տեղ գոյականով կազմուածները ունին նաև շեղումաւոր երրորդ յոգնակի մը:

հոստեղ-ները	=հոս-տեղ-երը	=հոստեղ-ուանքը
հոտտեղ-ները	հոտ-տեղ-երը	հոտտեղ-ուանքը
հոնտեղ-ները	հոն-տեղ-երը	հոնտեղ-ուանքը
այստեղ-ները	այս-տեղ-երը	այստեղ-ուանքը
այդտեղ-ները	այդ-տեղ-երը	այդտեղ-ուանքը
այնտեղ-ները	այն-տեղ-երը	այնտեղ-ուանքը
այսկողմ-ները	այս-կողմ-երը	
այդկողմ-ները	այդ-կողմ-երը	
այնկողմ-ները	այն-կողմ-երը	

3. Ասդին ու անդին եղակի բոլոր հոլումներով ալ կը գործածուին ասդին, ասդիին, ասդիէն, ասդիով:

4. Հուսա, հուտա, հունա ժողովրդական ձեւերը միայն եկակի ուղղական ունին:

41. Արտագրէ՝ րնդգծելով բաղդասական դերանունները մեկ գիծով, տեղական դերանունները երկու գիծով:

Սըւոր նայեցէ՛ք, ինչպէս հագուեր է, այդ ինչքա՛ն զարդաբանք. կարծես միեւնոյն մարդը չըլլայ, այսչափ ալ փոխուի:

Այսպիսի յարմարութիւն միշտ չի ճարուիր, պէտք է օգտուիլ անոր հոս գտնուելէն և քանի չէ մեկնած հոսկէ, պէտք է կարգադրել այդ հարցը:

Սանկով-նանկով երկու տարի եղաւ անոնց գալը և հոսանդունքը ընակութիւն հաստատելը: Իրենց տունը նոյնքան հեռու է քաղաքին կեդրոնէն, որքան և ձերինը, միայն անոնց տունը գետի ասդիկ կողմին վրան է, մինչ ձեր պարտէզը կը գտնուի շիտակ գետի անդիկ ասիին:

Այսչափը առայժմ հերիք է: Այդպիսի գործերու վրայ ասկէ աւելին ծախսելը ներելի չէ մերինի նման քսակներուն:

Հոստելի մեր ծանօթները ասդիկն-անդիկն հաւաքուած մարդիկ են. իսկ ինչպիսի զգուշ ընտրութիւն է հարկաւոր այսպիսի ձեռնարկներու ժամանակ:

Ատանկ բաներու մասին շատ խօսիլը աւելորդ է: Ատկէ դատ ասանկ պարապ խօսքերուն այդպէս կարեւորութիւն պէտք չէ տալ: Հոսկէ-հոսկէ լսուած բաներ են:

Դուն ինծի ան ըսէ՝ աստեղուանքը, սա՛նկ, աղուոր խանութ մը կրնա՞նք գտնել հոնրային պարտէզէն այս կողմ. կամ թող ըլլայ պարտէզէն անդին, վնաս չունի:

42. Առանձին արագրէ՛ ցախուդ հրահանգէն:

1. Բաղդատական դերանունները և ըսէ՛ ինչո՞ւ են բաղդատական.

2. Տեղական դերանունները

3. Ստացական դերանունները

4. Յուցական դերանունները

5. Անձնական դերանունները:

43. Դի՛ր յարմար տեղական կամ բաղդատական դերանուն մը կէ-տերուն տեղը:

... անձրեւ դեռ չէի տեսեր: — Հանդէսը... անցաւ: — ... խօսքերը գլուխս չեն մտնիր: — ... բաղմութիւն էր հաւաքուեր... — Ես... կը բաւականանամ: — Եւ... գոհ կը մնան ամենքը: — Սատղան... նման է իր հօրը: — ... իրիկուն եղաւ: — ... մինչեւ ձեր գիւղը քանի՞ մղոն է ... — ... հեռու է, ... մեր գիւղէն մինչեւ քաղաքը: — ... ալ մարդ կ'ըլլայ. ... խօսեցաւ, ամենքը ձանձրացան: — ... գնա՛ և մի՛ սրտնեղեր ինծի: — ... ցել է, քիչիկ մը ... անցի՛ր: — ... հրամայեցէ՛ք: -- .. ուշ-ուշ կ'երեւաք...

44. Ուր՞եք են առաջին դէմքի բաղդատական ու տեղական դերանունները. գրէ՛ երկու առանձին թղերու վրայ:

Ըրէ՛ ցոյցը երկուոր ու երեւոր դէմքերուն համար:



ԵՐՐՈՐԴ ԽԱՏՈՒԱԾ

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Խոնարհման ընդհանուր կանոններէն որեւէ շեղում ունեցող բայերը հայերէնի մէջ չստ չեն, հազիւ կը հասնին չորս տասնեակի:

Բացի պակասաւոր բայերէն, որոնք ընդամենը երկու ժամանակ միայն ունին, միւս բոլոր շեղումները գրեթէ բացառաբար կը վերաբերին կատարեալին ու բուն հրամանին. երբեմն նաեւ անաւարտ կամ անաւարտ դերբայներուն:

Բոլոր շեղումները կրնանք խմբել չորս տեսակի՝

- 1) Մասնակի շեղումներ.
- 2) Ուժեղ խոնարհում.
- 3) Երկբուն խոնարհում.
- 4) Պակասաւոր բայեր:

Ա. ՄԱՍՆԱԿԻ ՇԵՂՈՒՄՆԵՐ

ա. Ինկած ու փոխուած ձայները երեւան կու գան կատարեալի, հրամայականի, անաւարտ ու անաւարտ դերբայներուն մէջ.

1. Դառնալ — դարձայ, դարձար, դարձաւ. դարձի՛ր, դարձէ՛ք, դարձած, դարձող:

2. Իյնալ — ինկայ, ինկար, ինկաւ. ինկի՛ր, ինկէ՛ք. ինկած, (իյնող):

բ. Կատարեալը երբեմն և բուն հրամանը, ուրիշ լծորդի կը հետեւին.

3. Սկսիլ — սկսայ, սկսար, սկսաւ. կամ սկսեցի, սկսեցիր, սկսեց.

4. Փրթիլ — փրթայ, փրթար, փրթաւ. փրթի՛ր, փրթէ՛ք:

5. Նսթիլ — նստայ, նստար, նստաւ. կամ նստեցայ, նստեցար, նստեցաւ:

6. Ծնիլ — ծնայ, ծնար, ծնաւ. ծնի՛ր, ծնէ՛ք:

7. Ելիլ — ելայ, ելար, ելաւ. ելի՛ր, ել՛. ելէ՛ք, ելած, (ելլող):

դ. Ինքնայատուկ խառն ձև մը ունին կատարեալի ու հրամայականի մէջ հետեւեալ ուղ-եւ վերջաւորութիւնը ունեցող քանի մը բա-

յերը, որոնք կու գան գրարարի ուց-անել ձեւէն, լծորդի յօդին ու յօդակապին կրճատումովը. դեռ չատերը գրարարի ձեւով ալ կը գործածեն՝ մատուցանել, հատուցանել, ղեկուցանել, ապացուցանել:

8. Զեկուցել — ղեկուցի, ղեկուցիր, ղեկուցեց. ղեկուցի՛ր, ղեկուցէ՛ք:
9. Ապացուցել — ապացուցի, ապացուցիր, ապացուցեց. ապացուցի՛ր, ապացուցէ՛ք:
10. Հառուցել — հատուցի, հատուցիր, հատուցեց. հատուցի՛ր, հատուցէ՛ք:
11. Մատուցել — մատուցի, մատուցիր, մատուցեց. մատուցի՛ր, մատուցէ՛ք:
12. Հարցընել — հարցուցի, հարցուցիր, հարցուց, հարցո՛ւր, հարցուցէ՛ք. հարցուցած. (հարցընող):

Բ. ՈՒՎԵՂ, ԽՈՆՍ.Ր ՀՈՒՄ

ա. Հետեւեալ բայերը կատարեալի մէջ կ'ըստանան ի, իր, Աի, ինք, իք, ին գիմակերտները. իսկ հրամայականի եզակին կ'ըլլայ բային մերկ բռնը:

13. Բերել — բերի, բերիր, բերաւ. բե՛ր, բերէ՛ք:
14. Առնել — առի, առիր, առաւ. ա՛ռ, առէ՛ք:
15. Պագնել — պագի, պագիր, պագաւ. պա՛գ, պագէ՛ք:
16. Խածնել — խածի, խածիր, խածաւ. խա՛ծ, խածէ՛ք:
17. Թողնել — թողի, թողիր, թողաւ. կամ թողեցի, թողեցիր, թողեց. թո՛ղ, թողէ՛ք:

18. Տեսնել — հրամայականը՝ տե՛ս:

բ. Հետեւեալ բայերը ունին նոյն ուժեղ խոնարհումը, այլիւ գոլրս կը բերեն կատարեալի, բուն հրամանի, աւարտ դերբայի, երբեմն նաեւ անաւարտ դերբային մէջ իրենց կորսնցուցած մէկ ձայնը:

19. Բանալ — բացի, բացիր, բացաւ. բա՛ց, բացէ՛ք. բացած, բացող:
20. Թեցնել — թուքի, թուքիր, թուքաւ. թո՛ւք, թուքէ՛ք (թքէ՛ք):
21. Լալ — լացի, լացիր, լացաւ. լա՛ց, լացէ՛ք. լացած, լացող:
22. Տանիլ — տարի, տարիր, տարաւ. տա՛ր, տարէ՛ք. տարած, (տանող):
23. Դնել — դրի, դրիր, դրաւ. դի՛ր, դրէ՛ք. դրած, (դնող):
24. Ձարնել — զարկի, զարկիր, զարկաւ. զա՛րկ, զարկէ՛ք. զարկած, (զարնող):

25. Տալ — տըւի, տըւիր, տըւաւ. տո'ւր, տըւէ՛ք, տըւած, տըւող:
գ. Երկու բայերու կատարեալը նոյն ուժեղ խոնարհումը ունի,
բայց հրամայականին մէջ չի հետեւիր նախորդներուն:

26. Ըսել — ըսի, ըսիր, ըսաւ. (ըսէ՛), ըսէ՛ք:

27. Ընել — ըրի, ըրիր, ըրաւ. ըրէ՛, ըրէ՛ք, ըրած, (ընող):

Դ. ԵՐԿՐՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Չորս բայ կայ, որոնք միայն մտադիր ու անաւարտ ժամանակ-
ներ ունին և անորոշ դերբայ. իսկ իրենց աւարտ ժամանակները, բուն
հրամայելը, ինչպէս և անաւարտ ու աւարտ դերբայները կը լրացընեն
ուրիշ բունէ մը կազմըւած բայով մը, որը փոխադարձաբար ղուրկ է
մտադիր ու անաւարտ ժամանակներէ և անորոշ դերբայէ: Կերել,
եղել, գմացել ու ելիել բայեր գոյութիւն չունին:

28. Կալ — եկայ, եկար, եկաւ. եկ՛, եկո'ւր, եկէ՛ք. եկած, եկող:

29. Երբալ — գնացի, գնացիր, գնաց, գնա՛, գնացէ՛ք. գնացած,
գնացող: Կը գործածուի նաև ն-ի կրճատումով՝
գացի, գացիր. գացէ՛ք, գացած ու դացող:

30. Ըլլալ — եղայ, եղար, եղաւ. եղի՛ր, եղէ՛ք. եղած, եղող:

31. Ուսել — կերայ, կերար, կերաւ. կեր՛, կերէ՛ք. կերած,
(ուտող):

Դ. ՊԱԿԱՍՍԱԽՈՐ ԲԱՅԵՐ

Պակասաւոր կ'ըսենք հետեւեալ չորս բայերուն, որոնք միայն ներ-
կայ ունին և անկառաւ և ուրիշ ոչինչ, ո՛չ իսկ անորոշ դերբայ:

32. Եմ, ես, է. ենք, էք, են.

էի, էիր, էր, էինք, էիք, էին:

(Ըլլալ բային հետ ո՛չ մէկ կապ չունի):

33. Կամ, կաս, կայ. կանք, կաք, կան.

կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային:

34. Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին.

ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիք, ունէին:

(Պէտք է չփոթել ունենալ բային հետ, որ իր լրիւ ու կա-
նոնաւոր խոնարհումը ունի):

35. Գիտեմ, գիտես, գիտէ, գիտենք, գիտէք, գիտեն.

գիտէի, գիտէիր, գիտէր, գիտէինք, գիտէիք, գիտէին:

(Պէտք է չփոթել գիտնալ բային հետ, որ իր լրիւ
ու կանոնաւոր խոնարհումը ունի):

Ե. ԿԸ-Ի ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

Իբրեւ խոնարհման շնորհիւ կրնանք նկատել նաեւ կը յաւելուկի հետեւեալ շնորհումները ընդհանուր գործածութենէն:

1. Դալ, ցալ, լալ միավանկ բայերուն առջեւ կը-ի փոխարէն կ'ըսենք՝ կու:

2. Եմ, կամ, ունիմ, գիտեմ պակասաւոր բայերը միշտ կը գործածուին մերկ, առանց կը յաւելուկի:

3. Կրնալ բայը, որ կանոնաւոր ու լրիւ խոնարհում ունի, կը յաւելուկը չառնէր մտադիր ու անաւարտ ժամանակներուն մէջ:

Կրնամ, կրնաս, կրնայ. կրնայի, կրնայիր, կրնար:

4. Կարծել կանոնաւոր բայը ընդհանրապէս կը կ'առնէ: Կարծեմ, կարծես, կարծեմ մակբայօրէն գործածուող ձեւերուն մէջ յաւելուկը կը նեւէ:

45. Ընդգծե՛ք շեղում ունեցող բայերը:

Ե՛լ, բարեկա՛մ, ուչ է. նայէ՛ մութն ինկաւ: — Մարդը չուկայէն նոր դարձաւ, բարձեց իր էջը ու ճամբայ ինկաւ դէպի գիւղ:

Նստաւ ծառին տակը ու սկսաւ մտածել: — Եւ վախէն սիրտը փրթաւ: — Թելը մանեցի մինչեւ հատաւ: — Բրիստոս ո՞ր թռչին ծնաւ: — Ելայ, ներկայացայ իրեն ու յարգանքս մատուցի: — Հաշուեքննիչը իր եզրակացութիւնը համառօտ ղեկուցեց ժողովին: — Պարտքդ հատուցի՞ր վերջապէս: — Խնդիրը տղան շատ լաւ լուծեց, բայց շատ գէշ ապացուցեց:

46. Ամեն Տողի սկիզբը առանձին գրե՛ք վերը ընդգծած ամեն մեկ բառդ ու բացատրե՛ք դեմք՝ ինչի՞ մէջն է իր շեղումը եւ դի՛ր փակագծի մէջ՝ ինչպե՞ս պէտք է ըլլար, կանոնաւոր բայ ըլլալու համար:

47. Դառնալ բայի հիմքէն կազմուած ժամանակներուն մէջ ձ հրմնչիւնը ի՞նչպէս է սուսջացեր:

48. Սբ սկսայ, սկսար, սկսաւ ըսելու Տեղ, ըսեմք սկսեցի, սկսեցիր, սկսեց, կանոնաւոր ձեւ կ'ըլլայ, քե՞ն հորէն շեղումնաւոր. ինչո՞ւ:

49. Սբ փրթայ, փրթար, փրթաւ ըսելու Տեղ, ըսեմք՝ փրթեցայ, փրթեցար, փրթեցաւ, կանոնաւոր ձեւ կ'ըլլայ, քե՞ն հորէն շեղումնաւոր. ինչո՞ւ:

50. Փրթի՛ր ու փրթէ՛ք հրամայականներ կանոնաւոր են, քե՞ն շեղումնաւոր:

51. Կազմե՛ք նախադասութիւններ ուժեղ խոնարհման պատկանող բայերուն կատարելներ գործածելով ու խուսափե՛ք միւս շեղումնաւոր բայերէն:

52. Դարձո՛ւր այդ նախադասութիւնները հրամայականի:

53. Շեկ հրամաններուն դէմը դի'ր բուն հրամանը:

Պիտի բերե'ս. կ'առնե'ս. կը պագնե'ս. խածնե'ս պիտի. կը թող-
նե'ս. կը բանա'ս. պիտի տանի'ս. կը զարնե'ս. կու տա'ս:

54. Ուժեղ խոնարհման կատարեալը ի՞նչ հիմնական տարբերութիւն-
ներ ունի անյօդ յծուգներու խոնարհումէն. եւ ի՞նչ հիմնական տարբե-
րութիւն ունի յօղաւոր յծուգներու խոնարհումէն:

55. Բերել բայի հրամայականը ինչպե՞ս պէտք է ըլլար, երբ շեղում
չունենար:

56. Առնել, պագնել, խածնել, թողնել, տեսնել, թքնել ու զար-
նել բայերուն եզակի հրամայականները ինչպե՞ս պէտք է ըլլային, երբ
կանոնաւոր բայեր ըլլային:

57. Ըսէ՛ ու ըրէ՛, ըսէ՛ք ու ըրէ՛ք հրամայականները կանոնաւոր
են, քե՞տ շեղումնաւոր:

58. Բանալ ու լալ բայերը ի՞նչ ընդհանուր առանձնայատկութիւն
մը ունին:

Տանիլ ու զնել բայերը ի՞նչ ընդհանուր նմանութիւն մը ունին հիմ-
քէն կազմուած ժամանակներու խոնարհման տեսն:

Տալ ու թքնել բայերը ի՞նչ նման յատկութիւն մը ունին իրենց խո-
նարհման նկատմամբ:

59. Հետեւեալ կտորներէն առանձին կը խմբես մասնաւոր շեղում
ունեցող բայերը. ուժեղ խոնարհում ունեցող ձեւերը առանձին. նոյն-
պէս եւ երկարմասներն ու պակասաւորները:

Ա՛ռ կաւիճը, գնա՛ տախտակին, բա՛ց խնդրին բոլոր փակագիծ-
ները և ապացուցի՛ր, որ գումարը շիտակ է:

Փոքրիկը կամաց մը գուռը բացաւ, ներս բերաւ իր խաղալիք-
ները, դրաւ գետին, ինքն ալ գնաց, առաւ աթոռը, հրեց պատուհա-
նին քովը, ելաւ վրան և սկսաւ դուրս նայիլ:

Տղա՛ս, կարձեմ գուռը զարկին, տե՛ս ով է: — Հարցուցի, թէ ով
ըսաւ իրեն, պատասխան տըւաւ, թէ՛ ո՛չ-ոք:

Ինչո՞ւ թողիր, որ զարնէ քրոջդ. և ինչո՞ւ զարկաւ. ատկեւ վար-
մո՞ւնք եղաւ: Ուրիշ անգամ, երբ պէտք չկայ, միշտ մէջ կ'իյնաս:
Ինչդ աղջիկը, չրթունքները խածաւ ու անձայն լացաւ: Թէեւ ճիշդ
է, որ զարնողն ալ ետքը փառաւոր ապստակ մը կերաւ:

60. Դի'ր հետեւեալ բայերուն դէմը իրենց աւարտ ու անաւարտ դե-
բայները, միեւ գծիկներով իրենց բաղադրիչ մասերուն բաժնա՞ծ:

Առնել, բանալ, գալ, դառնալ, գնել, ելլել, երթալ, զարնել, ըլ-
լալ, ընել, թողնել, թքնել, իյնալ, լալ, ուտել, տալ, տանիլ:

61. Գրե՛ իրաւո՞ւ տակ ու իրաւո՞ւ զուգահեռ հետեւեալ չորս բայե-
րուն կատարեալները բոլոր դեմքերով:

Մատուցանել. հարցընել. բանալ. դառնալ:

62. Ո՞ր բայերն են. որոնց յունր հիմքն կազմուած ժամանակներուն մէջ ձայնական փոփոխութեան կ'ենթարկուի. եւ ի՞նչ փոփոխութեան:

63. Ո՞ր բայերն են, որոնք անաւարտ ժամանակներուն մէջ որեւէ եղում մը ունին:

64. Կատարելալը քանի՞ տեսակի եղում ունի:

65. Բուն հրամայականը քանի՞ տեսակի եղում ունի:

66. Գերբայները ի՞նչ եղումներ ունին եւ ո՞ր բայերու մէջ:

67. Ո՞ր բայերն են, որ միայն անաւարտ ժամանակներ ունին: Ո՞ր բայերն են, որ անաւարտ ժամանակներ չունին: Անաւարտ ժամանակներ չունեցող բայերը. ուրիշ ո՞ր ժամանակները չունին:

68. Ի՞նչ կը կարծես, ինչպէ՞ս եղած պիտի ըլլայ *գալ, տալ, լալ* միավանկ բայերուն նախնական լինիւ ձեւը: Ինչպէ՞ս են առաջացեր այդ կրնաս ձեւերը: Եւ ինչե՞ն գիտես, որ ասոնք կրնաս ձեւեր են:

69. Ամենեւն աւելի անկարգը կատարելի մէջ ո՞ր դիմադրեմ է: Իսկ հրամայականի մէջ, երկու դերբայներէն ո՞րն է աւելի անկարգ:

70. Ո՞ր բայերն են. որոնք չեն ենթարկուիր բայերու յօդաւոր քան յօդ ըլլալը որոշող մեր ընդհանուր օրէնքին: Ո՞րն է այդ օրէնքը:

71. Որոնք են պակասաւոր բայերուն յատուկ եղող ընդհանուր առանձնայատկութիւնները:

72. Ինչի՞ մէջ կը կայանայ ուժեղ խոնարհումը:



Չորրորդ հասնում

ԲԱՅԱՍԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ա. Մինչև հիմա մեր տեսած ամեն տեսակի բայերը անթտիր բոլորն ալ եղած կամ ըլլալիք բանի մը մասին կը խօսին, բոլորն ալ բան մը կը հաստատեն, բանի մը ըլլալը կամ բան մը ընելը կ'արտայայտեն. բայց այդ բոլոր բայերն ալ առանց բացառութեան ունին իրենց հակառակ իմաստը արտայայտող համապատասխան բայեր, որոնք բանի մը չըլլալը կամ բան մը չընելը կ'արտայայտեն, որոնք բան մը կը ժխտեն, կը բացասեն, և ո՛չ թէ կը հաստատեն: Բան մը հաստատող բայերը կ'անուանենք դրական բայեր, բան մը ժխտող, բանի մը չըլլալն ու չընելը բացատրող բայերը կ'անուանենք բացասական բայեր: Այսպէս՝ զարմանալ, խմել, առնել, ստանալ, քնանալ, խնդալ, իյնալ՝ դրական բայեր են. անոնց համապատասխան բացասական բայերն են՝ չզարմանալ, չխմել, չառնել, չըստանալ, չքնանալ, չխնդալ, չիյնալ:

Դրական բայը բացասական բայի վերածող հիմնական նշանը չհնչիւնն է: Այդ չ հնչիւնը երեք տեսակի գրութիւն ունի:

1. Եթէ բառը, որուն վրայ որ չ հնչիւնը պիտի աւելնայ, ձայնաւորով կ'ըսկսի՝ չ հնչիւնը պարզապէս կը կցուի այդ ձայնաւորին և՛ հնչումով և՛ գրութեամբ. առաւ՝ չառաւ, ինկաւ՝ չինկաւ, երթամ՝ չերթամ:

2. Եթէ բառը բաղաձայնով կ'ըսկսի չ բաղաձայնը հայերէնի ընդհանուր օրէնքով կը կարգացուի չը, թէեւ այդ արտասանողը ը սո վորարար չենք գրեր: Կը գրենք տողադարձի ատեն, վանկելու ատեն: Չի գրուողը ը-ով սկսող բառերուն ը-ը լաւ է, որ գրուի: Այսպէս՝ չխօսեցաւ, չբերինք, չգիտեմ, բայց չը-խօսեցաւ, չը-բերինք, չը-գիտեմ. այլ և՛ չըսկսաւ, չըզգացի, չըստացանք:

3. Բաղաձայնի առջեւ եղած ժամանակ շատ անգամ կը հնչուի չի և կը գրուի չի. միայն այս պարագային կը դրուի առանձին, առանց կցուելու բուն բառին. այսպէս, օրինակ, չի յանձնեցի, չի պիտի գամ, պատասխան չի տրուաւ:

Բացասական բայերուն խոնարհումը կ'անուանենք բացասական

խոնարհում, որ ունի դրական խոնարհման բոլոր համապատասխան եղանակներն ու ժամանակները, իրենց բոլոր ենթաձևերով, որոնք կը կազմըւին հետեւեալ ձեւով:

Բ. Դրական խոնարհման բոլոր մերկ ենթաձևերը, այսինքն այն ենթաձևերը, որոնք իրենց վրայ ո'չ յաւելուկ ունին, ո'չ ալ օժանդակ բայ՝ բացասական դառնալու համար չ հնչիւնը պարզապէս կ'առնեն իրենց վրայ: Ուրեմն.

Ապառնի ստորադասական՝	գրեմ — չգրեմ
Վաղապառնի ստորադասական՝	գրէի — չգրէի
Կատարեալ՝	գրեցի — չգրեցի
Անաւարտ դերբայ՝	գրող — չգրող
Աւարտ դերբայ՝	գրած — չգրած
Անորոշ դերբայ՝	գրել — չգրել

Գ. Դրական խոնարհման ատեն յաւելուկաւոր ժամանակներէն պիտի յաւելուկով կազմըւած ձևերուն մէջ բացասական չ հնչիւնը կրնայ դրուիլ և՛ բային և՛ յաւելուկին վրայ. բացասումը պիտի-ին վրայ կրնայ դրուիլ միայն, երբ նախադաս է պիտի՜ն. և այդ պարագային կ'ըսուի ու կը գրուի չի և բառին շեշտն ալ կ'առնէ իր վրայ: Ուրեմն՝

Հարկադրական ապառնի՝	պիտի չսիրեմ կամ չսիրեմ պիտի չի՛ պիտի սիրեմ
Հարկադրական վաղապառնի՝	պիտի չսիրէի կամ չսիրէի պիտի չի՛ պիտի սիրէի
Շեղ հրաման	պիտի չսիրե՛ս կամ չսիրե՛ս պիտի չի՛ պիտի սիրես:

Թող յաւելուկով կազմըւող ժամանակներուն մէջ բացասականի չ հնչիւնը միայն բային վրայ կրնայ դրուիլ, և թողը սովորաբար նախադաս: Ուրեմն՝

Թոյլադրական ապառնի՝	թող չսիրեմ կամ չսիրեմ թող
Մեղադրական ապառնի՝	թող չսիրէի կամ չսիրէի թող

Դ. Դրական խոնարհման ատեն կը յաւելուկով կազմըւող ժամանակները բոլորովին ինքնուրոյն կազմութիւն մը ունին բացասական խոնարհման ժամանակ: Բայի անորոշ դերբայի չ հնչիւնը կը դառնայ ր և վրան կ'աւելնայ բացասական էական բայը միշտ նախադաս:

Միայն երրորդ դէմքը կ'ըսուի չի (և ոչ թէ չի): Ուրեմն՝

Սահմանական ապառնի և Ներկայ

կը սիրեմ	չեմ սիրեր
կը սիրես	չես սիրեր
կը սիրէ	չի սիրեր

կը սիրենք	չենք սիրեր
կը սիրէք	չէք սիրեր
կը սիրեն	չեն սիրեր

Այս չի՛ երրորդ դէմքը, որ բացասական էական բայի սղուած ձևն է, վրան միշտ չեշտ ունի, Բաղաձայնով սկսուող բայերուն առջև կրնայ աւելի ևս սղուել ու դառնալ չի՛, միշտ չեշտը պահելով ու իր անջատ գրութիւնը, իսկ ձայնաւորով սկսուող բայերուն առջև կրնայ նորէն սղուել և իբրև պարզ չ միանալ բային, միայն իր չեշտը կու տայ քովի ձայնաւորին: Այսպէս՝

չեմ խաղար, չես խաղար, չի՛ խաղար կամ չը՛ խաղար.
չեմ ուտեր, չես ուտեր, չի՛ ուտեր կամ չո՛ւտեր:

Սահմանական վաղապառնի ու Ոճկատար

կը սիրէի	չէի սիրեր
կը սիրէիր	չէիր սիրեր
կը սիրէր	չէր սիրեր
կը սիրէինք	չէինք սիրեր
կը սիրէիք	չէիք սիրեր
կը սիրէին	չէին սիրեր

Շեղ հրամանի մէկ ենթաձևը սահմանական ապառնիչն:

չե՛ս սիրեր, չէ՛ք սիրեր:

Ծ. Դրական խոնարհման այն ժամանակները, որոնք կը կազմուէին դերբայներու և օժանդակ բայերու միացումովը, չ հնչիւնը կ'ըստանան իրենց օժանդակին վրայ. և այդ օժանդակ բացասական պակասուոր բայերը կրնան դրուել բուն բայի ետեւէն ալ, առջեւէն ալ:

Ուրեմն՝

Դերբայական ապառնի՝	սիրելու չե՛մ, չե՛մ սիրելու
Դերբայական վաղապառնի՝	սիրելու չէ՛ի, չէ՛ի սիրելու
Յարակատար	չեմ սիրեր, չեմ սիրած, սիրած չեմ. սիրած չկամ, սիրած չունիմ
Վաղակատար	չէի սիրեր, չէի սիրած, սիրած չէի սիրած չունէի, սիրած չկայի:

Զ. Բացասական բուն հրամանը, որ կը կոչուի նաև արգելական, փոխանակ չ հնչիւնի կ'ըստանայ իր առջեւէն մի՛. իսկ բայը ինքը եզակիի մէջ անորոշ դերբայի լին տեղը կ'ունենայ ր մը, իսկ յոգնակիի մէջ լին տեղը ք մը: Եւ յոգնակիի մէջ ե լծորդը ք ի առաջ կը դառնայ ք, բայերու գրութեան ընդհանուր ձևը պահելու համար:

Ուրեմն՝

Հրամայական՝ խաղա՛, խաղացէ՛ք. վազէ՛, վազեցէ՛ք. փախի՛ր,
փախէ՛ք.

Արգելական՝ մի՛ խաղար, մի՛ խաղաք. մի՛ վազեր, մի՛ վազէք,
մի՛ փախչիր, մի՛ փախչիք:

Է. Բացասական բայերն ալ ունին մէկ երկու չեղումներ:

1. Պակասաւոր օժանդակ բայերու ներկան ու անկատարը կը չու-
նենալնուն պատճառով բացասական կը դառնան չ-ի պարզ յաւելու-
մով, որ համաձայն է ընդհանուր օրէնքին: Չեմ, չկամ, չունիմ:

Բայց նոյն օրէնքէն կը չեղին գիտեմ և կրնամ բայերը, որոնք
բացասական խոնարհման տառն այնպէս կը կազմուին կարծես թէ
դրականի մէջ կը ունենային:

Այսպէս կրնալ բայի սահմանական ենթաձեւերը, ուրեմն և ներ-
կան ու անկատարը կ'ըլլան՝

կրնամ	չեմ	կրնար	.	կրնայի	չէի	կրնար
կրնաս	չես	կրնար	.	կրնայիր	չէիր	կրնար
կրնայ	չի	կրնար	.	կրնար	չէր	կրնար
կրնանք	չենք	կրնար	.	կրնայինք	չէինք	կրնար
կրնաք	չէք	կրնար	.	կրնայիք	չէիք	կրնար
կրնան	չեն	կրնար	.	կրնային	չէին	կրնար

Իսկ գիտեմ պակասաւոր բայի ներկան ու անկատարը երկու ձևով
ալ կը գործածուին.

գիտեմ	չգիտեմ	չեմ գիտեր
գիտես	չգիտես	չես գիտեր
գիտէ	չգիտէ	չի՛ գիտեր կամ չը՛ գիտեր
գիտէի	չգիտէի	չէի գիտեր
գիտէիր	չգիտէիր	չէիր գիտեր
գիտէր	չգիտէր	չէր գիտեր

Ուշագրութեան պէտք է առնել ներկայի ու անկատարի եզակի
երրորդ դէմքերը. արտասանութեան ժամանակ միայն չեշտով կը
տարբերին իրարմէ. «հիմա անիկա ոչինչ չը՛ գիտեր», «ան երէկ ո-
չինչ չգիտէ՛ր»:

2. Գալ, լալ, տալ միալնակ բայերը, որոնք կու կ'ըստանան ի-
րենց դրական խոնարհման տառն, բացասական խոնարհման մէջ
ալ աւելորդ ի մը կ'ըստանան ժողովրդական արտայայտութեան մէջ:

չեմ տար	չեմ ի տար	•	չէի տար	չէի ի տար
չես տար	չես ի տար	•	չէիր տար	չէիր ի տար
չի տար	չի տար	•	չէր տար	չէր ի տար
չենք տար	չենք ի տար	•	չէինք տար	չէինք ի տար
չէք տար	չէք ի տար	•	չէիք տար	չէիք ի տար
չեն տար	չեն ի տար	•	չէին տար	չէին ի տար

3. Մի՛ արգելականը ձայնաւորներու առջև և մանաւանդ ի ձայնաւորի առջև կրնայ դառնալ մ'. իր շնչտը փոխանցելով իրեն կցուող ձայնաւորին: Օրինակ՝

մի՛ տոներ = մի՛ ա՛ռներ, մի՛ երթար = մի՛ երթա՛ր,
մի՛ իյնար = մի՛ յնար, մի՛ իմանար = մի՛ մանար,
մի՛ ուզեր = մի՛ ո՛ւզեր, մի՛ օրեր = մի՛ օ՛րեր:

23. Դի՛ր դեմը իր բացասականը.

իսպալ. ուտել. ըսել. կանչել. երթալ. նետուիլ. իյնալ. կախել. ուզել. մեռցնել. երեւակայել. գալ. յուզել. յուզուիլ. չափել. չարանալ. չորնալ. ճանկել. աղաչել. աւարտել. աւետել:

24. Գրե՛ նոյն բայերուն դրական ու բացասական աւարտ ու անաւարտ դերբայները:

25. Հետեւեալ նախադասութիւններուն մէջ պատահող մերկ բայական ձեւերը դարձո՛ւր բացասականի:

Երէկ իրիկուն ժամանակին տուն եկաւ, հարցուց ըստ սովորուածի օրուան գործերէն և չուտով ալ գնաց պառկելու:

Արդեօք անգամ մը հանդըպի՞մ եղբորդ: Հարցընե՞մ սակարանը:

Գետինը մտնե՛ս, աղա՛յ, ա՛յ քու տունդ քանդուի. ինչո՞ւ խորհուրդ տըւիր ինձի այդ յիմարութիւնը:

Աղէկ է. որ ինքդ անձամբ խօսիս: Կարելի՞ է իր վրայ յոյս դնել:

Իր կամքովը յօժարի՛ աղէ՛կ. թէ չէ՛ ստիպե՞մ: Հասկըցնե՞նք, որ մեզի միանայ:

26. Հետեւեալ յաւելուկաւոր բայական ձեւերը դարձո՛ւր բացասականի:

Դասերս իրիկունը պիտի պատրաստեմ. եղբայրս պիտի գայ, միասին պիտի աշխատինք:

Շատ պիտի ցաւէի, եթէ այս ճիգերս իզուր անցնէին:

Հապա պիտի մեկնէիր այսօր, ի՞նչ եղաւ: Այսօր իսկ պիտի երթա՛ս և պիտի յանձնե՛ս բոլոր հաշիւները:

Այդպէս է հրամանը՝ պիտի դիմադրենք. և դուն պէտք է, որ խօսիս. պիտի խօսի՛ս:

Մեր սուրհանդակը թող երթայ. իսկ անոնք իրենց մարդը թող հասցընեն ետեւէն, եթէ կրնան:

Հիմա թող խոշոր-խոշոր փրթեն. հետեւանքը վերջապէս պիտի հասկըցուի:

ԴԴ. Հետեւեալ դերբայական ժամանակները վերածէ՛ բացասականի:

Ամենքս ալ մեր կեանքին մէջ տեսիւ ենք շատ բան, և լսած ենք պէտք եղածին չափ:

Այս մարդուն կարծեմ հանդիպած եմ: Իսկ ներեցէ՛ք. չեմ յիշեր, տեսնուա՞ծ ենք:

Հագուստներս փոխեր էի ու սեղան էինք նստեր, որ զուռը զարկին:

Տասերկու տարեկանը լրացուցած էր, երբ արհեստի մտաւ:

Տեսնելու էիր բոլոր այդ խայտառակութիւնը ու խորապէս զըզուելու էիր:

Մարդս ինքը վառիկիւռ է իր աշխատանքին պտուղը, եթէ կ'ուզենք, որ սիրով աշխատի:

Ըսաւ որ ինքը ժողովին խօսելու է: Նամակդ այսօր զրկելու՞ ես:

ԴԵ. Հետեւեալ բացասական ձեւերուն դեմը դիր իր դրականը: Ժամանակը, քիւն ու դեմքը անփոփոխ պահելով եւ քովը փակագծի մեջ նշանակէ ժամանակին սմունքը:

Զի պիտի խօսէիք. թող չըսէր. ներս չեկողները. չընդունողներէն մէկը. չըսածդ չմտաց. չեկաւ. չառինք. չգիտցաւ. ըսելու չէիր. չեմ տալու. եթէ չէիր գալու՝ ինչո՞ւ չըսիր. չհասածները չփրցընե՛ս. տեսած չեմ. չէի հանդիպած. չի յաջողեցանք. տեսած չունիմ. եթէ վստահ չըլլայինք՝ չէինք հեռագրեր. չեն գացեր կայարան. չեն դիմաւորեր. դիտմամբ չեն ըրեր. պարզապէս չե՛ն գիտցեր. գիտցած չե՞ն. ո՛չ, չեն հաւատացեր. չի լսելուն համար. չգործածուելէն մտնէր է:

ԴԶ. Հետեւեալ կը ունեցուի ձեւերը դարձո՛ւր բացասականի:

Շատ կը խօսիս: Բաւական սիրուն կը նկարէ: Իսկ մարդը գլուխը կախ՝ ճամբան կը շարունակէր: Բան մըն ալ կը մնայ ինծի: Հաշուակալը կը հայհոյէր, կ'անիծէր, իրաւունք ունէր բարկանալու: Նստեր էինք ու կը խօսէինք: Աղէ՛կ, նամակիս մէջ կը բացատրեմ իրեն այդ բոլորը: Հիմա կ'երթաս իր գրասենեակը. կ'օգնես ու կ'աւարտէք. կը հասկընա՞ս ի՞նչ կ'ըսեմ: Կը դժուարանայ այդ դարձը յանձն առնելու: Կու գա՞ս այսօր մեզի:

80. Դի՛ր դիմացը արգելականները.

ա) Զա՛րկ. խա՛ծ. բե՛ր. թո՛ւք. կե՛ր. տա՛ր. տո՛ւր. դարձո՛ւր. հարցո՛ւր. կեցո՛ւր.

Հիւսէ՛. լսէ՛. աշխատէ՛. ըսէ՛. լռէ՛. խօսէ՛. դարձի՛ր. մօտեցի՛ր. կեցի՛ր. բարկացի՛ր. մտի՛ր. իջի՛ր. փախի՛ր. թռի՛ր.

բ) Փոխէ՛ք. կերէ՛ք. հասէ՛ք. տըւէ՛ք. մօտեցէ՛ք. դիտեցէ՛ք. ներեցէ՛ք. դիպցէ՛ք. մեծցէ՛ք. դրեցէ՛ք. ծեծկուեցէ՛ք. նկարուեցէ՛ք.

81. Դի՛ր դիմը ո՛ր ժամանակը ըլլալը.

Չէր կարդար. չէի կարդացեր. չեմ կարդար. չեմ կարդացեր. Չես տեսեր. չես տեսնիր. Չես կերեր. չես ուտեր. Չենք երեւակայեր. չենք երեւակայած. Չի սիրեր. չէ սիրեր. Չի վազեր. չէ վազեր. Չի փախչիր. չէ փախեր. Չի թռչիր. չէ թռեր. թռած չէ. թռած չունիմ. Չի խօսիր. չէ խօսեր. Չեն ի դար. չեն եկեր. չէ տըւեր. չի՛ տար. Չը՛ խաղար. չո՛ւտեր. չառնե՞ս. չէ. չպատմեցի. Չառի. չառնէ՞ի. չէի առեր. չէի առներ. Չբերե՛ս. չէի՛ր բերեր. թող չբերէի՛ր. չէի՛ր բերած.

82. Դի՛ր դիմ դիմաց հեռեւեալ բայերուն բացասական ներկան ու բացասական յարակատարը օակն ալ բացասական անկատարն ու բացասական վաղակատար.

Վաղել. իջնել. խօսիլ. հասնիլ. թռչիլ. կարդալ. մոռնալ. մօտենալ.

83. Բացասական բայերուն սահմանական ապառնին ինչո՞ւ կը նմանի յարակատարին եւ ինչո՞ւ կը տարբերի անկէ.

84. Ո՞ր լծորդը ունեցող բայերուն մեջ սահմանական վաղապառնին ու վաղակատարը բացասական խոնարհման ասե՛ն բոլորովին կը նոյնացան իրարու.

85. Ի՞նչ ժամանակ են հեռեւեալ ձեւերը.

Չեմ գիտեր. չգիտեմ. չէի գիտեր. չգիտէի.

չեմ կրնար. չկրնամ. չէի կրնար. չկրնայի.

Դասը չը՛ գիտեր և դասը չգիտէ՛ր.

չի՛ բերեր և չի բերէ՛ր. չը՛ լսեր և չլսէ՛ր.

չա՛ռներ և չառնէ՛ր. չը՛նեք և չընէ՛ր.

Չեմ ի տար. չեն ի տար. չէր ի տար. չի տար.

մի՛յնար. մո՛ռուեր. մե՛րթար. մա՛ռներ.

Մօտդիւր եղանակ

1. Աղառնի

Ստորադասական

Սահմանական

Հարկադրական

Թայլադրական

Դերբայական

չկարդամ

չեմ կարդար

պիտի չկարդամ

թող չկարդամ

չեմ կարդալու

2. Վաղապառնի

Ստորադասական

Սահմանական

Հարկադրական

Մեղադրական

Դերբայական

չկարդայի

չէի կարդար

պիտի չկարդացի

թող չկարդայի

չէի կարդալու

Անուարս եղանակ

3. Ներկայ

Բայական

Դերբայական

չեմ կարդար

կարդալու վրայ չեմ

4. Անկատար

Բայական

Դերբայական

չէի կարդար

կարդալու վրայ չէի

Աւարս եղանակ

5. Կատարեալ

չկարդացի

6. Յարակատար

Յատուկ

Վիճակ

չեմ կարդացեր

չեմ կարդացած

7. Վաղակատար

Յատուկ

Վիճակ

չէի կարդացեր

չէի կարդացած

կարդացած չունէի, չկայի

Հրամայական եղանակ

8. Բուի հրաման

մի՛ կարդար, մի՛ կարդաք

9. Շեղ հրաման

չե՛ս կարդար, չկարդա՛ս

չի՛ պիտի կարդաս

Դերբայներ

Անուարս

Աւարս

Անորոշ

չկարդացող

չկարդացած

չկարդալ

Հիմնական հասկացում

Մ Ի Ջ Ն Ա Դ Ի Ր Բ Ա Յ Ե Ր

Ա. ԱՆՑՈՂԱԿԵՐՊ

Մինչև հիմա մենք խօսած ենք միայն պարզ բայերու մասին. այսինքն բայեր, որոնց անորոշ դերբայը բաղկացած է միայն երկու մասէ՝ բային բունը և վերջաւորութիւնը:

Սակայն կան նաև բայեր, որոնց բունին ու վերջաւորութեան մէջ մտած է յաւելեալ հնչիւն մը և որ կը մնայ անփոփոխ խոնարհման միջոցին:

Եւ այդ պատճառով ալ այդ ներքին յաւելումը ունեցող բայերը կ'անուանենք միջնադիր բայեր:

Ա. Միջնադիր կազմ ունեցող բայերուն տալիս տեսակը կը կազմուի ց հնչիւնի ներմուծումովը ճիշդաւոր լծորդին վերջաւորութեան մէջ. որով իրենց անորոշ դերբայը կ'ըստանայ ց-ճել ձևը, որ կը հնչուի ցընել և կարելի է միշտ այդպէս ալ գրել. վազ+ց-նել, մեծ+ց-նել, հագ+ց-նել, հաս+ց-նել:

Այս ց հնչիւնի միջնադիր յաւելումով դոյացած բայերը կը կոչուին անցողակեայ բայեր, որովհետեւ այդ կազմը ունին գլխաւորապէս անցողական կոչուող բայերը. որոնք գործողութիւնը կը կատարեն միշտ ուրիշի մը ձեռքով, ուրիշի մը միջնորդութեամբ. ո՛չ թէ բան մը կ'ընեն, այլ բան մը ընել կու տան:

Անցողակեայ բայերը կը կազմուին պարզ բայերէն հետեւեալ օրէնքով.

1. Յօդաւոր լծորդ ունեցող պարզ բայերուն համար ց և ճել վերջաւորութիւնը կ'աւելնայ ուղղակի բայի բունին վրայ: Գող+նալ ու գող+ց-նել, հաս+նիլ ու հաս+ց-նել, մտ+նիլ ու մտ+ց-նել, փախ+չիլ ու փախ+ց-նիլ:

Եթէ պարզ բայի վերջաւորութիւնը յօդակապ ունի՝ յօդակապ կ'աւելնայ նաև անցողակեային վերջաւորութիւնը: իյնիթ+ենալ ու խնիթ+ենել, հիւանդ+աւանալ ու հիւանդ+աւց-նել, մեղմ+աւանալ ու մեղմ+աւց-նել, մօտ+ենալ ու մօտ+ենել:

2. Անյօդ լծորդով պարզ բայերուն համար g և վերջաւորութիւն կը դրուին լծորդին վրայ, և ի լծորդը կը փոխուի ե-ի: Դող+ալ ու դող+ա-ց-նել, հաղ+ալ ու հաղ+ա-ց-նել, քալ+ել ու քալ+ե-ց-նել, մաշ+ել ու մաշ+ե-ց-նել, խօս+իլ ու խօս+ե-ց-նել, սահ+իլ ու սահ+ե-ց-նել:

Լծորդին ձայնաւորը քանի մը բառերու մէջ կարելի է նաև կըր-ճատել. այնպէս որ g -նել ձեւը ուղղակի կը միանայ նորէն բռնին: Այսպէս, օրինակ.

վազ+ել	վազ+ե+ց-նել	վազ+ց-նել
խաղ+ալ	խաղ+ա+ց-նել	խաղ+ց-նել
հալ+իլ	հալ+ե+ց-նել	հալ+ց-նել
աշխատ+իլ	աշխատ+ե+ց-նել	աշխատ+ց-նել

Բ. Անցողակերպ բայերը ունին իրենց առանձնայատուկ կատար-եալը, հրամանը և աւարտ դերբայը, որոնք կը կազմուին ու ձայնաւորի միջամտումով g -ի հոսելէն. հետեւեալ կերպով.

Կատարեալ՝	հատ+ց-ուցի,	հատ+ց ուցիր,	հատ+ց-ուց
	հատ+ց-ուցինք,	հատ+ց-ուցիք,	հատ+ց-ուցին.
Հրաման՝	հատ+ց-ո՛ւր,	հատ+ց ուցէ՛ք.	
Դերբայ՝	հատ+ց-ուց-ած,	(հատ+ց-ն-ող):	

Կենդանի լեզուն ջանք կ'ընէ այս կրկնակի g -երէն ազատուելու, առաջին g -ի կրճատումով. երկու ձևերն ալ կը զործածուին.

Կատարեալ՝	վեր+ց-ուցի,	վեր+ց-ուցիր,	վեր+ց-ուց
	վեր+ուցի,	վեր+ուցիր,	վեր+ուց
Հրաման՝	վեր+ց-ո՛ւր,	վեր+ց-ուցէ՛ք	
	վեր+ո՛ւ,	վեր+ուցէ՛ք	
Դերբայ՝	վեր+ց-ուց-ած,	(վեր+ց-ն-ող)	
	վեր+ուց-ած,	(վեր+ց-ն-ող):	

Այս կրճատումը ամեն անցողակերպի հետ չի յարմարիր, գլխաւորապէս ականջի՝ հնչական պատճառներով: Մասնաւորապէս չի յարմարիր հետեւեալ երկու քերականական պարագաներուն.

1. Երբ անցողակերպը յօդակապ ունի ժառանգած պարզ բայէն. քաղկ+ա+ց-ուցի, մօտ+ե+ց-ուցիր, հասկ+ը+ց-ուցինք (=հասկ+ա+ց-ուցինք):

2. Երբ ի լծորդն է ե դարձած. խօս+ե+ց-ուցի, պառկ+ե+ց-ուցիր. պառկ+ը+ց-ուցինք (=պառկ+ե+ց-ուցինք):

96. Հետեւեալ անցալակերպ բայերուն դէմը դիւր իրենց պարզ բայերը.

Վախցընել. հայեցընել. գիրցընել. կռուեցընել. հաշտեցընել. կուրացընել. հասկըցընել. երեւցընել. կարմրցընել. սեւցընել. մեծցընել. պզտիկցընել. պոռաղցընել. վաղցընել. պայթեցընել. գլտորցընել. խորացընել. բարձրացընել. իջեցընել. թռցընել. փակցընել.

97. Դի'ր պարզ բայերուն հոլք իրենց անցողակերպը.

Անցնիլ. ցաւիլ. հաջիլ. մոռնալ. կարգալ. սորվիլ. մտնել. փախլիլ. փլչիլ. կարծիլ. զոգալ. հասնիլ. յոգնիլ. բարկանալ. խենթեանալ. հարստանալ. փռթալ. խօսիլ. մարիլ. հոսիլ.

98. Դի'ր դէմը պարզ բայը՝ ժամանակը, քիւն ու դէմքը նոյնը պահելով.

Կր մօտեցընեմ. կը տեղեկացընեմ. պիտի հաստացընեմ. պիտի իմացընես. կը բարկացընէր. պիտի հասկըցնէի. կը կարգացնէք. կը նստեցնես. պիտի կշտացնէք. թող հեռացընեն. թող փայլեցընէ.

99. Ընդգծէ անցողակերպը.

Մարդուն ոտքը կոխեցի ու ցաւցուցի. Բարկացաւ, մօրակը դարկաւ ու ձին վազցուց. Նախ պզտիկը հանգստացուր, ետքը կը խօսեցընես. Իր կռուազան ընտառութեամբը վերջ ի վերջոյ արիւն պիտի հոսեցընէ Մարդ կայ ամօթէն կը կարմրի, մարդ կայ ամօթէն կը կարմրցընէ. Մի' ընդհատեալ ինծի, խօսքս կը մոռցընես. Դնաց. եկաւ ծամծամեց և յաջող վայրկեանը փախցուց. Այխատանքդ մինչեւ ուր որ հասցընես՝ ինծի իմացո՛ւր. Այնքան խօսք խառնեցին, խօսք դարձուցին. որ երկու ընկերները իրարու հետ կռուեցուցին.

90. Գրե՛ բոլոր դէմքերով դեմ դէմի բարկանալ պարզ բային եւ իր անցողակերպին կաւարեալը. բուն հրամայականը, աւարտ ու անաւարտ դերբայները.

91. Նոյնը եւ հետեւեալ բայերուն համար.

Խօսիլ. իջնել. փախչիլ. կարգալ.



Բ. ԿՐԱԽՈՐԱԿԵՐՄ ԲԱՅԵՐ

Միջնագիր կազմ ունեցող բայերուն երկրորդ տեսակը կը կազմեն կրաւորակերպ բայերը.

Կրաւորակերպ բայերը կ'ըստանան ու յաւելուած հնչիւնը ի լծորդին առջեւէն, որով կ'առաջանայ ու իլ վերջաւորութիւնը. կը կար-

դանք լիլ մէկ բաղաձայնէ մը ետքը, կը կարդանք ըլիլ երկու բա-
ղաձայնէ ետքը, ըստ ու-ի ընթերցման ընդհանուր օրէնքի: Այսպէս՝
բեր+ուիլ, խրատ+ուիլ, ծեծ+ուիլ, փըռ+ուիլ, եփ+ուիլ,
բայց զրկ+ըւիլ, հարց+ըւիլ, պարպ+ըւիլ, կարծ+ըւիլ, դարն+
ըւ-իլ:

Գրութեան մէջ գրաբարի հետեւողութեամբ դեռ սովորական է
նաեւ երկրորդ պարագային գրել միշտ ու-ով, երբ ըւ կը հնչենք:
Աւելորդ բարդութիւն մը և՛ գրելու և՛ կարդալու: Լաւ է ուղղակի
ըօը գրենք, և ջնջենք բոլորովին աւելորդ դարձած ո-ն:

Այս կաղմի բայերը կը կոչուին կրաւորակերպ, որովհետեւ այս
ձեւը ունին գլխաւորապէս կրաւորական կոչուող բայերը, որոնք գոր-
ծողութիւնը իրենք չեն կատարեր, գործողութիւնը կը կատարեն ու-
րիշները, իրենք գործողութեան ենթարկւողը կ'ըլլան, գործողու-
թեան ազդեցողութիւնը կրողը: Ծեծել ու ծեծուիլ, սիրել ու սիրուիլ,
տաշել ու տաշուիլ, բերել ու բերուիլ:

Բ. կրաւորակերպ բայերը կը կազմուին հետեւեալ կերպով.

1. Պարզ բայերու ե և ի անյօդ լծորդներուն համար ուիլ վեր-
վաւորութիւնը կ'աւելնայ բայի բունին վրայ: Կար+ել ու կար+ուիլ,
գր+ել ու գր+ուիլ, մատն+ել ու մատն+ըւիլ, ապր+իլ ու ապր+
ըւիլ, կարգ+ել ու կարգ+ըւիլ, խօս+իլ ու խօս+ուիլ, ընակ+իլ ու
ընակ+ուիլ:

2. Պարզ բայերու ցե և ցի յօդաւոր լծորդ ունեցողներուն յօդե-
քը կը մնան վերջաւորութեան մէջ ուիլ-ի առջեւէն: Գտ+նել ու
գտ+նըւիլ, տես+նել ու տես+նըւիլ, հագ+նիլ ու հագնըւիլ:

3. Անյօդ ու յօդաւոր սւ լծորդ ունեցող բայերը ինչպէս և չի
յօդաւոր լծորդով բայերը չունին իրենց անմիջական կրաւորակերպը.
փոխ կ'առնեն իրենց անցողակերպէն.

խաղ+ալ	խաղ+ա-ց-նել,	խաղ+ա-ց-ուիլ
լըւ+ալ,	լըւ+ա-ց-նել,	լըւ+ա-ց-ուիլ
կարդ+ալ,	կարդ+ա-ց-նել,	կարդ+ա-ց-ուիլ
մոռ+նալ,	մոռ+ց-նել,	մոռ+ց-ըւիլ
գող+նալ,	գող+ց-նել.	գող+ց-ըւիլ
իմ+ա+նալ,	իմ+ա+ց-նել,	իմ+ա+ց-ուիլ
հեռ+ա+նալ,	հեռ+ա+ց-նել,	հեռ+ա+ց-ուիլ
մօտ+ե+նալ,	մօտ+ե+ց-նել,	մօտ+ե+ց-ուիլ
փախ+չիլ,	փախ+ց-նել,	փախ+ց-ըւիլ
թռ+չիլ,	թռ+ց-նել,	թռ+ց-ըւիլ

Այս ձեւով, իրենց անցողակերպի միջնորդութեամբ կ'ըստանան

երբեմն նաև ե յօգաւոր լծորդութենէն, ինչպէս՝ մտ-նել ու մտ-
ցըւիլ (ո՛չ մտնըւիլ):

Քանի մը բայեր կ'ունենան երկու ճամբով ալ ստացուած երկու
կրաւորակերպեր իմաստի տարբեր ներդրեամբ: Չրինակ՝

հագ-նիլ ու հագնըւիլ . հագ-ցընել ու հագ-ցըւիլ
խօս-իլ ու խօս-ուիլ . խօս-ե-ցնել ու խօս-ե-ցուիլ

Բոլոր կրաւորակերպ բայերը. կը խոնարհուին կանոնաւոր կերպով
երրորդ լծորդութեան վրայ, իբրև անյօդ ի լծորդ:

92. Գրե՛ պարզ բայերուն դէմը իրենց կրաւորակերպը:

Ծեծել. սանրել. կանչել. թափել. խմել. խառնել. բռնել. հիւ-
սել. կարել. գրաւել. կարդալ. լըւալ. բանալ. հոգալ. սեւնալ. մեծ-
նալ. կուրանալ. հեռանալ. մօտենալ:

93. Դի՛ր դէմը պարզ բայը նոյն ժամանակով, թիւով ու դիմով:

կը խօսուի. կը յանձնըւիմ. պիտի սանձըւին. գրուեր է. լսուեր
էր. տեսնուեր էին. պիտի կանչըւի. թող հարցըւէր. կը հիւսուի. պի-
տի նստուէր. թող հոն գտնըւէր. այսպէս կ'ապրըւի՞. պիտի վախորդի.
եթէ վարձըւի. կը բերուի. պիտի պարտէզ տարուէր. կը տարածուի
լուրը:

94. Դի՛ր դէմը համապատասխան կրաւորակերպը:

Տարաւ. բերաւ. խօսեցաւ. գրեցի. կարդացի. գտայ. տեսայ.
զարհի. կտրեցի. լըւացիր. բաժիր. կուրացար. հեռացար. հարցու-
ցիր:

95. Դի՛ր դէմը համապատասխան կրաւորակերպը:

Տա՛ր. բե՛ր. խօսէ՛. գրէ՛. կարդա՛. գտի՛ր. տես՛. զա՛րկ. կտրէ՛.
բա՛ց. հեռացի՛ր. հարցո՛ւր:

96. Գրե՛ այս հրամայականներուն յոգնակիները քե՛ պարզ քե՛ կը-
րաւորակերպ:

97. Ընդգծե՛ կրաւորակերպերը:

Երկու շարաթէ իվեր կը դարմանուի և կ'ըսեն շուտով փոխադ-
րըւի պիտի ծովեզերեայ տեղ մը: Այդ տեսակ խօսքին կը հաւատացուի՞:
Արագ հանուեցաւ ու նստուեցաւ ջուրը: Պէտք է գրի առնեմ, թէ չէ
իսկոյն կը մոռցըւի: Կան իրաւունքներ, որոնք կը փոխանցըւին մէ-
կէն միւսը. կան իրաւունքներ ալ, որոնք անգամ մը որ ստացուին,
այլ եւս կը կապուին ստացողի անձին հետ, բայց միայն ստացողի:
Քիչ մըն ալ որ առաջ երթան՝ ճամբան երկուքի կը բաժնըւի, մէկը
կը թեքուի դէպի գիւղ. միւսը կը ճիւղաւորուի դէպի ձախ. դէպի
ձախ ծառոտը կը շարունակուի մինչեւ հրապարակը, ուր կը գտնուի
նաեւ մեր տունը: Կը խնդրըւի, որ չուշանաս:

98. Գրե՛ առանձին ֆու ընդդձած կրաւորակերպեր եւ դի՛ր դեմը իրենց պարզ անորոճ դերբայը:

99. Գրե՛ ճակե-ճակ տողին սկիզբը ճասը հաս ա լծորդով բայի՛ անյօդ եւ յօդսւոր՝ անորոճ դերբայը. դի՛ր դեմը իր անցողակերպը եւ իր կրաւորակերպը:

100. Գրե՛ փակչիւ, փախչիւ, թռչիւ, փլչիւ, հալչիւ բայերուն դեմը իրենց անցողակերպն ու կրաւորակերպը:



Գ. ԿՐԿՆԱԿԵՐՊ ԲԱՅԵՐ

Ա. Բայերուն մէկ խոշոր մասը իրենց նշանակութեան մէջ ունին գործողութիւնը քանի մը անգամ կրկնուած ըլլալու իմաստը, այսինքն կրկնական բայեր են: Իմաստի այդ կրկնականութիւնը կ'առաջանայ բայերուն մէջ երկու ճամբով. կա՛մ բունին մէջ արմատին կրկնութեամբը, ինչպէս՝ փսփս + ալ, քաշքշ + ել, խաղաղ + ել, դողդղ + ալ. և կա՛մ բունին վրայ մէկ-երկու հնչիւնի յաւելումով լծորդէն առաջ, այսպէս՝ թռչ + տ-իւ, կտր + տ-եւ, պոռ + չտ-եւ, քաշ + կռտ-եւ, կգ + ւըտ-իւ, սիր + ւըտ-իւ:

Արմատին կրկնութիւնը բայի բունին փոփոխութիւնն է, կը վերաբերի բառակազմութեան, իսկ բայի բունին վրայ ուրիշ հնչիւններու յաւելումը լծորդէն առաջ կ'ըզգացուի իբրեւ վերջաւորութեան փոփոխութիւն և կը մտնէ բայերու թեքումիս ուսումնասիրութեանը մէջ:

Ուրեմն՝ կրկնական բայերուն այն անսակները, որոնք բունին ու վերջաւորութեան մէջ որոշ հնչիւններու յաւելումովը կ'առաջանան, կ'անուանենք կրկնակերպ բայեր. ասոնք գործողութեան կրկնուած ըլլալը ցոյց կու տան կա՛մ նոյն գործողին կողմէն, կա՛մ միաժամանակ քանի մը գործադնիւրու կողմէ իրարու հանդէպ, փոխադարձօրար: Կտր + տեւ, գր + տեւ, թռչ + տիւ, ցատ + կռեւ կրկնակերպեր են նո՛յն գործողը աչքի առաջ ունենալով. սիր + ւըտիւ, ծեծ + կըւիւ, հրմշտ + ւըկուիւ կրկնակերպ են փոխադարձ ազդեցութեամբ:

Բ. Կրկնակերպ բայերուն հիմնական միջնադիր հնչիւնն է օ բաղաձայնը. երբեմն առանձին, երբեմն ուրիշ բաղաձայնի մը ընկերակցութեամբ, երբեմն ալ աս ու ոճ մասնիկներու ձեւով, որոնց կրճատումն է արդէն ինքը:

ա. Նախ՝ առանձին և-ի ներմուծումը .

1. Ասղն + տ-ել, կսմտ + տ-ել, պատռ + տ-ել, կտր + տ-ել, կստր + տ-ել, բզկ + տ-ել ու քանի մը նման բայերու մէջ :

2. Անյօդ և լծորդով պարզ բայերու կրաւորականէն կազմուած կրաւորակերպերուն մէջ, Պահ + ել, պահ + ու-իլ ու պահ + ւը-տ-իլ. կզ + ել, կզ + ու-իլ ու կզ + ւը-տ-իլ. սիր + ել, սիր + ու-իլ ու սիր + ւը-տ-իլ. ծեծ + ել, ծեծ + ու-իլ ու ծեծ + ւը-տ-իլ, ժողվ + ել, ժողվ + ւը-իլ ու ժողվ + րս-ու-իլ :

Ուրեմն ք հնչիւնը կը մտնէ ու-ի ու լծորդի մէջտեղը : Բացառութիւն է բռնը վ հնչիւնով վերջացող բայերը. ուր երկու վ-երը իրարմէ զատելու համար ք հնչիւնը կը զրուի կրաւորակերպի ու-էն առաջ. ժողով, ժողվ + ւը-տ-իլ :

3- Զի յօդաւոր լծորդութենէն առաջացած կրկնակերպ բայերուն մէջ, Թռ + չիլ ու. Թռ + չ-տ.իլ. փակ + չիլ ու փակ + չ-տ-իլ. փլ + չիլ ու փլ + չ-տ-իլ :

բ. Երկրորդ՝ ք կրկնակերպի ներմուծումը, երբ մէկ կամ երկու ուրիշ բաղաձայններ ալ հետք կը բերէ :

Մէկ հատ տարբեր բաղաձայնով. գլտոր + իլ ու գլտոր + տկ-իլ. աւր + ել ու աւր + չտ ել. կռւ + իլ ու կռւ + գտ-իլ :

Երկու հատ տարբեր բաղաձայնով. խառն + ել ու խառն + չտկ-ել. կոխ + ել ու կոխ + կռւ-ել. կանչ + ել ու կանչ + վռտ-ել :

գ. Երրորդ՝ ոս միջնադիր մասնիկի ձեւով, կոխ + ել ու կոխ + ոտ-ել, լզ + ել ու լզ + ոտ-ել. կրծ + ել ու կրծ + ոտ-ել, կծ + ել ու կծ + ոտ-ել, ցան + ել ու ցան + ոտ-ել, պաչ + ել ու պաչ + ոտ + ել :

Քարոտ, ցխոտ, մրոտ, խոցոտ և նման անուաններէն կազմուած բայերն ալ շատ կը նմանին կրկնակերպերուն՝ ունենալով իրենց իմաստին մէջ որոշ կրկնութիւն մը և կրնան նկատուիլ իրրեւ կրկնակերպ : Խոց-ոտ + ել կամ խոց + ոտ-ել, քար-ոտ + ել կամ քար + ոտ-ել :

Ուրիշ խօսքով ոս միջնադիրները նման պարագաներուն կարելի է և՛ բունին մէկ մասը նկատել և՛ վերջաւորութեան : Երբ իրեւ վերջաւորութեան մէկ մասը կ'ըմբռնուին՝ բայը կը դառնայ կրկնակերպ :

Միջնադիրները կրկնակերպ բայերուն մէջ կ'առաջացնեն բաղաձայններու կաւտակում. խօսելու տան բնական կերպով կը մտցընենք անոնց մէջերը ը ձայնաւորը : Ընթերցման դիւրութեան ու ճշդութեան համար լատագոյն է այդ ը-երը նաև գրենք : Կովըզտ-կիլ, ցատկըռտել, խառնըչտկել, գլտորտըկիլ :

Բոլոր կրկնակերպ բայերը կանոնաւոր խոնարհում ունին կա՛մ իբրեւ անյօդ և, կա՛մ իբրեւ անյօդ ի. այսինքն կը խոնարհուին կա՛մ երկրորդ կա՛մ երրորդ լծորդութեան վրայ՝ նայելով իրենց լծորդին :

101. Գրկնական բայերուն վերջաւորութիւնները գծիկներով վերածե՛լ իր բաղադրիչ մասերուն ու դի՛ր իր պարզ բայը.

Կտրտել. կոտրտել. ձեծւըտիլ. քերւըտիլ. ժողվըտուիլ. ժողվըտու-
ուիլ. ժողվըտել. ժողվուտել. հոտւըտալ. ձեծկըւիլ. դողդղալ. ըզըկ-
անել. ըզըկտըւիլ. թռչտիլ. փակչտիլ. խառնչտել. խառնչտկել. զըլ-
տորտկիլ. կոխկուտել. կոխկուտուիլ. շտկուտել. քաշկոտել. քաշքշել.
կանչվուտել. կշկշալ. կուռըգտիլ. խզմզել, գրոտել. փոշոտել. մրո-
տիլ. պոռչտել:

102. Ինչո՞ւ համար վերի օրինակներուն մէջ *դողդղալ*, *քաշքշել*,
կշկշալ, *գրոտել*, *մրոտիլ*, *խզմզել* կրկնակերպ բայեր չեն, թէեւ իմաս-
տով կրկնական են:

103. Դի՛ր հետեւեալ բառերուն դէմը իրենց կրկնական բայերը,
ըլլան կրկնակերպ կամ ոչ.

Վազել. կոտրել. պոռալ. կանչել. սիրել. պահել. թռչիլ. կռուիլ.
խառնել. կոխել. ցատկել. քաշել:

Ընդգծե՛ որք կրկնակերպ չե՛:

104. Ընդգծե՛ կրկնակերպ բայերը.

Անպիտանը ընկերոջ չինածը աւրչտեց: Յետեւորուն մէջ ինչո՞ւ կը
կոխկուտես, զգուշ չքալե՞ս: Ուրախութենէն կը վազվզէր ու կը ցատ-
կըտէր: Ինչո՞ւ կը կոուըդտիք. մի՛ պոռչտէք, ամօթ է. ձեծկըւիլն
ի՞նչ բան է: Շան լակտաները ինկեր էին իրարու վրայ կը գլտորուէ-
ին ու կը իզըտէին: Թիթեռնիկները թուփէ թուփ կը թռչտէին և
ճիւղէ ճիւղ կ'ոտոտտէին և օդին մէջ գոյնզգոյն կը փայլկտէին: Ո՞վ
է սեղանս խառնչտկէր: Հերի՛ք թեւերս քաշքշես: Ատ ի՞նչ բան ես
բռնիր, որ մատներդ կը փակչտին, անուշոտեր ես: Երի՛ր դուրս, ալ
ո՞ւր կը պահւըտիս:

105. Առանձնացո՛ւր վերի կրկնակերպ բայերը անորո՞ւ գերբայի
ծելով ու գծիկներով վերածե՛լ իրենց բաղադրիչ մասերուն:

106. Դե՛ք քերել. քերուիլ ու քերւըտիլ բայերուն բոլոր ծա-
մանակները, առանց ենթադրելու, ու մէյ-մէկ դիմքով, իրարու դիմ
երեք տարբերով:

107. Հետեւեալ պարզ բայերէն նախ կրկնակերպ բայեր կազմե՛, տա-
կըն ալ ոչ-կրկնակերպ կրկնականներ:

*Քաշել. քսել. պոռալ. վազել. ցանել. լափել. շտկել. հեծել. լը-
զել. կոխել. կտրել. կապել:*

Վեցերորդ հասում

Բ Ա Յ Ե Ր ՈՒՆ. Ս Ե Ռ Ը

Ա. ՀԻՆԳ ՍԵՌ

Բայերը գործողութիւնն ցոյց տրուող բառերն են. բայց գործողութիւնները կ'ըլլան քանի մը տեսակի՝ նայելով թէ իրենց ներքին իմաստը ի՞նչ յարաբերութիւն ցոյց կու տայ գործողին և ուրիշներուն միջև: Ուրիշներուն հանդէպ գործողութեան մը բռնած դիրքը կը բաժնենք հինգ տեսակի, որ և կ'անուանենք բային սեռը:

1. Գործողութիւնը կ'ըսենք չեզոք սեռի է, եթէ ուրիշներուն հետ դործ չունի, ո՛չ ուրիշ անձերու ո՛չ ուրիշ իրերու. ամեն ինչ կը կատարուի գործողի միջոցով, կ'ըսկսի ու կը վերջանայ ինքն իրմով, ինքն իր մէջ:

Այս չեզոք բայերուն մէկ մասը իսկապէս ո՛չ թէ գործողութիւնն, այլ վիճակի մը փոփոխութիւնը կը ցուցնէ միայն. օրինակ՝ սենալ, մեծնալ, հիւանդանալ, բլլալ, դառնալ: Ասոնք չատ տկար գործողութիւնն են, որովհետեւ չեն ցուցնիր բան մը ընելը, այլ միայն բան մը ըլլալը:

Զեղոք բայերուն երկրորդ մասը աւելի ուժեղ գործողութիւններ են, կը ցուցնեն բան մը ընելը, բայց միայն ինքն իրմով ու ինքն իրերն. այսպէս՝ օրինակ՝ քալել, վազել, նստիլ, պառկիլ, մեռնիլ, իջնել, սայթաքիլ, թափառիլ, լողալ, հաղալ:

Առաջին խումբը լինելական չեզոքներն են, երկրորդ խումբը՝ ընելական չեզոքները:

2. Գործողութեան ուժը չատ աւելի կը չեղարւի և իսկապէս իբրեւ գործ մը զգալի կը դառնայ մեզի, երբ միայն գործողով չի վերջանար, այլ գործողէն կ'անցնի ուրիշներուն, երբ առանց ուրիշ անձի մը կամ իրի մը մասնակցութեան կատարուիլ չի կրնար. երբ կը դառնայ ուրիշին վրայ ազդող, ուրիշներուն վրայ ներգործող. այդ տեսակի գործողութիւն մը արտայայտող բայերն ալ այդ պատճառով կ'անուանենք ցերգործական սեռի բայեր:

Այսպէս, օրինակ, կոտորել կարողանալու համար միայն կոտորող մը

հերիք չէ. պէտք է անպատճառ բան մը, որ կոտորենք. առանց այդ բանին կարելի չէ կոտորելու գործողութիւնը. «մատախտիս ծայրը կոտորեցի», «փայտ կը կոտորէր», «ապակին պիտի կոտորեա՛մ. միշտ բան մը պէտք է, որուն վրայ անցնի կոտորողի կատարած գործողութիւնը: Այսպէս ալ՝ շինել, տաշել, այրել, կարել, կտրել:

Կամ երբ կ'ըսենք՝ սիրել, կամենալ, վճռել, առել, ասոնք գործողութիւններ են, որ մեր հոգիին մէջ կը կատարուին, բայց միայն մեր հոգին հերիք չէ, անհրաժեշտ պէտք ունինք և ուրիշ բանի մը, որուն վրայ կ'անցնի, կ'ազդէ, կը փոխանցուի մեր այդ հոգեկան գործողութիւնը, որ առարկան է մեր հոգեկան այդ շարժման: Մինչև չըսեմ, թէ հոգիս ի՞նչ բանն է, որ կը սիրէ, ի՞նչ բանն է, որ վճռուի, կամ ի՞նչ բան է իր կամեցածը՝ բային արտայայտած իմաստը չի լրանար:

3. Ներգործական քայերուն մէջ գործողութիւնը կ'անցնի ուրիշի մը, բայց այդ գործողութիւնը կատարողը միշտ ինքն է, իրմով է, որ կը կատարուի գործողութիւնը. նախադասութեան ենթական է սիրողը, կամեցողը, կարողը, տաշողը: Արդ կան բայեր, որոնք կ'արտայայտեն նորէն ուրիշին անցնող գործողութիւն մը, բայց որոնք չեն կատարուիր անմիջապէս նախադասութեան ենթակային սեփական ձեռքովը, այլ կը կատարուին միջնորդապէս, ուրիշի մը միջոցով. նախադասութեան ենթական գործողութիւնը կատարել կու տայ ուրիշի մը:

Այն բայերը, որոնք այսպէս ուրիշի մը միջոցով կատարուող գործողութիւն մը կ'արտայայտեն, կ'անուանենք անցողական սեռի բայեր: Օրինակ՝ կարդացընել, բարկացընել, հաշտեցընել, գրել տալ, բերել տալ, խօսեցընել տալ. այս ամենուն մէջ ենթական դրդողն է, ազդողն է, ընել տըւողն է, բայց բուն ընողը, այսինքն կարդացողը, հաշտըողը, գրողը, բերողը ուրիշներն են:

4. Գործողութեան լոկոտիվին նոր տեսակ մը կ'առաջանայ. երբ նախադասութեան ենթական ինքը չէ, որ ուրիշներուն կ'ազդէ, ո՛չ ուղղակի, ո՛չ ալ միջնորդաբար. այլ ընդհակառակը ինքն է, որ ուրիշներէն կ'ազդուի, ինքն է, որ իր վրայ կը կրէ ուրիշներուն կատարած գործողութիւնը, ինքը կը դառնայ սիրոյ կամ ձեռի ենթարկըողը:

Այս տեսակի գործողութիւն մը արտայայտող բայերը, այսինքն ուր ենթական է որ ազդեցութիւնը կը կրէ, կ'անուանենք կրաւորական սեռի բայեր: Օրինակ՝ սիրուիլ, կանչուիլ, տարուիլ, հրաւիրուիլ:

5. Կսին սակաւաթիւ քանի մը բայեր ալ. որոնք այն տեսակ գործողութիւն մը կ'արտայայտեն, որ միեւնոյն ժամանակ ենթակայէն կ'անցնի ուրիշներուն և ուրիշներէն կ'անցնի ենթակային. այսինքն

բայեր, որոնք միաժամանակ և՛ ներգործական են և՛ կրաւորական, և կը կոչուին փոխադարձ սեռի բայեր. օրինակ՝ ծնծկըւիլ, սիրւը-
աիլ, կուըզտիլ:

6. Բայերուն մէջ բոլորովին առանձնակի դիրք ունի էական
բայը, այսինքն է պակասաւոր բայի ներկան ու անկատարը, դրական
կամ բացասական ձեւով:

Էական բայը սեռ չունի, որովհետեւ այն միակ բայն է, որուն
արտայայտածը գործողութիւն մը չէ: Էական բայը ո՛չ թէ որեւէ
շարժում, որեւէ փոփոխութիւն կամ եղելութիւն կը բացատրէ. այլ
միմիայն կը հաստատէ կամ կը ժխտէ բանի մը վիճակն ու դիրքը՝
է՞ թէ չէ՞, է՞ր թէ չէ՞ր:

«Ես աշակերտ էի», «եղբայրդ աղէկ մարդ է», «երկինքը կա-
պոյտ է», «հիմա գիշերները կարճ են», «մարդը տուներ չէր», «ապ-
րանքը խանութն է». «պարտէզը չէր, վերն էր». այս ամենուն մէջ
ո՛չ-մէկ գործողութիւն չկայ. ո՛չ մէկ կատարուած բան չկայ:

Նախորդ հինգ սեռերը, այսինքն բոլոր բայերը, զանազան աստի-
ճանի ու տեսակի գործողութիւն մը կը ցուցնեն միշտ. տարբեր է
էական բային խալցած դերը. անիկա նախադասութեան ենթական և
որեւէ վիճակ մը կը կապէ իրարու. ենթական այսինչ յատկութիւնը
ունի՞ թէ չէ, այսինչ խումբին կը պատկանի՞ թէ չէ, այսինչ տեղի
ու դիրքի մէջն է, թէ չէ:

Միմիայն կայ պակասաւոր բայն է, որ էական բային շատ կը
նմանի, թէեւ սովորաբար չեղոք բայերուն մէջը կը դնենք, իրեւ-
լինելութեան մը, եղելութեան մը արտայայտութիւնը:

108. Նախ արձագրե՛ հսկանք բայ ունեցող նախադասութիւնները.
հօր ինչ ըլլալը ցոյց տուող չեզոքները. վերջը ինչ ընելը ցոյց տուող
չեզոքները. ընդգծե՛ բոլոր բայերը:

Ինչո՞ւ այդպէս կը տաքնաս. մի՛ պոռար, հանգի՛ստ եղիր և լսէ՛
նաև ուրիշներուն կարծիքը:

Կէտ ձուկը կաթնասուն կենդանի է: Մենք բոլորս մարդ ենք,
ուրեմն սխալական ենք:

Ինծի կը թըւի, քիչ մը տկար ես այսօր: Հիւսիսէն ցուրտ հով
մը կը փչէք, քիթս ու ականջներս սառեցան, թէեւ շատ արագ կը
քալէինք, գրեթէ կը վազէինք:

Քաղաքէս բացակայ էի, հազիւ երկու օր է, որ վերադարձեր եմ
և չափազանց զբաղուած եմ, ներող եղիր անքաղաքավարութեանս:

Քու ուղած ապրանքդ չկայ. սպառած է. կան ատոր նման բա-
ներ. մէկ տեսակը գէշ չէր. գիներն ալ խելքի մօտիկ էին: Բայց ա-

ւելի աղէկ կ'ըլլար, եթէ ինքդ անձամբ գայիր. այդ առիթով քանի մը օր մէկտեղ կ'ըլլայինք. և այդ ձեւով գործդ ալ անշուշտ աւելի կը յաջողի. ինչպէս կը տեսնես, ես ձախողեցայ:

109. Նախ կ'արագրես ներգործական բայով կազմուած նախադասութիւնները. ետքն ալ կրաւորական սեռի եղողները. երբորդ խումբը կ'ըլլան չեզոք բայերով նախադասութիւնները. վերջն ալ սոցոքականները:

Երէկ կանչւած էի դատարան մեղադրեալի կողմէն, վկայութիւն պիտի տայի: Նախ նրդում ընել տըւին, ետքը սկսան հարցափորձել. գիտցածս ըսի. հաւանօրէն մարդը արդարացընեն պիտի. եթէ բոլորովին չարդարանայ ալ, թիթեւ սուպանք մը միայն կը նշանակեն:

Ջղջիկը ձեղունիւն տակը կախուեր էր գերանէ մը: Այդ կենդանին ցերեկները կը քնանայ, գիշերները կը թռչի, կ'երթայ. սնունդ կը փնտռէ. անախորձ կենդանի մըն է, ո'չ-մէկէն չէ սիրուած. մօթի ու աւերակի հետ է կապուած իր անունը, թէեւ փնասակար բան մը ըրած չունի:

Մեծերը զետակին մէջէն անցան մեծ դժուարութեամբ, փորրիկները մեծ մասով մենք անցուցինք. քանի մը վախկոտները ստիպուածով անցնիլ տըւինք, իսկ հիւանդները ձիու վրայ անցընել տըւինք:

Այս ձմեռ քու բարեկամդ շատ տանջուեցաւ յօգացաւ: Իրա՛ւ է, յօգացաւ շատ տանջեց քու բարեկամդ, բայց բարեկամդ ալ մեզի տանջեց իր յամառութեամբը: Եթէ ժամանակին հետեւէր բժիշկներու խորհուրդին, գործը մինչեւ հոստեղուանքը չէր հասներ. գուցէ և բոլորովին հիւանդութեան առջիւր առնուէր:

Հսկի որ տղադ դաւաճապետ է նշանակուեր կեզրոնէն: Չմոռնա՛ս, յայտնէ՛ իրեն ուրախութիւնս. բոլոր սրտովս կը շնորհաւորեմ իր այդ բարձրացումը:

Խեղճ կիներ նստած տեղը քնացաւ յոգնութենէն. յանկարծ աչքերը քայաւ. նայեցաւ չուրջը, տեսաւ որ քունը տարեր էր և իր գէմը նստողները կը խնդային. շատ ամըչցաւ:

Աղջիկը նստեր էր ճօճանը ու ժամերով կը ճօճուէր:

Թուղթը կը շինուի լաթի կտորներէ կամ ապշեղներէ: Աղը կ'ըստացուի ծովուն ջուրէն կամ կը հանուի լեռներուն մէջի աղահանքերէն:

Դրիչիս ծայրը կոտորել է, տառերը հաստ կը դրէ. գրիչիս ծայրը կոտորել է: Դրիչիս ծայրը կոտորել են:

110. Հետեւեալ բայերուն քովը նշանակէ՛ իր սեռը:

Ապաննիլ. փորձել. դարձել. բանալ. հազալ. գողնալ. գողանալ. քարկանալ. բարձրանալ. մօտենալ. շատնալ. հատնիլ. գրաւուիլ. յափըշտակուիլ. բիրուիլ. քաշուիլ. յուզուիլ. ցաւիլ. բաւել. ժողովել.

գովնի. քովնի, լըւալ. սուլնի. ճանչնալ. տրսնջալ. մաշկնի. կթել. կթոալի. թոթուել. թոթւըւիլ. սոթթել. սոթթըւիլ. դարձընիլ. դառնալ. յիշեցընիլ. մոռցընիլ. յիշիլ. մոռնալ. գրաւել. թափել. թաթխել. թաթխըւիլ. մերկանալ. հագնիլ. հագնըւիլ. հագուիլ. զգացուիլ. կոճկել, հանիլ. հանուիլ. հաւնիլ. կրճատել. կարճել. հաճիլ. հաճեցընիլ, կախիլ, կախուիլ. օղակել. ծածկըւիլ. սրտմախիլ. զգուշանալ. ուշանալ. ջրանալ:

114. Վերի բայերէն զսեհ՝ կբաւորականները եւ դի՛ր ամեն մեկունց դէմը իր ներգործականը,

115. Վերի բայերէն զսեհ՝ անցողականները դի՛ր դէմը իր պարզը,



Բ. ԶԵՁՈՔ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

Ա. Զեզոք ու ներգործական բայերը իրենց արտաքին կազմով իրարմէ ո՛չ-մէկ տարբերութիւն չունին: Թէեւ շատ որոշ զգալի է, որ ընդհանուր առումով՝ ա լծորդը բան մը ըլլալը ցուցընող չեզոք բայեր կերտողն է, ի լծորդը բան մը ընելը ցոյց տըւող չեզոքներ կ'առաջացընէ, իսկ եւ լծորդը՝ ներգործական բայեր. բայց ասիկա միայն տեսական արժէք մը ունի. գործնականապէս չեզոք ու ներգործական բաւերը անկարելի է իրարմէ զանազանիւ լծորդով՝ երկու սեռերն ալ ամեն տեսակի լծորդներով բայեր ունին, բացի չիլ լծորդէն, որ միշտ չեզոք է. այս լծորդով՝ բայերուն թիւը արդէն շատ է տահմանափակ:

Այնպէս, որ իրենց կազմով բոլոր պարզ բայերը, կա՛մ չեզոք են կա՛մ ներգործական, ուրիշ սեռի պատկանիլ չեն կրնար:

1. Ներգործական բայերը երբեմն չեզոքաբար ալ կը դործածուին՝ «Լսէ՛ քու հօրդ խրատներուն» ըսել կ'ուզէ. «Ապանջ՝ դի՛ր», «Տիրեց՝ ընդարձակ երկիրներու». իմաստն է «տէր դարձաւ»:

2. Իւ ընդհակառակը չեզոք բայերը իրենց վրայ առնելով իրենց անորոշ դերբայը իրեւ խնդիր կամ անոր մերձմաստ համարժէք բառ մը, կը դառնան ներգործականի նմանող բան մը: «Բարկութիւն մը բարկացաւ որ», «Իշնալ մը խնկաւ», «Վազել մը վազեց», «Ի՛նչ հայհօյանքներ կը հայհօյէր», «Ամեն մարդ իր կեանքը կ'ապրի»:

3. Անյոգ եւ լծորդով՝ ներգործական բայերը, ընդհանրապէս ունին իրենց գուգահեռը ի լծորդով: Ի լծորդը ունեցողները չեզոք են: Այսպէս՝ օրինակ, այրել՝ այրիլ, վառել՝ վառիլ, թափել՝ թափիլ, կոտրել՝ կտրիլ, կտրել՝ կտրիլ, պատռել՝ պատռիլ, ծոծել՝ ծոծիլ, մարել՝ մարիլ:

հոսել՝ հոսիլ, խզել՝ խզիլ, հալել՝ հալիլ, փրթել (հաց)՝ փրթիլ, աշխատել(==շահիլ)՝ աշխատիլ, չազել՝ չազիլ, եփել՝ եփիլ, հեայլն։

Բ. Մնացած երեք սեռերն են, այսինքն անցողական, կրաւորական ու փոխադարձ, որոնք ունին իրենց յատուկ արտաքին կազմը։ Եւ ասոնց արտաքին յատուկ կազմը միւլի արդէն ծանօթ է։ Ասոնք երեք տեսակի միջնադիր բայերն են։

Փոխադարձ սեռը կրկնակերպ բայերէն կ'առնէ ընդհանրապէս իր շատ սակաւաթիւ բայերը։

Անցողական սեռը, ունի իր յատուկ անցողակերպ հագուստը։

Կրաւորական սեռն ալ իր յատուկ կրաւորակերպ արտաքին կազմը։

Բոլոր կրաւորական սեռի բայերը կրաւորակերպ են միշտ։ Բայց հոսկէ պէտք չէ սխալ եղրակացութեան գալ ու ձեւէն խաբուիլ։ Ամեն կրաւորակերպ ամեն անգամ չի պատկանիր կրաւորական սեռին։

Գ. Կրաւորակերպ բայ մը կրնայ ըլլալ կա՛մ կրաւորական կա՛մ չեղոք. և ենթակայ է հետեւեալ կանոններուն։

ա) Կրաւորակերպը կրաւորական սեռի է։

Նախ եթէ առաջացած է ներգործական պարզ բայէ մը. սիրել ու սիրուել, ըրել ու բերուիլ, տալ ու տալուիլ, կրթել ու կրթուիլ, ուսնլ և ուսուիլ, ցանել ու ցանուիլ։

Երկրորդ՝ եթէ առաջացած է անցողակերպ բայէ մը, բայց աչքի առաջ պէտք է ռենհնալ անցողակերպին սեռը։ Եթէ ներգործական սեռի է անցողակերպը՝ անկէ կազմուած կրաւորակերպը կ'ըլլայ կրաւորական, նախորդին պէս։ Հասնիլ, հասցընել ու հասցըւիլ. ճերմկանալ, ճերմկցընել ու ճերմկցըւիլ. լախնալ, լախցընել ու լախցըւիլ. վերնալ, վերցընել ու վերցըւիլ. մեռնիլ, մեռցընել ու մեռցըւիլ. փակնլ, փակցընել ու փակցըւիլ. փախչիլ, փախցընել ու փախցըւիլ։

Եւ երրորդ՝ եթէ անցողակերպը արդէն անցողական սեռի է, իրմէն կազմուած կրաւորականն ալ կ'ըլլայ անցողական—կրաւորական մը. ենթական կը կատարէ գործողութիւնը, բայց ուրիշէ մը դրդուած, ուրիշի մը ազդեցութեան տակ։ Այսպէս՝ կարդալ, կարգացընել ու կարգացուիլ. զգալ, զգացընել ու զգացուիլ. աշխատիլ, աշխատցընել ու աշխատցըւիլ. քալել, քալեցընել ու քալցըւիլ. պառկիլ, պառկեցընել ու պառկեցուիլ. ուտել, ուտեցընել և ուտեցուիլ։

բ) Կրաւորակերպը չեղոք սեռի է։

Նախ՝ երբեմն ներգործական պարզ բայէ մը կազմուած կրաւորակերպը իմաստի բերումով կ'ըլլայ չեղոք սեռի. ենթական թէև ինքը կը կրէ գործողութիւնը իր վրայ, բայց ինքն իրմէ կը կրէ։ Դործողութիւնն ընողն ու կրողը նոյն անձը կ'ըլլայ։ Այսպէս՝ կախիլ ու

կախուիլ, կոճկել ու կոճկրելիլ, սանրել ու սանրելիլ. մաքրել ու մաքր-
րելիլ, մտածել ու մտածուելիլ:

Ներհրորդ՝ չեղոք պարզ բայէ մը կազմուած կրաւորակերպը կ'ըլ-
լայ չեղոք սեռի: Սովորաբար կը գործածուին միայն եղակի երրորդ
դէմքերը, որոնք կը հաստատեն, կը հարցընեն կամ կը ժխտեն չեղոք
գործողութեան մը կատարուելուն կարելիութիւնը: Կը վաղուի՞. կը
նստուի՞. կը պառկուի՞. կ'իջնուի՞, կ'ելլուի՞, կը հասնուի՞:

Եւ երրորդ՝ այս ձեւի թերի կրաւորականներ կ'ըստացուին նաև
կրաւորական սեռի բայերէ, կրաւորական միջնադիր ու հնչիւնի կրճկ-
նութեամբ, կրկնակի կրաւորացումով: Այս տեսակ կրկնակրաւորա-
կաններ կ'ըստացուին ընդհանրապէս այն կրաւորակերպերէն, որոնք
առաջացած են անյոդ լծորդով ներգործական բայերէ: Բերիլ, բերուիլ
և կը բերւուի. ուտել, ուտուիլ և կ'ուտուի. մաշել, մաշուիլ և կը
մաշւուի. քերել, քերուիլ և կը քերւուի. լըլալ, լըլացուիլ ու լըլաց-
ւուիլ: ստանալ, ստացուիլ և կ'ըստացւուի. խօսիլ, խօսուիլ և կը
խօսուի. խաղալ, խաղացուիլ և կը խաղացւուի:

113. Բոլոր բայերուն քովը փակագծի մէջ դի'ր իր անորոշ դերբայ-
ը եւ ի՞նչ սեռի քլլալը:

Մանկու առեն թելը փրթաւ: Համեստ խօսէ՛ քիչ մը, շատ խո-
շոր-խոշոր կը փրթես: Եղաւ ժամանակ, երբ չաքաթական մինչև ե-
րեք ոսկի աշխատեցի: Գործը գլուխ չեկաւ, ինչքան ալ որ աշխատե-
ցայ: Վրաս տաքութիւն մը կայ, կարծես կ'այրիմ, բռնէ՛ ձեռքս, մի՛
վախնար, չեմ այրիք քեզի: Փտտած կտոր էր, քաշեցի թէ չէ՝ պատ-
ռեցաւ մէջտեղէն: Ես ալ բարկութենէս վերէն վար պատռեցի:

Ծոնեցաւ, որ գետնէն ասեղը վերցրնէ, գլտորեցաւ ձկուն չէր
փայտը. որ ծոնցի՝ կոտրեցաւ: Բաժակը եւ կոտրեցի: Անօթութենէս
սիրտս կը մարի: Մարդը ցաւէն մարեցաւ: Հովը մոմը մարեց: Դիչ-
քիչ ձիւնը հալեցաւ և ջուրը ներս թափեցաւ: Ոսկերիչը ոսկին հալեց
ու թափեց կաղապարին մէջ: Մամտութէն խեղճին սիրտը հալեցաւ:

114 Դի'ր քովը անորոշ դերբայը եւ սեռը փակագծի մէջ:

Այս տեսակ բնականորէն մէջ երկար չի կեցուիր: Նեղիկ սեն-
եակ մը, ո՛չ կը պառկուի, ո՛չ կը նստուի, ո՛չ ալ կ'աշխատուի:

Դո՞ւն ալ այն խելքին ես, որ այդ ձեւով գործ կը տեսնուի եւ
արդիւնք ձեռք կը բերուի: Այո՛, կը պատահի, որ մարդս յուսահա-
տութենէն կը կախուի: Այդ տեսակ բանը բնաւ կը մոռցուի՞:

Հարթ ու մաքուր գետին է, սքանչելի ցանց ու զնդակ կը խաղ-
ցուի:

Տղան կը կանչուի ներս, հարց ու փորձի կ'ենթարկուի, և վեր-

Ջապէս կը յայտնուի, որ խնդճը եղելութենէն բնաւ տեղեկութիւն ալ չունի:

Մարդիկ մենամարտի համար երկար-երկար կը մարզուին, կը փորձուին, կը վարժուին, բայց և այնպէս կը յաղթուին նորէն:

Այս աղջիկը ամեն բանով կը յափշտակուի, ամեն բանէ կ'ըզգացուի և շուտով ալ կը յուզուի ու կը շփոթուի, չգիտեմ ինչ ընեմ:

Ձգուշութեամբ վերէն վար կոճկըւեցաւ, մաքրըւեցաւ ու առաջ նորըւեցաւ շիտակ ճաշին սննեակը:

Անպիտանը հագուեցաւ, զարդարուեցաւ, ներս նետուեցաւ ու մօրը վիզը փաթթըւեցաւ:

Ելլուիլը կ'ելլուի, բայց չգիտեմ՝ այդ ցից ճամբով ետքը նորէն վար կ'իջնուի:

Ըրած նկատողութիւնս մեծ բան մը չէր, բայց աշակերտուհիները շատ առնուեցան:

115. Ներգործական սեռը ինչո՞վ կը տարբերի կրաւորականէն, եւ ինչո՞վ նման են իրարու:

116. Էսական բայը ինչո՞վ կը նմանի չեզոքներուն եւ ինչո՞վ կը տարբերի չեզոքներէն:

117. Ինչո՞վ կը տարբերի կրաւորական բայը կրաւորակերպէն:

118. Ի՞նչ պայմաններու մէջ չեզոք ու ներգործական բայերը արտաքին ձեւով ալ իրարմէ կը տարբերին:

119. Ի՞նչ ըսել է բայի մը սեռը:



Գ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Ա. Անցողական սեռի կրնան ըլլալ միայն անցողակերպ բայերը կամ տալ օժանդակով բաղադիր կազմ ունեցող բայերը:

Բայց ամեն անցողակերպ անցողական չէ. չփոթել պէտք չէ բային կազմը բային սեռին հետ:

ա. Անցողակերպ բայը կ'ըլլայ անցողական, երբ իր իմաստը լրացնող բառը՝ իր սեռի խնդիրը՝ շնչաւոր մըն է կամ շնչաւորներու հաւաքականութիւն մը կամ շնչաւորի մը փոխարէն դրուած փոխաբերութիւն մը. այսպէս՝ «Թշնամին փախցուցինք», «Ձիերը կը վազցընէինք», «Տեսակ-տեսակ թուփեր աճեցուցինք», «Հօտը սարերէն իջեցուցինք», «Թափօրը կամուրջէն սլաքի անցընենք», «Նշան ըրինք ու նաւակը կեցուցինք», «Կառքը ետ դարձուցինք»: Այս բոլոր անցողա-

կերպները անցողական սեռի են, որովհետեւ ենթակայէն տարբեր մէկն է բուն գործողութիւնը կատարողը՝ կա՛մ թշնամին, կա՛մ ձին ու թուփը, կա՛մ հօտը ոչխարներու, կա՛մ նաւակին մէջի մարդիկը կա՛մ կառքին ձիերը. ենթական գործողութիւնը վարողն է:

Բայց այդ միեւնոյն բայերը անցողական ըլլալէ կը դադրին ու կը դառնան պարզ ներգործական սեռի բառեր, երբ իրենց սեռի խընդիրը անշունչ առարկաներ կամ վերացական գաղափարներ կ'ըլլան, որոնք գործողութիւնը կատարել չեն կրնար. այսպէս՝ «Թշնամիին գանձերը փախցուցինք», «Նամակը ինքս տուն վաղցուցի», «Իզուր յոյսեր կ'աճեցընես», «Դիրքը դարակէն իջեցուցի», «Բարկութիւնը իջեցուցի», «Երեսս անդին դարձուցի», «Ասեղը անցուցի», «Հիւանդութիւն անցուցի», «Այդ դէպքի յիշատակին արձան մը կեցուցին», «Փողոցը լայնցընեն պիտի»:

Միայն այն պարագային, երբ անշունչ առարկան կամ երեւոյթը գործողութիւն կատարելու ունակ կը նկատուի, երբ ինքն իր շարժումը և կարծես տեսակ մը իր կեանքը ունի, անցողակերպը նորէն իբրեւ անցողական կ'ըզգանք. «Չուրին հոսանքը կեցուցինք», «Ժամացոյց դանդաղեցուցի», «Գրամագլուխդ պէտք է աճեցընես», «Դնանք անցուցուցի»: Իսկապէս միջին վիճակ մըն է աս ներգործականի ու անցողականի, և ըմբռնումի հարց:

բ. Ձեռի ու սեռի կապին տեսակէտէն թէեւ կայուն օրէնք մը գծել կարելի չէ, բայց շատ զգալի են հետեւեալ ընդհանրացումները.

1. Ներգործական բայերէն կազմուած անցողակերպերը գրեթէ միշտ անցողական սեռի կ'ըլլան. սիրել՝ սիրցընել, հաւատալ՝ հաւատացընել, լսել՝ լսեցընել, խօսիլ՝ խօսեցընել, կարդալ՝ կարդացընել, գողնալ՝ գողցընել, մոռնալ՝ մոռցընել:

2. Յօդաւոր լծորդներ ունեցող չեզոք բայերէն կազմուած անցողակերպերը աւելի հակում ունին ներգործական սեռ առաջացընելու, մասնաւորապէս՝ լայն-նալ՝ լայնցընել, մեծ-նալ՝ մեծցընել, նեղ-նալ՝ նեղցընել, ճերմկ-նալ՝ ճերմկցընել, հաս-նիլ՝ հասցընել, հատ-նիլ՝ հատցընել, մեռնիլ՝ մեռցընել:

3. Անյօդ լծորդներ ունեցող չեզոք բայերէն առաջացած անցողակերպերը ընդհանրապէս աւելի հակում ունին անցողական տալու, մասնաւորապէս ալ ու ել, Այսպէս՝ դողալ՝ դողացընել, լողալ՝ լողացընել, հաղալ՝ հաղացընել, քալել՝ քալեցընել, վազել՝ վազեցընել, հաջել՝ հաջեցընել, չտալել՝ չտալեցընել:

Բ. Ամեն միաբառ անորոշ դերբայ միանալով ճալ օժանդակ բային կ'առաջացընէ անցողական սեռի բաղադիր բայ մը: Աստիք իրենց իմաստով կը հաւասարին իրենց համապատասխան ցընել վերջաւորութեամբ կազմուած անցողական բայերուն.

Երբեք չանլ = Երբեք չենք
 մոռնալ տալ = մոռցրենք
 խօսել տալ = խօսեցրենք

բանիլ տալ = բանեցրենք
 քալել տալ = քալեցրենք
 հաջել տալ = հաջեցրենք

Ամեն անգամ ցրենք վերջապահութիւնը չի յաջողութիւն, ամեն բայէ անցողականիւ չի ստացուիր. նուազան քալ օժանդակով միշտ աւանդ-
 տիր ամեն բայէ կարելի է անցողական բաղադրի բայ մը ստանալ.
 Երբեք, օրինակ՝ համարել տալ, քաշել տալ, դրել տալ, նկարել տալ,
 հապել տալ, զրկել տալ և այլապէս անվերջ, որոնց համապատասխան
 ցրենք չկայ:

Տալ բայով կազմուած անցողականներուն մէջ պէտք է նկատի ու-
 նենալ անցողականութեան հետեւեալ աստիճանաւորութիւնը.

1. Երբ կրուորական բայի մը անորոշ դերբայովն է կազմուած՝
 կ'ըստացուի անցողական մը, ուր ենթական գործողութիւնը կատարել
 կու տայ բացէն մէկու մը միջոցով այն անձին կամ իրին վրայ, ո-
 րու մասին որ կը խօսինք. «Եղբայրս ընտրուի տրեխք», «Ինձի նը-
 չանակնիլ տո՛ւր այս պաշտօնին», «Իր յանցանքը ներուիլ պիտի
 տանք», «Դիպի իր առջեւը բերուիլ տրուաւ դատաւորին»:

2. Երբ չեղծք բայի մը անորոշ դերբայովն է կազմուած՝ կ'ըս-
 տացուի անցողական մը, ուր ենթական գործողութիւնը մէկ ուրիշ մը
 գործողութիւնը կը կատարէ ինքն իր վրայ. կ'ամ կ'ըլլայ կ'ամ կ'ը-
 նէ. այսպէս՝ սենալ տալ, մեծնալ տալ, նեղնալ տալ, խզնիլ տալ,
 մեռնիլ տալ. կ'ամ վազել տալ, ցատկել տալ, նստիլ տալ, չիջիլ տալ,
 պառկիլ տալ:

Եթէ անորոշ դերբայը բան մը քննող չեղծք իայ մըն է, անցողա-
 կան բաղադրի կը հաւասարի անցողականիւ անցողականին, օրինակ.
 վազել տալ = վազցրենք, նստիլ տալ = նստեցրենք, քալել տալ =
 քալեցրենք, պառկիլ տալ = պառկեցրենք:

3. Երբ ներգործական բայի մը անորոշ դերբայովն է կազմուած՝
 կ'ըստացուի բուն անցողական մը, ուր ենթական գործողութիւնը
 կատարել կու տայ ուրիշի մը՝ երբորդ անձի մը կամ իրի մը վրայ.

Այսպէս՝ կլլել տալ (պատահել) = կլլեցրենք, բերել տալ (ցիրք),
 գողնալ տալ = գողցրենք, մոռնալ տալ = մոռցրենք, կրիլ տալ (նա-
 ժակ մը), թողնիլ տալ (ձեռնարկը), սիրել տալ (աշխատանքը) =
 սիրցրենք:

4. Երբ ներգործական սեռի անցողականիւ մըն է դերբայը, հետե-
 ւանքը կ'ըլլայ նոյնը՝ կ'ըստացուի բուն անցողական մը. այսպէս՝

սենալ—սեցրենք —սեցրենք տալ.
 իջնալ —իջեցրենք —իջեցրենք տալ.
 ձեռնիլ—ձեցրենք —ձեցրենք տալ:

Կ. Իսկ երբ թալ թափողակը կը միանայ անցողակերպ անորոշ դերքայի մը, որ արդէն ինքը անցողական սեռի է, կ'առաջանայ կըրկ-նանցողական բաղադիր բայ մը, այսինքն ենթակային և գործը կա-տարողին միջև երկու միջնորդ կը մտնէ, ենթական սակի ևս կը հետանայ բուն գործէն և սակի ևս կը շնչուրէի ուրիշներու ձեռքով կատարուիրը.

սիրել տալ == սիրցընել, սիրցընել տալ
վազել տալ == վազեցընել, վազեցընել տալ
գողնալ տալ == գողցընել, գողցընել տալ
հաւտալ տալ == հաւտացընել, հաւտացընել տալ
կարդալ տալ == կարդացընել, կարդացընել տալ:

Այս միեւնոյն կրկնանցողականը կ'ըստացուի, եթէ ցրմել-ի փո-խարէն, իր պարզ բային վրայ դնենք թալ թալ:

սիրցընել տըւի == սիրել տալ տըւի
վազցընել տըւի == վազել տալ տըւի
գողցընել տըւի == գողնալ տալ տըւի
հաւտացընել տըւի == հաւտալ տալ տըւի
կարդացընել տըւի == կարդալ տալ տըւի:

Այս թալ թալ ձեւով կրկնանցողականներ կրնանք ունենալ նաև այն բայերէն, որոնք ցրմել-ով անցողական չեն տար.

ներկել տալ տըւի, ներկըւի տալ տըւի
բերել տալ տըւի, բերուի տալ տըւի
զարնել տալ տըւի, զարնըւի տալ տըւի
ընտրել տալ տըւի, ընտրըւի տալ տըւի
թափառիլ տալ տըւի, սանրըւի տալ տըւի:

Վերջապէս թալ թալ կարելի է աւելցընել նաև անցողակերպ անորոշ դերքայի մը վրայ:

Եթէ անցողակերպը ներգործական սեռի է՝ կ'ըստացուի կրկնան-ցողական բաղադիր մը.

մեծցընել, մեծցընել տալ, մեծցընել տալ տըւի
սեւցընել, սեւցընել տալ, սեւցընել տալ տըւի
մեռցընել, մեռցընել տալ, մեռցընել տալ տըւի:

Եթէ անցողակերպը անցողական սեռի է, կ'ըստացուի կրկնանցո-ղական ըլլալու աւելի ընդգծում մը.

սիրցուցի, սիրցընել տըւի, սիրցընել տալ տըւի
մոռցուցի, մոռցընել տըւի, մոռցընել տալ տըւի
հագուեցուցի, հագուեցընել տըւի, հագուեցընել տալ տըւի:

Դ. Այսպէսով կ'ըստանանք անցողական կազմութիւններու հե-տեւեալ ընդհանուր պատկերը.

կրտսորակերպ բայէ մը թաւ օժանդակով կ'ըստացուի մէկ անցողական մը և մէկ հատ կրկնանցողական մը: Օրինակ՝ քնքրելի, քնքրելի թաւ և քնքրելի թաւ թրի:

Բան մը եղող չեզոք բայէ մը ցրնել վերջաւորութեամբ կ'ըստանանք ներդործական բայեր. իսկ թաւ օժանդակով՝ երկու անցողական և երկու կրկնանցողական: Օրինակ՝ սեւնալ, սեւցրնել. սեւնալ թաւ, սեւցրնել թաւ. սեւնալ թաւ թրի, սեւցրնել թաւ թրի:

Բան մը ընող չեզոք բայէ մը թաւ-ու և ցրնել-ի միջոցով կ'ըստանանք երկու անցողականներ և տտոնցմէ ալ երեք կրկնանցողականներ: Օրինակ՝ քալել. քալել թաւ, քալեցրնել. քալել թաւ թրի, քալեցնել թաւ թրի:

Ներգործական բայէ մը կ'ըստանանք երկու անցողական և երեք կրկնանցողական, նախորդին պէս: Օրինակ՝ զգալ. զգացրնել, զգալ թաւ. զգալ թաւ թրի, զգացրնել թրի, զգացրնել թաւ թրի:

120. Որո՞՞ք սեւը.

Այրիլ, այրիլ, այրելիլ, Բերիլ, բերուիլ, չերիլ տալ, Տանիլ, տարուիլ, տանիլ տալ: Կարելի, կտրիլ, կտրելիլ, Ծռել, ծռիլ, ծրուելիլ, Թափել, թափուիլ: Խօսիլ, խօսուիլ, խօսեցրնել, խօսիլ տալ: Փրցընել, փրցընելիլ, Հաշուել, հաշուիլ, հաշւելիլ: Ծակել, ծակիլ, ծակուիլ, ծակել տալ, ծակեցընելիլ, կանչել, կանչելիլ: Դողալ, դողացընելիլ:

121. 'Ի'ր բայերուն քովը անորո՞՞ց դերբայը եւ սեւը փակագծի մէջ:

Փոքրիկը մտցուց ննջարան, մերկացուց, գիշերնոցը անցուց անոր վիզը, դրկեց, համբուրեց ու պառկեցուց:

Կամա՛ց վերցուր, վախցուցիւ ինծի. փախուցե՞ր ես, ի՞նչ է:

Ժամուան մը չափ ձին վազցուցի, ժամուան մը չափ ալ ձիապանին վազընել տուի. հոգը տանիլ տուի ախոտ, թէ՛ և գիտեմ, որ պէտք է՛ր խելո՞՞ կենդանիին աշխարհի վաղիլ տալի:

Աւելի կը գերադասէր բանտին մէջ չարչարելով մեռնիլ տալ, քան մէկ անգամէն մեռընել տալ ու վերջացընել:

Արտագրութիւնս ընկերոջս վերջացնել տուի, իսկ ինքս դացի հօրս օգնելու և ապրանքներուն փոխադրութիւնը վերջանալ տուի:

Պարտէզին պտուղը կանգուն մը հտ քաշել տուին և տարածութիւնը շաշնդոցին. քովի պարտէզն ալ քիչ մը լաշնցնել տուին փողոցին կողմէն. և կարծես հիմա իմ սիրտս ալ լաշնցաւ:

Այս աղուէն երկու օր է, որ այս երես մը բանը կը կարգամ, կը կարգացընեմ, կարգաւ տալ կու տամ, կարգացընել կու տամ, բայց

իզուր, դեռ չնորհքով չի կարողար: Գրեւ տալու համար տյաքան չը-
դրժուարացայ:

Երեսան ի՞նքդ կը կերցընես. թէ՞ կերցնել կու տաս, թէ՞ կերցը-
նել տալ կու տաս. և օրը քանի՞ անգամ ուտել կու տաս:

Զբաղեցուցի, քիչ մը դաւը մոռնալ տըւի, հաքն ալ քրոջը զբա-
ղեցընել արւի մինչև որ բոլորովին մոռցըւեցաւ ինկած ըլլալը:

122. Ուռեհ՝ սեռը.

Խհսեցընել. դարձընել. վազցընել. հասցընել. սիրցընել. կար-
դացընել. մուցընել. գողցընել. հագուեցընել. բարձրացընել. խոշոր-
ցընել. մեծցընել. պարեցընել. բանեցընել. երգեցընել. խաղցընել.
քաւեցընել. գլտորցընել. ծառայեցընել. մօտեցընել:

123. Ներգործական սեռը ի՞նչով կը տարբերի անցողականէն, եւ
ինչո՞վ նման է անցողականին:

124. Ներգործական, կրաւորական եւ անցողական բայերուն մէջ
ո՞րն է ընդհանուր նման յատկութիւնը. եւ ո՞րն է շեղո՞ւ բայերուն ա-
ռանձնայատկութիւնը:

125. Ինչո՞վ կը տարբերի անցողական բայը անցողակերպ բայէն:



ԵՍՐՈՒՆՈՐԴ ԽԱՍՈՒՄ

ԽՆԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ

Ա. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

Ա. Խնդիր կ'ըսենք նախադասութեան այն անդամներուն, որոնք ստորոգիչի արտայայտած իմաստը լրացնելու կը ծառայեն: Խնդիր ու խնդրել մեր հին լեզուով փնտռել ու կանչել ըսել է. այսինքն ըստորոգիչի փնտռած բառը իր ըսելիքը ամբողջացնելու համար:

Խնդիր կ'ըլլան ամեն տեսակի անունները կամ իբրեւ անուն առնելու գերբայներն ու դերանունները:

Խնդիրները կը բաժնանք երկու տեսակի. կ'անուններ և սեռի խնդիր, եթէ կապուած է բայի սեռին. կ'անուններ բնութեան խնդիր, եթէ կապուած են բայերու արտայայտած մասնաւոր իմաստին, այսինքն անոնց ներքին բնութեանը:

Սեռի խնդիր կ'ըստանան մէյ մը ներգործական կամ անցողական մէյ մըն ալ կրաւորական սեռի ստորոգիչները:

Բ. Ներգործական բայը ամենէն գործունեայ սեռն է բայերուն մէջ և անոր գործողութիւնը միշտ կ'անցնի ուրիշի մը, կ'ազդէ ուրիշի մը, և տեսակ մը անհրաժեշտ պահանջ կայ անուանելու ամեն անգամ այդ ուրիշը, այն իրը կամ անձը, որ ենթարկուած է ներգործական բայի այդ ազդեցութեանը. և առանց այդ բառին կարծես բաց ու պակաս կը մնայ նախադասութեան միտքը: «Յակորը կը ծախէ». ամենքս կ'ըսպասենք, որ ըսուի՝ թէ ի՛նչ կը ծախէ. պիտի աւելցնեմ՝ «Յակորը լրագիր կը ծախէ», որ ծախել ներգործական բային ամենէն կարեւոր պահանջը գոցուի և նախադասութեան տանելու արժանի լրանայ:

Ներգործական բայերու համար ըսուածը կը վերաբերի նաեւ անցողական սեռի բայերուն, որոնց գործողութիւնը նմանապէս ենթակայէն կ'անցնի ուրիշի մը, թէեւ միջնորդապէս: Երկուքն ալ ազդող, ներգործող սեռեր են:

Ներգործող ստորոգիչ ունեցող հոսիսադասութեան մէջ այն բա-
ռը, որ իր վրայ կը կրէ ստորոգիչին արտայայտած գործողութիւնը
և կը ներկայանայ իբրեւ անմիջական ու ամենակարեւոր լրացումը
այդ ներգործական ստորոգիչին, կ'անուանենք ներգործական սեռի
խնդիր, այսինքն խնդիր մը, որ ստորոգիչի ներգործող ըլլալուն
հետ է կապուած, ստորոգիչի սեռին փնտռածն է:

Ներգործական սեռի խնդիրը կը դրուի ուղղական հոլով, անյօդ
կամ ամեն տեսակի յօդերով, եզակի կամ յոգնակի, բայց կցորդ ըս-
տանալ չի կրնար: Եթէ անձ է՝ կը պատասխանէ միշտ ստորոգիչին
վրայ դրած ո՞վ հարցին. եթէ իր է կամ երեւոյթ մը՝ կը պատասխա-
նէ ստորոգիչի վրայ դրած ի՞նչ կամ ի՞նչը հարցին: Ճշովը մօմը մա-
րեց. ի՞նչը մարեց: Ճեղքեցին մօմ վառեցին. ի՞նչ վառեցի: Վա-
պոցները պատրաստեցին, ի՞նչը պատրաստեցին: Ճես այդ մարդիկը
կ'ատեմ. ո՞վ կ'ատեմ: Ճիւրերը ներս հրաւիրեցինք:

Միայն անձնական դերանունները բացառութիւն կը կազմեն:
Անոնց ուղղական հոլովները կը գործածուին միայն իբրեւ ենթակայ,
այնպէս որ երբ այդ դերանունները իբրեւ սեռի խնդիր հարկ ըլլայ
գործածելը, ուղղական հոլովի փոխարէն կը դնենք անոնց տրական
հոլովը, մասնաւորապէս առաջին ու երկրորդ գէմքերուն մէջ. փո-
խանակ ես, դու, մենք, քու, ձեռքերուն կը դնենք ինծի, քեզի, մեզի,
ձեզի: Քեզի դեկավար ընտրեցին մեր խումբին. Ճես շատ կը յար-
գեմ ձեզի: Ճինծի տասնապետ նշանակեցինք:

Երրորդ գէմքը անձնական դերանուններու՝ ինքր և իրենք, ինչպէս
և ասոնք փոխարինող աս, այս, ամ ցուցական դերանունները, սովո-
րաբար ուղղական հոլով կը դրուին, երբ ներգործական սեռի խնդիր
են, միւս անուններուն նման: Բայց առաջին ու երկրորդ գէմքի անձ-
նական դերանուններու ազդեցութեան տակ հետզհետէ աւելի յաճախ
սկսած է գործածուիլ նաեւ տրական հոլովը իբրեւ սեռի խնդիր: Ան
մեզի կը սիրէ, մենք ալ իրեն (ինքը) կը սիրենք. Ճիրեն ալ հրաւի-
րած էին, բայց չեկաւ. Ճեանձն կ'առնեն, եթէ իրենց ընտրենք:

Գ. Երբ նախադասութեան մը ստորոգիչը կրաւորական բայ մըն
է, ենթական իսկապէս ցոյց կու տայ ո՞չ թէ գործողութեան կատա-
րողը, այլ ընդհակառակը գործողութիւնը կրողը, գործողութեան են-
թարկւողը: Գործողութիւնը կատարողը կ'ըլլայ սեռի խնդիր մը, որ
միշտ բացառական հոլով կը դրուի ու կը կոչուի կրաւորական սեռի
խնդիր, որովհետեւ կրաւորական ստորոգիչին որոնած անհրաժեշտ լրա-
ցումն է: Ճեյս հեղինակը շատ է սիրուած մօզովուրդէն: Ճինք ա-
ռաջ կը քննէինք բազմութենէն. Ճերէկուն ճամբորդները կողոպ-
տուեր են աւազակներէն. Ճայրս շատ կը յարգուի իր պաշտօնակից-
ներէն:

Ամեն կրաւորական նախադասութիւն կարելի է վերածել ներգործական նախադասութեան՝ բացառական սեռի խնդիրը դարձնելով ենթակայ և ենթական ալ՝ ներգործական սեռի խնդիր։ Այսինքն գործողութիւնը մէկէն միւսը անցնող անցուն բայերով կազմուած նախադասութիւնները կրնանք ըսել երկու ձեւով՝ ներգործաբար և կրաւորաբար։ «Դատաւորը խնդիրքս չընդունեց» = Խնդիրքս չընդունուեցաւ դատաւորէն»։ «Մենք շատ կը սիրենք քու եղբայրդ» = Քու եղբայրդ շատ կը սիրուի մեզմէն»։ «Շուները կը հալածէին գայլը» = Դայլը կը հալածուէր շուներէն»։

Եւ քնական հակադրութիւն մը կայ նոյն բայի ներգործական ու կրաւորական ձեւերով կազմուած նախադասութիւններուն մէջ, երբ ենթական ու սեռի խնդիրները նոյն մնան։ «Փաստաբանս ընդունուեցաւ դատաւորէն» և «Փաստաբանս ընդունեց գատաւորը»։ «Մեր խումբը յաղթեց է իր հակառակորդները», և «Մեր խումբը յաղթուեց է իր հակառակորդներէն», «Ես չեմ սիրած այդ մարդը» և «Ես չեմ սիրուած այդ մարդէն»։

126. Զատե՛՛ նախադասութիւնները եւ ընկզձե՛՛ ներգործական սեռ-
տողիչները եւ անոնց սեռի խնդիրները։

Լսեցի, որ քեռայրդ դաւառապետ են նշանակեր. այդ լուրը իսկոյն աւետեցի մեր խնայողներու։ Յայտնէ՛՛ իրեն սրտագին խնդակցութիւնըս և բոլոր սրտովս կը շնորհաւորեմ իր պաշտօնին բարձրացումը։ Եւ քեզի ալ կը մաղթեմ աւելի մեծ յաջողութիւն։

Կինը գլուխը կախեց, կարծես բան մը կը մտմտար. հանեց կամաց մը թաշկինակը ու սրբեց աչքերը ծածուկ կերպով, որ ուրիշները չի նկատեն. նորէն վերցուց քովի գիրքը և սկսաւ թղթատել։

127. Այս գիրքը իմ կարդացած գրքերուս մէջ լաւագոյն գիրքը կը համարեմ։ Ես կարդալը շատ կը սիրեմ, բայց գիտական գրութեանքները կը գերադասեմ. մանաւանդ այն երկերը կը նախընտրեմ, որոնց ընթերցումը պաշտօնս կը պարտադրէ. ժամանակ քիչ ունիմ գեղարուեստական ազատ ընթերցման, թէև այդ ազատ ընթերցումը շատ կարեւոր կը նկատեմ ինքնագարգացման համար։

128. Դուռն իղուր այդ մարդը շատ երիտասարդ կը կարծես. թէև անցած օր անիկա մեղի քարտուղար ընտրեցինք, բայց կը կարծեմ սխալ գործեցինք։ Ճիշդ է, որ ան ինքզինքը մեծ բան մը կ'երեւակայէ, բայց պատճառ մը չունինք, որ մենք ալ այդ մեծամիտը կա-

տարեալ մարդու մը տեղ դնենք: Քարտուղարութիւնը որոշ փորձառութիւն կը պահանջէ և քարտուղար ընտրուող մը խօսուածներուն գլխաւորն ու երկրորդականը իրարմէ պէտք է զանազանէ: Էս գոնէ բոլորովին անբաւարար կը նկատեմ անոր կազմած առաջին արձանագրութիւնը: Իր լեզուն ալ չհաւնեցայ, իր շարադրական շնորհքն ալ չափազանց համեստ կ'ենթադրեմ:

129. Մարդիկ կը սիրեն աշխատութիւնը. որովհետեւ աշխատելը մեր կարողութիւնները կը մարզէ. աշխատել կը նշանակէ իր ուժերը գործադրել, իսկ ուժերը գործադրելի մեղի հաճոյք կը պատճառէ, մանաւանդ եթէ հնար ունենանք և ընդհատել կարողանանք աշխատանքը, երբ որ մեղի յոգնեցընել սկսի: Անախորժ զգացում է յոգնիլը. յոգնիլ տանջուիլ ըսել է և տանջուիլ ոչ ոք չի ցանկար ընականաբար:

130. Կը խնդրեմ, որ այս կապուցը տանիս մեղի, ետքն ալ դաս ու ձեռք սովորական ժամադրաւայրը տանիս մեղի — Կու գամ յայտնելու քեզի երեւելի լուր մը. մեր գասարանը գասապետ ընտրեց քեզի — Երէկ մեծ պատուով և շնորհքով ընդունեցին մեզի, թէ և ընդհանրապէս անոնք շատ երես չէին տար մեզի — Ինչո՞ւ պիտի պաղ վերաբերուէին ձեզի հետ, քանի որ գիտեմ թէ կը յարգեն ձեզի — Գիտեմ որ կը սիրես ինծի. բայց մեծ ուրախութիւն պիտի պատճառէիր ինծի, եթէ քիչ մըն ալ բանի տեղ դնէիր ինծի:

131. Նախադասութիւններ կազմե՛ հետեւեալ բայերով, որոնք անպատշաճ սեռի խնդիր ունենան:

Ուտել. կրել. պատուել. չարչարել. հատուցանել. վերցընել. հագնիլ. հագցընիլ. դիպել. քաղել. մոռնալ. բացատրել. կանչել. տանիլ:

132. Կազմե՛ նախադասութիւններ, ուր հետեւեալ բառերը գէթ անգամ մը իբրեւ սեռի խնդիր գործածուին:

Քու հայրդ. այդ կինը. մեր բնկերը. դերձակս. ես. դուն. ինքը. անիկա. աս փոքրիկը. մեծերը. կարմիրը. ուրախութիւնը. ութը. վիշտը. խնդալս. գրածդ. եկողը. ծախողը. հասածները:

133. Բաժնե՛ նախադասութիւններ, ընդգծե՛ կրաւորական ստորոգիչները եւ անոնց սեռի խնդիրները:

Երէկ գիշեր մենք հրաւիրուած էինք նոր վարչութիւնէն ժողովի — Այս ձմեռ բարեկամդ շատ տանջուեցաւ յօղացաւէն — Արտերը արեւէն ու հովէն զեղին — Կարմիր էին ներկըներ — Փտտած աախտակի կտորներ նետուած էին ծովափը ալիքներէն — Ծիւղերը մեղմ կ'օրօրուէին զեփիւռէն — Ազնիւ մարդը կը յարգըւի ամենքէն — Նաւակը հոսանքէն տարուեցաւ մինչև կամուրջին տակը — Մեղմէ իսկոյն շնորհաւորական հեռագիր մը քաշուեցաւ իր հասցէին — Դեղին տերեւները կը թափէին աշնան պաղ շունչէն — Գողերը փախչելու ատենն թռ-

նրեւեր են ոստիկաններէն: — Զուրը կազմուած է երկու տարրերէ՝ ջրածինէ ու թթուածինէ: — Ամբողջ գիշերը հալածուեր եմ ես մէկը միւսէն յիմար երազներէ: — Ամպերը կը մղուէին արագ հիւսիսային ցուրտ քամիէն: — Ես ալ վարակուեցայ քու ուրախութենէդ: — Դըժուար է, որ մարդ չհամոզուի քու փաստերէդ: — Մեծ ու պզտիկ կ'ազդուին միշտ անձնըւէր ու ազնիւ մարդոց վարմունքէն: — Այս տեսակ սքանչելի դործ մը դեռ ստեղծուած չէր արձանագործի մը մատներէն: — Եւ հերոսը սպաննուեցաւ պատահական դնդակէ մը:

134. Դարձո՛ւր վերի կրաւորական նախադասութիւնները ներգործական նախադասութեան:

135. Գրած ներգործական նախադասութիւններդ նորէն դարձո՛ւր կրաւորականի, միայն ենթական նորէն ենթակայ պահելով, Ուր, որ անցուես իմաստը յարմարի:

136. Այս նոր ստացած կրաւորական նախադասութիւններդ կրկի՛ն դարձո՛ւր ներգործականի, իմաստով իրար համարժեք:



Բ. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Ա. Երբ ստորոգիչ բայը ենթակայի այսինչ վիճակի ըլլալը կամ այսինչ վիճակի դառնալը կը յայտնէ, այդ վիճակը անուանող բառը կը դրուի ուղղական հոլով և կը կոչուի վիճակի ուղղական խնդիր: «Ընկերս ուսուցիչ է»։ «Այս սղաքը շատ առողջ են»։ «Պարոնն ալ ներկայ էր»։ «Ամիս մը ծառայ վարձուեցայ»։ «Ըսածդ սխալ կը նկատեմ»։ «Ինծի գինեմով կը կարծէին»։ «Երկու ղինուոր պահակ կարգեցին»։ «Մարդ ըրէ՛ սա տղան»։

Վիճակի ուղղական խնդիրը կը դրուի եզակի, եթէ նախադասութեան ենթական եզակի է: Եթէ ենթական յոգնակի է՝ վիճակի ուղղականը կրնայ դրուիլ յոգնակի ալ, եզակի ալ: Ընդհանրապէս եզակի կը դրուին անոնք, որոնք իրենց վրայ ուրեւէ յօդ չունին: «Ներայրս ներս արդէն ծեր են»։ «Բոլոր ներկաները կլին էին»։ «Աս երեսաներն ալ մարդ դարձան»։ «Երեք սարկաւազները վարդապետ ձեռնադրուեցան»։ «Այսօր մեր տունը ամենքն ալ հիւանդ են»։ «Այս պարոնները ձեր ուսուցիչները պիտի դառնան»։ «Բոլոր ներկաները իմ հիւրերս էին»։

Բ. Ստորոգիչ բայը ուղղական հոլով կը պահանջէ այն բառը, որ ենթականի ուր գտնուիլը կամ զործողութեան ուրտեղ կատարուիլը

կամ գործողութեան ուր հասնելիքն ու յանգիլը ցոյց կու տայ. նա-
խադասութեան այդ բառերը կը կոչուին տեղի ուղղական խնդիր չՀայրս
տունն է՝. «Կապոցը բազմոցին վրան էր»։ «Այն տարին ես ձեր բովն
էի»։ «Մեր պղտիկը գիւղը կը մեծնայ»։ «Մօրաքոյրս ծնած է եգիպ-
տոս»։ «Պարսեգը վայրի թուփեր էին բուսեր»։ «Կառապանը խանութ
մտաւ»։ «Օտարականը մեր տունը բերինք»։ «Աղջիկը վաղեց սեղանակ»։

Գ. Գործողութեան տեղողութիւնը կամ գործողութենէն իվեր
անցած ժամանակի տեղողութիւնը ցոյց տալու համար գործածուած
ժամանակի անուանները նախադասութեան մէջ կը դրուին ուղղական
հոլով և կը կոչուին տեղողութեան ուղղական խնդիր։ «Գալըս երեք օր
է»։ «Զորս շաբաթ հզաւ կարծեմ հիւանդանոցէն ելլելոք»։ «Ամիսներ ըս-
պասեր եմ քեզմէ յուրի»։ «Ակընքարք մը ժամանակ չունիմ»։

137. Հետեւեալ օրինակներուն մէջ ենթակաները ընդգծե՛ք՝ մեկ գծով,
ուղղական բնութեան խնդիրները երկու գծով։

Վաճառական է իմ հօրեղբայրս։ — Վաճառականը իմ հօրեղբայրս
է։ — Եղբայրս է տնիկաւ։ — Անիկա է եղբայրս։ — Անոնք են ծանօթ-
ներս։ — Այս զամբիւղները կարծեմ իմ զրկածներս են։ — Ատիկա իմ
առածս չէ։ իմ առածս հոս չէ։ — Այս մարդը հարուած է։ Հարբածն
ալ մարդ է։ — Ի՞նչ է հիմա քու ուղածդ։ — Դրելը իմ պարտականու-
թիւնս էր։ — Իմ պարտականութիւնս էր գրելը։ — Մուծին մէջ զար-
նելը քաջութիւն չէ։ — Ներկայ եղողը ես էի։ Ներկաները բոլորն
ալ ուրախ էին։ — Ձեր աղնըութիւնը կարծեմ ներկայ չէր։ — Ատի
կայ, որ սիրել է։ սիրել կայ, որ առել է։ — Գէշ է այդ պարագա-
յին հակառակիլը։ — Գէշը չհակառակիլն է։ — Աս մարդը մուրացիկ
մըն է։ — Աս մուրացիկն է այն մարդը։ — Այս մարդն էր այն մու-
րացիկը։ — Մուրացիկ մարդ մըն է տնիկաւ։ — Քու շնորհակալութիւ-
նդ ինծի պէտք չէ։ — Ատեն մը սովորութիւն էր ամենուն ձեռքը
համբուրելը։ — Մեր գիւղի սովորութիւնը մեծերուն ձեռքը համբու-
րել էր։

138. Կետեւուն տեղը յաւմար ուղղական հոլով մը դիր։ Երէ դրածդ
ենթակայ ըլլայ՝ տակը գիծ մը քաշե, երէ բնութեան խնդիր ըլլայ՝ երկու
գիծ քաշե։

Հարեանս ... եղաւ։ — ... բարեկամս եղաւ։ — Լսեցի, որ ...
բժիշկ պիտի դառնայ։ — Լսեցի, որ բժիշկը ... պիտի դառնայ։ —
Անիկա ամբողջ կեանքը ... մնաց։ — ... անկատար մնաց։ — Մարդք
... էր ծներ, ... ապրեցաւ և ... մեռաւ։ — Գերիները ... ինկան։
— ... դերի ինկան։ — Հիւրերը ... եկան։ — ... մեղի հիւր եկան։
— Օր կու գայ՝ թշնամին կը դառնայ ... և բարեկամը կը դառնայ ... :

139. Բաժնե՝ նախադասութիւնները, ընդգծե՛ հերպայաները մեկ գիծով, ուղղական բնութեան խնդիրները երկու գիծով:

Երկար տարիներ տղաս փաստաբան ըլլալ կ'ուզէր, գոնէ շարունակ ըսածը առ էր: Այս երկու տարի է՝ փաստաբանի անունը լսել չուզեր: Թէեւ ասիկա առաջին վայրկեանէն զարմանալի կ'երեւայ, բայց երբ տղուս բնաւորութիւնը քիչ մը խորէն կը դիտեմ, իր վարմունքը ինծի բնական կը թըւի. անիկա զինուոր է. իր հոգիին մէջ և վերջը-վերջը սպայ պիտի ըլլայ:

Այս մարդը դերասան կը թըւի, բանաստեղծի ալ կը նմանի, թէև ո՛չ մէկն է, ո՛չ ալ միւսը: Այո՛, վրայէն բնաւ չերեւար, Խր խանութպան է. կրնայի նոյնիսկ իրաւաբան համարել, վարժապետ ալ կրնայի կարծել: Յաճախ շատ դժուար է՝ արտօքինէն մարդուս ինչ ըլլալը գուշակելը:

140. Ես ալ պիտի երթամ կամաւոր արձանագրուելու: Յոյս ունիմ շուտով տասնապետ կարգէն ինծի, կամաց-կամաց բուն մը դառնամ. գուցէ մարզիչ ղրկեն ինծի տեղ մը, կարելի է հսկիչ ընտրեն զօրանոցին մէջ կամ ուրիշ պաշտօն մը տան ինծի: Կարելի է ենթասպայ կարգուիմ. այն ատեն քեզի օգնական կը վերցընեմ. քու ծառադ ալ նորէն կը վերցընենք մեզի ծառայ:

Այդ ուտիկանը մեր տունը կը բնակի. յաճախ կու գայ աշխատանոցս, կը նստի հոն ու կը պատմէ ինծի, թէ ինչպէս ինքը պատերազմ է դադար, ինչպէս ինքը պատերազմ է ըրած. թէ պատերազմը ի՞նչ սարսափելի բան է՝ կը նկարագրէ շատ մը դէպքեր ու մանրամասնութիւններ, թէ ինչպէս անդամ մը պաշարեր են թշնամիներուն գունդը, թէ ինչպէս կը մագլցէին լեռները. երբեմն օրերով ծածուկ կը պահուէին անտառը, ինչպէս հագուստներով կը կտրէին, կ'տնցնէին գետերը: Ուրիշ անգամ մը հարիւրներով զինուոր գերի են բռներ. դաշտերը, կ'ըսէր, լեցուն էին վիրաւորներով:

141. Ներէ՛, սիրելի՛ս, որ ուշացուցի պատասխանդ: Երկու օր բացակայ էի քաղաքէն. նոր եմ վերադարձեր տեղս: Ուզած գործիքներդ տեսայ. ընտիր տեսակը գէշ չէ, գիներն ալ խելքի մօտիկ են. միացածը անպէտք համարէ: Աւելի աղէկ կ'ըլլար սակայն, որ ինքդ դայիբ հոս և հաւնածդ ինքդ ընտրէիր: Այդ առիթով ամբողջ օր մըն ալ մէկտեղ կ'անցընէինք, կարօտեր եմ քեզի ալ. ընտանիքդ ալ: Եթէ գալու ըլլաս՝ տղադ ալ հետդ կը բերես. կը կարգադրենք նաև դպրոցին հարցը, եթէ մեր վարժարանը յարմար գտնես: Այդ մասին քեզի ուրիշ խօսելիքներ ալ ունիմ, բայց այդ ամենը գրելու տրամադրութիւն չկայ. քիչ մըն ալ տկար եմ, ճամբին պաղ եմ առած: Կը վերջացընեմ երկտողս, որ շիտակ տուն երթամ ու անկողին մը տնեմ. կապուրուելու ամենէն կարճ ճամբան ասիկա է: Շատ ու շատ

բարեններս տո՛ւր տիկնոջդ: Առաջարկս ընդունէ՛ և չուտով եկո՛ւր մեր աշխարհը. անշուշտ երկու տող կը գրես նախապէս, որ դէմդ գամ: Դու սրտագին բարեկամդ՝ Օշին:

142. Վերի ցամակէն արსագրէ՛ առանձին այն ցախադասութիւնները, ուր վիճակի բնութեան խնդիր մը կայ. րնդգծէ՛ այդ խնդիրը:

143. Արսագրէ՛ ցոյն ցամակէն տեղի բնութեան խնդիրներ ունեցող ցախադասութիւնները:

144. Արսագրէ՛ առանձին տեղութեան բնութեան խնդիրներ ունեցող ցախադասութիւնները ցոյն ցամակէն:

145. Հետեւեալ ցախադասութիւններուն ուղղական հոլով բնութեան խնդիր մը աւելցո՛ւր:

Զիւտորները վերջապէս հասան: — Նստեր էին, երեքը միասին: — Ես ծնած եմ 1920 թըւին: — Ամբողջ ընտանիքով ելեր էին պտոյտի: — Բացակայ էի տունէն: — Բոլորը միասին ընտրեցին եղբայրս: — Մեր գիւղին համար հօրեղբայրս ընտրուեցաւ: — Անոնք երեքն ալ իրենց կամքով գրուեցան: — Այս օրիորդը ... է: — Այս պատանին ... պիտի դառնայ: — Երբ դպրոցս աւարտեմ՝ ... պիտի դառնամ:

Գ. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Ա. Նախադասութեան մէջ տրական հոլով կը գրուին բառերը, որոնք ցոյց կու տան այն տանձը, այն առարկան կամ այն երևոյթը, որուն կ'ուղղուի, որուն կը պատկանի, որուն կը դառնայ, որուն կը միտի ստորոգիչի կատարած գործողութիւնը: Ատոնք կը կոչուին միջոցաբան խնդիր:

Բնութեանը զարկաւ սիդանին: Վատուն մօտեցաւ կրակին: Բազմութիւնը սկսաւ գալ քրիստոնէութեան: Մարդը մեծ փառքի հասաւ և հիմա տիրապետութեան կը ձգտի: Իր հարցումը մեզի էր: Ենչ ըսեմ իրեն: Աշուր կը պատկանէր կնոջը: Այդին միաց տղուն, իսկ միւս կալուածները անցան միւս ժողովուրդներուն: Ամենքն ալ բաժանորդ գրուեցան թերթին: Արժանի եղաւ պովասանքին:

Միտումի արականը կը գործածուի նաև համար կցորդով և ցոյց կու տայ, թէ որուն համար կատարուած է գործողութիւնը: Կօշիկ գնեցի եղբօրս համար. Բժիշկ են կանչեր հիւանդին համար. Անոր պահարան մը շինեյ տըւի դրքերուն համար:

Միտումի տրականը մասին, շուրջ, վրայոք, վերաբերմամբ կցորդ-
ներուն հետ ցոյց կու տայ այն անձը կամ առարկան, որուն շուրջը
կը դառնայ նախադասութեան դատողութիւնը: Ճշդեկագիր մը կար-
դաց դպրոցներու առողջապահական վիճակի մասին»։ Այդ գողութեան
վրայօք այլընդայլոյ լուրեր կը պտտին»։ Մեր խնդրին շուրջ զեռ
շատ ջուր պիտի ծնծուին»։

Բ. Երբ անորոշ դերբայը դրուած է տրական հոլով ցոյց կու տայ
նախադասութեան մէջ կատարուած գործողութեան նպատակն ու դի-
տաւորութիւնը և կը կոչուի նպատակի քական խնդիր: Ճեղքը եմ բա-
ցատրելու»։ Գիւղ պիտի երթայ քիչ մը հանդստանալու»։ Ոչխարը
տարաւ ջրելու»։ Շուկայ դրկեցինք ծախելու»։

Նպատակի տրական խնդիրներն ալ կրնան գործածուիլ համար
կցորդով, առանց իմաստը փոխելու: Առանց կցորդի աւելի աշխուժ է,
կցորդին հետ աւելի յստակ է ու շեշտուած է նպատակը: Ճեկայ քեզի
տանելու=Եկայ քեզի տանելու համար»։ Պղտիկը դպրոց գրին ուսա-
նելու=Պղտիկը դպրոց գրին ուսանելու համար»։

Համար դնելը պարտաւորիչ է երկու պարագայի: 1) Երբ նախա-
դասութեան մէջ երկու առտիճանի նպատակ կայ՝ նպատակին նպա-
տակը պէտք է դրուի կցորդով. «Եկեր էր հետս խօսելու քիչ մը մխի-
թարուելու համար»։ «Ձեռնարկից մանրուք ծախելու կերպ մը ապրե-
լու համար»։ 2) Երբ տրական հոլով անորոշ դերբայը իրեն կապուած
յառուկ բառի, ունի իբրեւ մասնաւոր խնդիր. «Տունը ծախեց կեանքը
աղատելու համար»։ Վրկից իր փեսան ինքը քաղաքէն չհեռանալու
համար»։

Այս անորոշ դերբայի տրականները յաճախ կը փոխարինուին ի-
րենց բայարմատով կամ բայանունով, միշտ տրական հոլովի և միշտ
նպատակը ցոյց տալով. «Պիտի երթամ հանգստի (հանդստանալու)».
«Ելաւ սարի (պարելու)»։ «Հրաւիրած էին ինձոյքի (խնձոյքը ընելու)»։

Նպատակի տրական խնդիրը համար կցորդով, երբ ստացական
յօդ մը ունի իր վրան (ուս, ուղ, ուն, նուս, նուդ, նուն), փոխանակ
նպատակի պատճառը ցոյց կու տայ կատարուող գործողութեան: Շատ
տառապեցաւ հասնելու համար» և «Շատ տառապեցաւ հասնելուն հա-
մար»։ «Իրար է անցեր ծախելու համար» և «Իրար է անցեր ծախե-
լուդ համար, ծախելուս համար»։ «Ամենքն ալ կ'ըշտապէին շոգինաւը
չփախցընելու համար»։ և «Ամենքն ալ կոտորուած էին շոգինաւը
փախցընելուն համար, փախցընելուս համար, չփախցընելուս հա-
մար»։

Գ. Տրական հոլով կը դրուին հեռ կցորդով այն բառերը, որոնք
կը գործակցին ենթակային կամ սեռի խնդրին, կամ կը փոխադար-
ձեն ենթակայի գործողութիւնը, սակայն ամփոփուած չեն ենթակային

կամ սեռի խնդրին մէջ. այդ բառերը կը կոչուին գործակցութեան
ՏՐԱԿԱՆ խնդիր: Մայրը ներս մտաւ պղտրկներուն հետքն՝ ներս մը-
տան մայրն ու պղտրկները. «Տունը ընկերովի վարձեր էինք դեր-
ձակին հետքն» մենք ու դերձակը. «Տղաքը իրենց ընկերներուն հետ
դնդակ կը խաղային»: «Ժամացոյց մը գնեցի իր շղթային հետքն»
գնեցի ժամացոյցն ու շղթան. «Վէճի բռնը. եղանք այդ սրկային հետքն»
«Ես ու սրկան. «Բարեկամացանք իրարու հետքն» Ես ու ան. «Հար-
ցը կապ ունի իմ արժանապատուութեան հետքն» հարցը և արժա-
նապատուութիւնս կապ ունին:

Տրական հոլովին վրայ հետ-ի փոխարէն առանց կցորդը գործա-
ծելը կը շեշտէ գործակցութեան բացակայութիւնը. «Ստիպուած էինք
մեկնելու առանց քեզին»:

Դ. Տրական հոլով կը դրուին այն բառերը, որոնք իրրեւ չափ
են առնուած նախադասութեան մէջ և կը ներկայանան իրրեւ չափի
ՏՐԱԿԱՆ խնդիր. և ստիկա կ'ըլլայ գլխաւորապէս երեք պարագայի.

1) Տարիքը տալու ատեն, իրրեւ ժամանակի չափ, այն բառը,
որ կ'անուանէ ժամանակը. «Անդրանիկս եօթը տարու է. իսկ փոքրի-
կըս տասը ամսու». «Հինգ օրուան մանուկ էր դեռ». «Բանի մը տա-
բարուան եղաւ-չեղաւ՝ տարին քաղաք»:

2) Իրրեւ արժէքի չափ, այն բառը, որ կ'անուանէ դրամական
միութիւնը. «Երկու արծաթի դնեցին». «Հինգ ֆրանկի առինք». «Նախ
քչել կ'ուզէ երեք ոսկիի, բայց վերջապէս ոսկիի մը ձգեց վրանիս»:

3) Իրրեւ հատուածի չափ, այն բառը, որ կ'անուանէ ստացուած
տեսակը. «Բաժնեցինք գլուխներու». «Խնձորը կտրեց հինգ մասի».

Ե. Տեղի ՏՐԱԿԱՆ խնդիր կ'առաջանայ կրճատման հետեւանքով և
երկու ձեւով.

1) Երբ մեզ ու վրայ ուղղական հոլով տեղի խնդիրները կը կըր-
ճատուին տրական հոլովի մը ետեւէն. «Մտաւ միաց շրթունքին
(վրայ)». «Կը թափառէինք սարերուն (վրայ կամ մէջ)». «Բազմու-
թիւն շատ կար հանդէսին (մէջ)»:

2) Երբ կը զեղջըւին տրական հոլովի մը ետեւէն եկող «տունը»,
«խանութը», «գիւղը» կամ «քաղաքը» կամ նման տեղը որոշող ուղ-
ղական հոլով բառ մը. «Գիշերը պիտի մնանք Միլոսեաններուն (տու-
նը)». «Ծաշին մեղի էին (մեր տունը)». «Մտնեմ անդամ մը հացագոր-
ծին (խանութը)». «Ամառը կ'անցնիմ նաև ձեզի (ձեր գիւղը)»:

146. Բաժնե՝ նախադասութիւններու եւ ընդգծե՝ ՏՐԱԿԱՆ հոլով
խնդիրները:

Քար մը նետեց ծառին, իրրեւ թէ նշան առնել կ'ուզէր թռչու-
նին, բայց քարը դպաւ գիմացի պատուհանին ու կտրեց ապակին:

Հիմա մարդը եկեր է մեզի ու կը դանդաժի հօրս: Վախում՝ խնդիրը հասնի տուգանքի:

Նայեցայ սեղանին և ակամայ ձեռքս երկնցուցի վրան դրուած նոր ու սիրուն հատորին:— «Այս գիրքը որունն է», հարցուցի ընկերներուս:— «Կը պատկանի մեր ուսուցչին. բերեր է, որ կտորներ կարդայ դասարանին». պատասխանեցին ընկերներս ինձի: Եւ իրաւ ուսուցիչը կարդաց մեզի ամբողջ գլուխ մը, որ կապ ունէր մեր այսօրուան դասին և նախորդ դասերու նիւթին:

147. Թշնամին երբ կը հասնի քաղաքին, կը տիրէ խկոյն շրջակայ փոքրիկ բարձրութիւններուն և առանց ուշ դարձնելու բուռն դիմադրութեան կը պատրաստուի յարձակման: Մեքենաներ կը մօտեցնեն պարիսպներուն և անոնց վրայէն նետեր կը տեղացնեն քաղաքը պաշտպանողներուն: Եւ առաջին օրերը ենթարկուած էինք լուրջ վտանգի. շատ վստահանալ չէինք կրնար մեր պարիսպներուն, ո՛չ ալ մանաւանդ ներսը մնացած օտար ստորին: Յոյսերնիս դրեր էինք դուրսէն դալիք օգնութեան և կ'ըսպասէինք սպարապետին, որուն երկու սուրհանդակ զրկած էինք արդէն: Ասիկա յայտնի էր նաեւ մեր թշնամիներուն և ատոր համար ալ դադար չէին տար կռուին և ամեն միջոցներով սարսափ ազդել կ'ուզէին քաղաքին, որ չուտով անձնատուր ըլլայ իրենց: Չափ չկար մեր ուրախութեանը, երբ հեռուն բլուրներուն վրայէն երեւցան պայմանական լոյսերը պաշարուածներու աչքին և նոր ուժ տրւին կռուողներու բազկին. և ընդհակառակը թուլացում բերին թշնամի բանակին:

148. Կազմէ՛ Գախադասութիւններ հետեւեալ բայերով. ուր միտումի տրական հոլով խնդիրներ ըլլան:

Ըսել. նայիլ. դիմել. զարնել. փակցնել. յանձնել. բարեւ տալ. պատասխան տալ. է. էին. մնալ. ձգել. տանիլ. յենուիլ. կապել. նետել. խորհուրդ տալ:

149. Կեանքուն տեղը դի՛ր ստորոգիւցներ, երկու, երեք հաս, որոնք եղած տրական հոլովին պահանջ ունենան:

Այս տունը որո՞ւն ... — Ըսածդ այս հարցին ... — Այդ կովը մեր պողալածառին ... — Սերկեւիլին քաջը ... երկու ֆրանգի.— Վերարկուդ քանի՞ ոսկիի ... — Յուգան ... Գրիստոսը երեսուն արծաթի — Պզտիկ քուրիկդ քանի՞ տարու... — Այս աշնան ես ... տասնընթիւ տարու.— Չմերուկը ... չորս կտորի.— Այդ աշխատանքը ... քու բնաւորութեանդ.— Այս ձեռնարկը ... մեծ ծախքերու.— Բարեկամս ինձի ... գրասենեակի պետին.— Նամակները ... թղթատարին.— Մոմակալը ... սեղանին.— Գրեր է, ինչ որ ... գրչին:

150. Հետեւեալ նախադասութիւններուն մէջ զեղջի՝ տրական հոլովին կցորդները, ուր կարելի է:

Առտուն շատ կանուխ ելայ դասերս պատրաստելու համար:— Ծախեցինք մեր տունը՝ նոր մը շինելու համար:— Աշակերտները թափեցան պարտէզ խաղալու համար:— Նոր տետրակ մը բե՛ր տըւածս արտագրելու համար:— Հագուստս տարաւ արդուկելու համար:— Այս փոքրիկ նըւէրս հաճեցէք ընդունիլ ինձի ուրախութիւն պատճառելու համար:— Մարդը կանչեցինք եղելութիւնը բացատրելու համար:— Իրարու ետեւէ մօտեցան մեզի՝ հայրս ու մայրս բարեւելու համար:— Եկեր էր քաղաք հետը բերած ապրանքները ծախելու համար:— Քաշուեր էր անկիւն մը շարադրութիւնը աւարտելու համար:— Պաշտօնաթղթերը ստանձնեցի պանքայի պաշտօնեային յանձնելու համար:

151. Արագրի՝ եւ տրական հոլովներուն քի՞նք նպատակը ցոյց կու տայ:

Յանձն առաւ տանելու:— Բարկացաւ տարած ըլլալուն:— Համաձայն եղաւ գրելու:— Դրելուն համաձայն եղաւ:— Դրկեցին հագուստներդ մաքրել տալու:— Շատ գոհ մնաց հագուստները մաքրել տալու:— Դրամ տըւիր ծախսելու, հիմա ալ կը բարկանաս ծախսելու:— Նստեր էին բուրդ գզելու:— Կը զարմանար այդպէս արագ բուրդ գզելուն:— Նաւակները ճամբայ ինկան ձուկ որսալու:— Վերադարձին ոգեւորուած էին այդչափ առատ ձուկ որսալուն:— Նշան առի դարնելու, բայց երբ զարկի՝ շատ ամբօջայ դարնելու:— Քեզի ալ բան է պէտք խնդալու, դեռ դո՛ւ ալ ես խնդալուդ:

152. Իւրաքանչիւր նախադասութեան երկու ենթակաճերէն մէկը վերածէ՝ տրական հոլով խնդրի հետ կցորդով:

Ես ու քոյրս նոր նստեր էինք աշխատանքի:— Դուն ու ան իրարու աղէկ յարմարեր էք:— Մտադործն ու աշկերտը առաջ կը վարէին ահագին եղջ:— Փեսայ ու աներ միասին կ'ապրէին քաղաքը:— Կոյրն ու իր շունը դանդաղ առաջ կ'երթային դաշտին մէջէն:— Մարդն ու իր էջը մտան կողմնակի փողոց մը:— Իզուր կռուի բռնեցեցաք դուն ու այդ անպիտան տղան:— Մանասն ու Մինասը հաշտուեր են իրարու հետ:— Պայլերն ու գառները միասին պիտի արածին տպագրայ երջանիկ ժամանակներուն մէջ:— Մայրս ու քոյրերս մեկնեցան ամարանոց:— Որոշ տարրեր և ուրիշ տարրեր կը կապուին իրարու և կ'առաջացնեն նոր մարմիններ:— Ներս կանչեցին բակ կապիկ խաղցընողն ու իր կապիկը:— Ընթրիքի էին հրաւիրուած օտարականն ու իր կինը:— Մէյ-մէկ ողկոյզ խաղող հրամցուցին մեզի և ահագին սերկեւիլ մը:— Կը հեռանար նաւը ու միշտ ետ մնացող իր մուխը:

Դ. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Ա. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Նախադասութեան մէջ այն բառերը, որոնք ցոյց կուտան ենթակայի կամ խնդրի մը ինչէ շինուած, ինչէ առաջացած, ինչէ բաղկացած, ինչ պատճառէ առաջ եկած, ուրկէ սկզբնաւորուած ըլլալը կը դրուին բացառական հոլով և կը կոչուին ծագումնի բացառական խնդիր: «Մարդս ստեղծուած է հողէ»։ «Երկիրս կազմուած է հինգ մայր ցամաքներէ»։ «Աստուած աշխարհքը ստեղծեծ ոչինչէ»։ «Արածանները կ'ըլլան կաւէ, քարէ, պղնձէ»։ «Վառարանէն է այնպէս այտերդ կարմրեր»։ «Բարկուածներէն կրակ կտրեցաւ»։ «Վեր ցատկեց զարմանքէն»։ «Լրագիրներէն տեղեկացայ»։ «Լեռան կողերէն աղբիւր մը կը բղխէր»։ «Հրազդանը սկիզբ կ'առնէ Սեւանի լիճէն»։ «Մարդը անյայտացեր էր սննեակէն»։ «Նամակ եկաւ Յունաստանէն»։ «Դիւսէն բաներ կը հնարէր»։

2. Երբ իր մը կամ անձ մը կ'առանձնացնենք իր նմաններէն, ըլլայ համեմատելու համար, ըլլայ ամբողջի ու մասի կապը շեշտելու համար, այդ ամբողջութիւնը կամ համեմատութիւնը անուանող բառը կը դնենք բացառական հոլով, որ և կը կոչուի զատումնի բացառական խնդիր: «Ներկաներէն ոմանք ելան ոտքի»։ «Այս ապրանքէն այլ եւս չկայ չուկային վրայ»։ «Ձեզմէ և ո'չ մէկը չի կրնար մաղցիլ այս գահալէժը»։ «Ձեր գրիչէն ես ալ գնեցի հատ մը»։ «Այդ հատորէն ես ալ ունիմ»։ «Այս գրքին նոր տպագրութիւնը չատ կը տարբերի իր նախորդներէն»։ «Ես ուժեղ եմ քեզմէ»։ «Դուն մեծ ես եղբօրմէս»։ «Իմ մազերս այս անգամ քսէիններէդ կարճ կտրեցի»։

Բացառական հոլովը զատ, բացի կցորդներուն հետ ցոյց կու տայ ընդհակառակը, ամբողջէն զատուած մասը: «Ճառախօսէն զատ ամենքը համակարծիք էին»։ «Բացի կօշիկներէն վրան գլուխը շնորհքով էր»։

3. Բացառական հոլով կը դրուին այն տեղը ցոյց տուող բառերը, 1) որոնց մէջէն որ ենթական կամ խնդիր մը կու գան ու կ'անցնին կամ կ'ազդեն, 2) ուրկէ որ բան մը կը կախուի, կ'ամրանայ կամ կը բռնէ, և 3) ուրկէ որ գործողութիւնը կ'անցնի տեղ մը, որ նոյն անունը կը կրէ: Այս լրացուցիչ բառերը կ'անուանենք թելի բացառական խնդիր: «Ստքէս գաղափար մը անցաւ»։ «Պարտէզին պատէն ցատկեցինք»։ «Խովէն վտակ մը կը վազէր»։ «Հրացանը կախեց գամէն»։ «Շքանշան մը կախեր էր կրծքէն»։ «Փուշը բռներ էր փեշէն»։

«կը քաշէին տղու ձեռքէն ու ոտքէն»։ «խանութէ խանութ հարցուցինք»։ Ստիպուած էին շարունակ տեղէ տեղ փոխադրուելու»։ «Լեռնէ լեռ հալածեցին»։

Բացառական հոլովը ներս, դուրս, վեր, վար, ասդին ու անդին անուններուն հետ, որոնք կցորդի դեր կը խաղան, կ'անուաննէ կատարող գործողութեան սահման եղող տեղը։ «Սեմէն ներս եղած տաքածութիւնը»։ «Բաղաքի պարսպէն անդին ծածկուած էր խիտ անտառով»։ «Կուրծքէն վար ջուրին մէջն էր»։ «Խելքէ դուրս բաներ կը խօսին»։ «Օրէնքէ դուրս վարուիլ չի կրնար»։ «Իր մասնագիտութենէն անդին բան չի հասկընար»։

4. Բացառական հոլով կը դրուին այն բառերը, որոնք 1) գործողութեան մը սկսելու ժամանակը կ'անուանեն, 2) գործողութիւն մը որքան ժամանակի մէջ կատարուած կամ կատարելի ըլլալը կը յայտնեն և 3) գործողութիւն մը խօսուած վայրկեանէն ինչքան ժամանակ ետքը տեղի ունեցած ըլլալը կը ճշտեն. և կը կոչուին ժամանակի բացառական խնդիր։ «Ձմեռունէ վարձեր էր ամարանոցը»։ «Վաղընէ կ'ըսկսիմ պաշտօնիս»։ «Վարձքդ պիտի բանի ամսագլխէն»։ «Գիշերընէ ամանը կրակին կը դնես»։ «Հինգ օրէն աւարտեցի»։ «Շարաթէ մը պատրաստ կ'ըլլայ»։ «Երկու ամիսէն հագիւ վերջացընէ»։ «Զորս-հինգ օրէն մեր պաշարը կը հատնի»։ «Երկու ամիսէն կու գամ»։ — այսօրընէ սկսած երկու ամիս ետքը, «Երեք օրէն պատասխանդ կ'ըստանաս»։ «Խոստացաւ, որ շաբաթէ մը մեզի կը գրէ»։ «Երեք տարիէն պիտի վերադառնայ»։

Ժամանակը անուանող բացառականը ինք կցորդին հետ ցոյց կու տայ անցած գործողութեան մը տեւողութիւնը որոշ կէտէ մը սկսած։ «Զորս օրէ իվեր մերիններէն լուր չունինք»։ «Դարեր են անցեր ջրհեղեղէն ի վեր»։ «Բաղաք եկած չունէի Զատիկէն իվեր»։ «Սրհաստի էին տըւեր տասը տարեկան ըլլալէն ի վեր»։

Բ. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՈՎ

1. Նախադասութեան մէջ ենթակայի գործածած զէնքը, գործիքը, հարքը, միջոցը ցոյց տրուող բառը կը դրուի գործիական հոլով ու կը կոչուի գործիքի գործիական խնդիր։ «Մեքենայով կը կարէր»։ «Դանակով կտրեց հացը»։ «Հողը կը վարենք գութանով»։ «Աշխարհքը խելքով կը դառնայ»։ «Զիով պտոյտի է գացեր»։ «Ոտքով պիտի երթաս»։ «Պուալով մարդ չես վախցըններ»։ «Աներեսութեամբ հասաւ իր նպատակին»։ «Թարգմանով կը խօսէր հիւրին հետ»։ «Խելքով չի հասնիր քաւ տղուդ»։

2. Տարածութեան մը մէջէն կարելի անցնելը ըսելու ատեն այդ տարածութիւնը անուանող բառը, ինչպէս բացառական, այնպէս ալ գործիական հոլով կրնայ դրուիլ. որով կ'առաջանայ *սեղի գործիական խնդիր: «Գետով անցանք»*. «Կամուրջով պիտի երթային» . «Կարճ ճամբով կտրեցինք» . «Կածանը կ'ուրբէր անտառի միջով» . «Պարտէզներուն ետեւովը կ'անցնէին» . «Քարին տակովը փախու» . «Օդով սաւառնիլ» . «Արեւով մի՛ քալէր»:

3. Երբ գործողութեան մը ամբողջ տեւողութիւնը իբրեւ ամբողջութիւն մը կ'առնենք, ժամանակը անուանող բառը կը դնենք գործիական հոլով ու կը դառնայ ժամանակի գործիական խնդիր: «Փոխ խնդրեցի երեք օրով» . «Արձակուրդ է ստացեր երկու ամսով» . «Լուռ մնացին ամենքը երեք վայրկեանով» . «Ունեցած գումարս պարտք տըւի երկու տարով»:

153. Բաժնէ՛ր Գալսաղառութիւնները, ընդզծէ՛ր ծագումնային խնդիրները մէկ գիծով եւ զատումնային բացառականները՝ երկու գիծով:

Աստուածացիին մեր փողոցը հրապարակէն սկսած, Նախ Զարդուած խիճ բերին մօտակայ քարահանքէն և լեցուցին հաւասար մեր եզերքէն դէմի եզերքը: Ետքը եկաւ քաղաքային հարթիչ մեքենաներէն մէկը: Մեքենային վրայ բանուոր մը իր բարձունքէն կը բանեցընէր անիւը ու մեքենան տեղէն կը շարժէր առաջ ու ետ: Չորս հինգ ժամէն աւարտած էր գործը և մեր փողոցը մէկ ծայրէն մինչև հրապարակը դարձած էր հարթ-հաւասար խճուղի մը: Եւ ահա տակառներով ձիւթ բերին, կտրտեցին, հանեցին տակառէն և հալեցին մեծ կաթսայի մը մէջ: Կաթսային տակի ուժեղ կրակէն չըջապատողներու դէմքերը կասկարմիր էին դարձեր: Կաթսայէն կը հանէին հալած ձիւթը և կը թափէին խիճերուն վրայ: Ձիւթի հոտէն չունչ քաշելը դժուար էր: Մեր քնակարանէն ոչ շատ հեռու բարակ մաղած հող էին յեղուցեր. այդ դիպած հողէն փոքրիկ սայլակներով կը կրէին և սայլակներէն կը պարպէին ու կը սփռէին պողիլ սկսող աստուածին վրայ: Մեր քաղաքի ամենագեղեցիկ փողոցներէն մէկը դարձաւ հիմա մեր փողոցը. ափսո՛ս որ տուններէն մէկ-երկուքը քիչ մը դուրս ելած են երկու կողմի շիտակ գիծէն: Կ'ըսեն թէ քաղաքապետէն հրահանգ է ելած, որ մասամբ քանդուին ու հոս քաշուին այդ շէնքերը փողոցին մէջէն: Մեր նպարավաճառին խանութն ալ աւելի ցած մնաց փողոցին մակերեսէն. այնպէս որ խանութ մտնելու համար, սանդուղի պէս, մարդ պէտք է վար իջնէ փողոցէն:

154. Բացի Ներսէսէն, ընկերներէս և ոչ մէկը չի կրնար մրցիլ ինձի հետ, Նա հմ ամենէն ուժեղը: Ներսէսէն ալ աւելի ուժեղ եմ:

բայց ան շատ աւելի մեծ է ինծմէ: Քանի մը տարիէն կը հաւասարինք և ալ անկէ ալ չեմ վախնար. մեծ տարբերութիւն մը չենք ունենար իրարմէ:

Ուրիշներու օգնել կը պահանջուի ամեն մարդէ. և պէտք չէ փոխարինութիւն մը ակընկալենք օգնութիւնը ստացող անձէն. այդ փոխարինութիւնը կ'ըստացուի վերջը կեանքի մէջ մէկ ուրիշէն. ուրիշ մը կ'ըլլայ նաև փոխարէն մը ստացողը մեզմէ բարերարուածէն: Ամենքս իրարու համար ենք և կախուած ենք իրարմէ, ուր ամեն անհատ կ'օգտուի միևսնեղէն և պէտք չէ խուսափի ամեն հարկ եղած պարագային իր օգնող ձեռքը երկարելէ:

155. Նախորդ օրընէ տեսեր էինք մեր պատրաստութիւնը. դեռ իրիկընէ կապեր էինք աւտելիքին կապոցները. հօրմէս ու մօրմէս զատ մեզի հետ էին հօրաքրոջս աղջիկները: Եւ առտուն կանուխ լոյսի ծագելէն առաջ ճամբայ ինկաւ սայլը, սայլը կը ճոճուար մեր ձանրութիւնէն:

Հողիւ էինք ելեր գիւղէն դուրս, որ արեւ ծագեցաւ լեռներուն ետեւէն: Թաւ անտառ մըն էր մեր աջէն ու ձախէն, որուն խորքէն թռչուններուն երգը տկանջ կը խուլցընէր: Հին ոտանաւորի մը կը տորը անցաւ մտքէս:

Ուղիղ երկու ժամէն սայլը բարձրացաւ սարահարթը, որուն գագաթէն հրաշալի տեսարան կը բացուէր: Ոլոր-մոլոր մուխերը լեռան լանջի գիւղերէն, բուրվառի նման, վեր կը խնկէին. իսկ լեռան կէսէն վար ոչինչ չէր երեւեր թանձր մշուշէն:

Անուշաքոյր ծաղիկներու դաշտակէ մը անցանք. և երբ անտառի մը ետեւէն դուրս եկանք՝ տեսանք մեր ուխտատեղին, որ դիմացի բլուրէն կարծես մեզի կը կանչէր և կարծես ինքը կախուած ըլլար ետեւի ժայռէն: Եւ զանգակին անուշ ձայնը բարեւեց մեզի իր փոքրիկ գմբեթէն. և հաճոյքի դող մը վաղեց մեր մարմնէն:

156. Նախորդ երեք հասուածներէն հաւաքե՛ այն ցախադասութիւնները, ուր բացառական հոլով մը կայ մնացած առանց ընդգծումի եւ փոքր ցեանակե՛ փակագծի մեջ սեսակը:

157. Նախ կ'աւագրե՛ս սեռի խնդիր բացառական ունեցող ցախադասութիւնները, ետք ալ առանձին՝ բնութեան խնդիր բացառական ունեցողները, փոքր ցեանակետով սեսակը:

Մարդս ստեղծուած է Աստուծմէ և ստեղծուած է հողէ:— Ալեքսանդրիա քաղաքը շինուած է Ալեքսանդր Մեծ թագաւորէն:— Մեր քաղաքը շինուած է հրաբխային քարէ:— Յիսուս մկրտուեցաւ Յովհաննէսէն, որ իր յաջորդներէն տառոր համար ալ Յովհաննէս Մկրտիչ կոչուեցաւ:— Մարդը բոլորովին կարմրեցաւ բարկութենէն և կը դողար յուզումէն:— Աշխարհքը կազմուած է ջուրէ ու ցամաքէ:— Հո-

վերը սովորաբար կը փչեն ցերեկը ցամաքէն դէպի ծով, իսկ գիշերները ծովէն դէպի ցամաքը — Իր դժգոհութեան պատճառը անյայտ մնաց ինծմէ։ — Այս երիտասարդը վերակացու կարգեցինք մեր կողմէն, բայց ոչ ոք զոհ չէ իրմէն։ — Խեղճը շատ տանջուեցաւ հայրենիքի կարօտէն։ — Ան առաջընէ գիտէր գլխուն գալիքը։ — Երկու շաբաթէն լուր կ'ըստանաս Լոնտոնէն։ — Ձեր խումբէն զատ ուրիշներէ ալ առաջարկ եղած է կեդրոնին։ — Յանկարծ կայծակը զարկաւ ամպերէն, հովը ներս խուժեց պատուհաններէն և մենք ներս շտապեցինք ծառերուն տակէն։ — Խօսողներէն մէկը ատաղձագործին կինն էր, իսկ ծախողներէն մէկը՝ իմ քոյրս։ — Դերասաններէն երկուքը շատ յաջող էին, բայց երգիչներէն և ոչ-մէկը բանի պէտք չէր։ — Բռնեցի ձեռքէն, ներս մտցուցի տունէն և հեռացուցի բաղձութենէն։ — Մարդը տեղեկութիւն չունէր իր զուրցածէն։ — Ձինուորները իջան լեռնէն, անցան հին կամուրջէն և քաղաքի գլխաւոր մուտքէն հասան մեծ հրապարակը։ — Այս խանութները կը շահին օտարականներէն։ — Յարձակողները կ'առաջնորդուէին կողոպտելու բնագրէն։ Մարդը ապշեցաւ լսածէն։

158. Հետեւեալ նախադասութիւններուն աւելցո՛ւր գործիական հոլով բնութեան խնդիր։

Հայ արիներուն խումբը իրիկունը ուշ ատեն մեկնեցաւ։ — Տան տիկինը հացը չորս հաւասար կտոր ըրաւ։ — Պատուհանին տակ նստած կար կը կարէր։ — Ես սեւագրութիւնը կ'ընեմ սովորաբար անջատ թղթի կտորներու վրայ։ — Ամեն մէկուս առջիւր բռնու մը կեռաս դրաւ։ — Հասկէ մինչեւ յաջորդ գիւղը քանի՞ ժամ կը տեւէ։ — Գիշերները կը լուսաւորենք մեր սենեակները։ — Այս տղան ամեն արգելքներու կը յաղթէ. և սիրելին է ամենուն։

159. Հետեւեալ նախադասութիւններուն բացառական խնդիրները, ուր հնար է, փոխարինէ գործիականով։

Տեսայ, որ մեծ բաղձութիւն կը վազէր կամուրջէն։ Ահագին դժուարակ մըն ալ կախեր էին կամուրջէն։

Վերադարձի ատեն անցանք անտառէն. անտառէն որ ելանք, անցանք լճակին ետեւէն. ես տեսած եմ սակայն շատ աւելի գեղեցիկները այդ լճակէն։

Բանալին կորսնցուցեր էինք, պատուհանէն մտանք սուռն. մօտ երկու մեթր էր պատուհանէն մինչեւ գետին։

Դողերը մտեր էին պարտէզի ետեւի դուռնէն, իրենց ոտքերուն հետքերը մնացեր էին դուռնէն մինչեւ խոհանոց։

Ձեռքերը հանեց զրպանէն և գլուխը բարձր բռնած անցաւ բակէն ու ելաւ դարպասէն դուրս։

160. Նախադասութիւնները լրացո՛ւր սեռի խնդրով մը :

Տղան տան առջևը նստած՝ խոյոր զմելի մը ձեռքը կը տաչէր: — Խեղճ պղտիկը եկեղեցիին դրան մէջ իրարանցումի ատեն բոլորովին ճգմըւեցաւ: — Յիմար պատմութիւնները կը սիրուին: — Թո՛ղ ու ներսէն բեր: — Առաւ ձեռքը, ասդին-անդին դարձուց զգուշութեամբ և նորէն դրաւ սեղանին վրայ: — Անտառները յաճախ կը հրդեհուին: — Վեր բարձրացուց և աչքերով սկսաւ փնտռել: — Շրթունքները կը փսփսային: — Հայրս կանչուեցաւ: — Մարդը ցաներ է ու հիմա կը ծախէ: — Հովը բացաւ ու կոտրեց: — Ո՞վ է ծեծեր, իմացա՞ք: — Ես վերջացուցի ու շուտով պիտի սկսիմ: — Մի՛ դատեր ու մի՛ մեղադրեր, որ ուրիշներն ալ չգատեն ու չմեղադրեն:

161. Նախադասութիւնները լրացո՛ւր բնութեան խնդրով մը:

Ժողովականները եղբայրս ընտրեցին: — Մենք խմբովին ներկայացանք: — Շատոնց է լուր չունինք: — Հացին պատառը չեն փրցըներ այլ կը կտրեն: — Հրացանը կրթնացուց, գլխարկը կախեց և քրտինքը սրբեց: — Սաստիկ փայլակ ու որոտ էր վազեցինք. որ ազատուինք: — Ալիքները կու գային. կը զարնուէին ու կը փշրուէին: — Պարտիզպանը կը թօթուէր և թութը կարկուտի պէս սկսաւ թափիլ: — Ճամբորդել շատ կը սիրեմ. և՛ կը հանգստացընէ և՛ նոր նիւթ կուտայ և՛ կ'առողջացընէ: — Գիւղացին սագերը տարաւ քաղաք և հիմա էջը հեծած կը վերադառնար: — Հին ատենները մարդիկ կըռուի կ'երթային: — Լողալ կը սորվինք և գրել կը սորվինք:

162. Նեանակէ՛ր ուղղական հոլովներուն ետեւը, քե՛ն Գալադասութեան մէջ ինչ դեր ունին:

Յոգնութիւնը քուն կը բերէ: — Յոգնութիւնը դեռ չէր առեր, որ մարդը նորէն կանչեցին դպրոցէն: — Ասիկա աշխատիլ չէ, այլ պարզապէս յոգնիլ է:

Դանակս բթացիր էր. միւս գործիքներուն հետ դանակն ալ զրկեցի խառնութ, որ սրեն. այնքան սրեր էին ու բարակացներ դանակս, որ այլեւս դանակ չէր, դարձեր էր սուինի պէս բան մը:

Նամակդ ստացանք թէ չէ, իսկոյն յայտնեցին մեծաւորին, թէ իր սպասած նամակը եկած է և որ եկածը շատ կարեւոր նամակ է:

Գործաւորները մտան կից սենեակը. ամենքն ալ փորձեաւ գործաւորներ էին. գործարանին վարիչը անմիջապէս վարձեց այդ գործաւորները:

Աստղերը աղամանդի պէս գամուած էին երկնքին տակը. երկինքը ինքը կործամ թաս մըն էր կարծես. ո՞վ էր կործեր այդ թասը, ո՞վ էր ամրացուցիր աստղերը այդ թասին խորքը:

163. Շինե՛ք զայդ նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ անունները անգամ մը սեռի խնդիր ըլլան, անգամ մը բնութեան խնդիր:

Կրակ. ծաղիկ. նկարիչ. սրտչում. սենեակ. բարձունք. որսալ. ժամացոյց. արեւ. ողեւորութիւն. ինծի. մեզի:

164. Կեռե՛ք, ստորոգիչը եզակի*, թէ յոգնակի.

Այս ձմեռ մեր հողին վրայ չորս նոր տուն (չինուիլ) — Հինգ նաւակները միասին (հետանալ) նաւամատոյցէն — Երեք տարի (սահիլ) այդ զէպքին վրայէն — Այս քանի մը դժուար տարիները (անցնիլ) շուտով — Փունջերով ծաղիկ (նետուիլ) յաղթողին ստքերուն տակը — Գլխուդ վրայ երեք մազ (չկա՞յ թէ չկան) վրայ երեք սանր կը պահաս — Յոգնութենէս ծռնկերս զողալ (սկսիլ) — Սաստիկ յուզումէն ձեռքերը (թուլնալ) — Ճամբուն երկայնքը վարդի թուփեր (է՞ թէ են) բուսեր — Ներսը պահարանին մէջ պտուղ ու հաց (կա՞յ թէ կան) քեզի համար — Ամպն ու մշուշը պատեր (է՞ թէ են) ձորը — Առողջութիւնն ու կենսութեան թիւնը կեանքի ամենէն մեծ հարստութիւնն (է՞ թէ են):

165. Ներգործական նախադասութիւնները դարձո՛ւր նոյնիմաստ կրաւորական նախադասութեան:

Այս ժողովուրդը շատ կը սիրէ իր թագաւորը — Ամենքը կ'արհամարեն ստախոս մարդուն խօսքը — Վերջին անձրեւները աճեցուցին բուսականութիւնը — Քու խօսքերդ վիրաւորած են աղուս ինքնասիրութիւնը — Թշնամին մեր բոլոր յարձակումները ետ մղեց — Աւազակները կիրճին մէջ չրջապատեր են ուղեւորներուն կարաւանը — Ծեծը աւանակ կը դարձնէ մարդը — Երկու շարթըւան կիսաքաղց վիճակը բոլորովին նիհարցուցեր էր բերդակալները — Կատաղի գամբըռները պաշարի էին հօտին մօտեցող օտարականները — Թերահաւատութիւնը կ'ըսպաննէ ողեւորութիւնը, իսկ յաջողութիւնը կը կրկնապատկէ եռանդը:

166. Դե՛հ հինգ նախադասութիւն, ամեն մէկը կազմուած ըլլայ միայն եմբակայե մը ու ստորոգիչե. ստորոգիչները ըլլան ներգործական սեռի. բոլոր նախադասութիւններուն աւելցուր մէյ-մէկ սեռի խնդիր. եսքն ալ եղածին վրայ կ'աւելցրնես մէյ-մէկ բնութեան խնդիր. ուր որ յարմարի նաեւ երկրորդ բնութեան խնդիր մը:

167. Դե՛հ Բանի մը նախադասութիւն, ուր բացառական ու զործիական հոլովները կարողացան իրար փոխարինել:

168. Հետեւեալ կտորին ամեն մէկ բառը գրե՛ք առանձին տողի մը ըսկիզբը իր ետեւի կէտին հետ. բոլը դիր հաւաստութեան նշան եւ գրե՛ք, թէ նախադասութեան մէջ ի՞նչ անգամ է եւ ո՞ր տեղի:

Եկողը որսկանն էր: Դիտով բարեւ տըւինք իրարու: Ան ձին քշեց անտառով, անցաւ գետակը, վայրկեանէ մը աներեւոյթ եղաւ աչքերէս: Մնացի մինակ, սիրտս կը սեղմըւէր նախանձէն, ձիավարել կ'ուզէի:

Ուրնետրոյ հաստատ

ԳՐՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՅՆԵՐ

Ա. ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

ԻԱ. Այն բոլոր գոյական ու ածական անունները, որոնք մինչեւ հիմա մենք աչքի առաջ ենք ունեցած, ատոնք բոլորն ալ որոշ իմաստ մը ունէին և այդ իմաստը արտայայտելու համար է որ կը գործածենք: Բայց կան անուններ, որոնք ո՛չ մէկ իմաստ չունին մեղի համար կամ եթէ իմաստ մըն ալ ունին՝ այդ իմաստը արտայայտելու համար չէ, որ կը գործածենք: այլ պարզապէս կը գնենք անձի մը, տեղի մը կամ իրի մը վրայ այդ անձը, տեղը կամ իրը մասնաւորապէս որոշելու ու իր նմաններէն զատելու համար:

Օշին, Յակոբ, Աննա, Կովկաս, Մասիս, Արաքս, Արսէն, Շաքէ մասնաւոր մարդոց ու մասնաւոր տեղերու անուններ են և մեր լեզուին մէջ մեղի համար ո՛չ մէկ իմաստ չունին, բայց մենք կը դործածենք Շաքէն միւս կիներէն և Մասիսը միւս լեռներէն զատելու և առանձին յատուկ անունով մը անուանելու համար:

Իսկ Շուշան, Թադուհի, Աստղիկ, Յարութիւն, Վահան, Պայծառ, Համբարձում, Սիրական, Պերճ, Գեղեցիկ, Մեխակ և ուրիշ բաղմաթիւ գոյական ու ածական անուններ, որոնք սովորական հասարակ անուններ են իրենց բուն նշանակութեամբ առնուած, երբ կը գործածուին ո՛չ թէ իրենց այդ իմաստը արտայայտելու համար, այլ մարդու մը կամ տեղի մը իբրեւ մասնաւոր անունը, կը դառնան յատուկ անուն:

Եթէ քիչ մը խորը նայելու ըլլանք՝ հիմա մեղի համար իմաստ չունեցող յատուկ անուններն ալ հասարակ անուններ են. ատոնք կա՛մ իմաստ ունեցող բառի մը կրճատումներն ու աղճատումներն են, ինչպէս՝ Ռիբա=Մարգարիտա, Համո=Համալսարան, Ուրիկ=Յարութիւ, Մկո=Մկուշ=Մկրտիչ, կա՛մ փոխառութիւններ են օտար լեզուներէ, ուր անոնք հասարակ ու սովորական անուններ են որոշ նշանակութեամբ և կը գործածուին նաև իբրև յատուկ անուն, այսպէս՝ Պետրոս քար ըսել է, Մարտիրոս՝ նահատակ, Լեւոն՝ առիւծ, Աւետակ՝ արքայ, Թորոս՝ ցուլ, Նիկողոս՝ յաղթանակ:

կը մնան անշուշտ դեռ բաւական յատուկ անուններ, որոնց իմաստը հանել չենք կրնար, որովհետեւ դեռ հասկընալ չենք կրցած, թէ անոնք ուրկէ են մտած մեր լեզուն, և կամ այնքան կրճատուած ու աղճատուած են, որ իր էին իմաստը պարունակող ձեւը վերականգնելը չափազանց դժուար է:

Բ. Ո՛րքս կողմէն ալ բաւական յատուկ անուններ ժամանակի ընթացքին կը գործածուին իբրեւ հասարակ անուն՝ դառնալով որոշ գաղափարի մը արտայայտիչը: Մարդկութիւնը այդ տեսակ ներոններ շատ է տեսեր» ներոն Հռոմի մէջ բռնակալ ու խելագար կայսր մըն էր և այդ երկու իմաստն ալ կապուած է իր անունին: Ճնոր Մարիամ մը վարձեցինք»։ Կ'ուզէ ըսել՝ սպասուէի:

Մանաւանդ շատ սովորական երեւոյթ է տեղի ու արտադրողի յատուկ անունը իբրեւ արդիւնաբերուած առարկայի հասարակ անուն գործածելը: «Հինգ արշին մատամպուլ»։ Վերջին բառը այդ կտուր պատրաստող գործարանատիրոջ յատուկ անունն է: «Քաշմիր մը նետեց ուսերուն»։ Քաշմիր Հնդկաստանի հիւսիսային մասին մէջ տեղի անուն է, ուր այդ տեսակի շալերը կը հիւսուին: Ճնոր ֆորտ մը գըններ է», «Սիրուն կոտակ մը նըւիրեցի իրեն»։ Երկուքն ալ գործարանատիրոջ անուններն են: «Գաւաթ մը շամբանեա խմե'նք», «Ես կը գերադասեմ մալական»։ առաջինը ֆրանսական գաւաթ է, երկրորդը սպանական քաղաք, որոնք իրենց արտահանած գինիներուն տըւեր են իրենց յատուկ անունը, իբրեւ հասարակ անուն:

Անձի ու տեղի յատուկ անունները իրենց հասարակներէն զանազանելու համար միշտ կը գրենք առաջին գիրը գլխատառով և ընդհակառակը եթէ յատուկը հասարակի իմաստով գործածենք՝ պէտք է գրենք սովորական բառերուն պէս: Յատուկ անունէն կազմուած ածականները պիտի գրուին նմանապէս փոքրատառ՝ հայկական տօները, Եւրոպական վարք ու բարք, Ֆրանսական գրականութիւն:

Իսկ առարկաներու վրայ դրուած յատուկ անունները բացի գլխատառ գրելէն՝ կը դնենք ջակերտներու մէջ, մանաւանդ եթէ մէկերկու բառով է կազմուած: Այսպէս, օրինակ, «Սլիքներուն Բարեկամը» նաեւ, «Իմ պուրակս» ամարանոցը, «Պուտ մը կաթ» ընկերութիւնը, որ մանուկները կը խնամէ, Րաֆֆիի «Կայծերը», Ահարոնեանի «Պատկերները»:

169. Ամեն նախադասութեան ետեւէն դի'ր ուրիշ նախադասութիւն մը, ուր նախորդի յատուկ անունը իբրեւ հասարակ անուն գործածուած ըլլայ:

Շուշանը շատ սիրուն աղջիկ մըն է: Քրոջս անունը Պայծառ է: Յարութիւնը պառկեր էր խոտերուն մէջ ու երկինքը կը դիտէր:

«Մայրի՛կ, Վահանը գնդակս խլեց ու փախաւ» այսպէս կը գանգատէր Շողերը: Հրաչեան մեզմէ վերի դասարանն է. իսկ անոր մեծ քոյրը՝ Թագուհին՝ անցած տարի աւարտեց մեր դպրոցը: Նորաչէնը Երեւանի մօտիկ գիւղ մըն է: Կարմիր ծովը Եգիպտոսի ու Սրաբիայի մէջտեւ շէր կ'իյնայ:

170. Հեծելեալ հասարակ անունները անգամ մը իբրեւ սովորական գոյական գործածե՛ք՝ անգամ մը իբրեւ յատուկ անուն զանազան նախադասութիւններու մէջ:

Գոհար, փայլուն, մեխակ, աստղիկ, պերճ, մարգարիտ, վարդ, արշալոյս:

171. Պատասխանե՛ք. մէկ. երկու կամ երեք բառէ միտք մը իբրեւ յատուկ անուն գործածելով:

Ի՞նչ է կարդացած գրքիդ անունը:

Ո՞ր շոգենաւով եկաւ հօրեղբայրդ:

Շատ տարօրինակ անուն մը ունի սա դիմացի հագուստեղէնին խանութը, կը կոչուի...:

Ծիշդ անտառին բերանն էր իրենց տնայրանոցը, անունն ալ...:

... ընկերութիւնն է, որ կը հոգայ աղքատ դպրոցականներու գրեթե անկան պիտոյքները:

172. Հեծելեալ հասարակ անունները իբրեւ յատուկ գործածե՛ք.

Հովասուն. ամենուն բարեկամը. արծիւ. ոսկի աքաղաղ. անպարտելի. նրբաճաշակներուն ժամադրավայրը:

173. Գրե՛ք փառքի մը յատուկ անուններ, որոնք գոնէ քերականական միջոցներով կ'աւելան հետեւի շարքի մէջ:

174. Գրե՛ք ճասը յատուկ անուն, որոնք ուրիշ լեզուներէ մտած են հայերէնի մէջ եւ սրոնք նշանակութիւնը գիտես. գրե՛ք դիմը իրենց նշանակութիւնը ալ:

175. Բացի մարդկային անուններէն ուրիշ ի՞նչ բաներ կրնան իրենց յատուկ անունը ունենալ:

176. Յատուկ անունը ի՞նչ ներփնով ու արտաքինով ի՞նչ թարգմանութիւն ունի հասարակ անունէն:

177. Ինչո՞ւ համար յատուկ անունները գլխաւորապէս կը գրեմք կամ ջակեցնենք մէջ կ'առնենք:

178. Դերանուններն ու յատուկ անունները ինչո՞վ կը տարբերին բոլոր մնացած անուններէն. իսկ ինչո՞վ կը տարբերին իրարմէ:

Բ. ԳԼԽԱԳԻՐ

Գլխագիրներու գործածութիւնը ընդհանրապէս ընթերցման և ըմբռնումի դիւրացմանը կը ծառայէ:

Գլխագիր կը գրենք միայն բառին առաջին գիրը և կը գրենք հետեւեալ պարագաներու մէջ.

Ս.. Նախ շարադրական պահանջով՝

1) Վերնագրի առաջին բառը,

2) Ամեն նոր-տողէ սկսող պարբերութեան առաջին բառը,

3) Վերջակէտէ ետքը առաջին բառը,

4) Միջակէտէ, ստորակէտէ և ընթացիկ ետքը, երբ ուրիշի մը խօսքը մէջ կը բերուի սովորաբար ջակերտներու մէջ. բայց կրնայ նաև առանց ջակերտներու. «Յիսուս ըսաւ. Ա՛ռ մահիճդ ու դնա». «Յայտնի խօսք է՝ Տուր կայսերն կայսեր և Աստուծոյն Աստուծոյն»:

5) Քաղաքավարական Դուռ ու Ձեռ ու Ձեզ ու Ձեզմէ բառերը. ինչպէս և Դուռ, Քու, Քեզ և Քեզմէ բառերը խիստ բարձրագիր անձի մը կամ Աստուծու ուղղուած գրութեան մը մէջ:

Բ. Յատուկ-անուաններու պահանջով՝

1. Բուն յատուկ-անունները անձի, տեղի, իրի ու հաստատութեան երբ գոյականաբար է առնուած:

2) Բոլոր յատուկ-անունները, երբ իբրև մակդիր են առնուած ուրիշ անունի մը վրայ. «Գէորգ վարդապետ», «Արաքս գետ», «Վան հիւրանոցը», «Արարատ ընկերութիւն»:

3) Անձի յատուկ-անունները իրենց վրայ կ'առնեն իբրև յատկացուցիչ մակդիր իրենց ցեղի, իրենց տոհմի անունը գլխագրով. «Արեւմտեան Բարսեղ» «Արծրունի Գրիգոր»:

4) Յատուկ-անուններուն վրայ իբրև մականուն ծառայող դասական ու որակական մակդիրները կը դրուին նմանապէս գլխագրով. «Լեւոն Երրորդ» կամ «Լեւոն Գ.», «Սմբատ Առաջին» կամ «Սմբատ Ա», «Ներսէս Շնորհալի», «Յակոբ Շղթայակիր»:

5) Սցի, ացի, ախան, ալիս մասնիկներով ազգերու և տեղերու յատուկ-անուններէն կազմուած մակդիրները սովորական պայմաններու մէջ պէտք է գրուին հասարակ դրով՝ «մշեցի բարեկամ», վանցի կտրապետներ, եւրոպական լեզուներ, ասիական ժողովուրդներ, ֆրանսերէն ասոյթ մը, հայերէն գիր, հայ պատմութենէն դրուագ մը: Բայց երբ այդ մասնիկներով մակդիրները դարձած են յատուկ-անուն կամ յատուկ-անունին մէկ մասը՝ բնականաբար ատոնք ալ

կը գրուին գլխագիր. «Կասպիական ծովը, Մովսէս խորենացին, փարպեցին՝ մեր պատմիչը, Ֆրանսական գրականութիւնը»:

Այսպէս ալ աղգերու անուններուն յոգնակի տրական հոլովը իրե յատկացուցիչ մակդիր կը գրուի գլխագիր, երբ իբրե իրի մը, երեւոյթի մը կամ հաստատութեան մը յատուկ-անունը նկատուի. «Հայոց պատմութիւնը, Պարսից գրականութիւնը, Արաբացոց խալիֆայութիւնը, Ռուսաց պետութիւնը»:

6. Հաստատութեան մը, տեղի մը, երկրի մը անունը երբ քանի մը բառերէ է կազմուած՝ այդ բաղադրիչ բոլոր բառերն ալ գլխագիր կը գրուին. «Հայ Բարեգործական Ընկերութիւնը», «Հայ Արիւնքու Ընդհանուր Միութիւնը», «Անուշ Հովեր Զբօսավայր», «Ճերմակ Կարապ Զբօսանաւ» կամ «Ճերմակ Կարապ» զբօսանաւ:



Գ. ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առողջանութեան նշանները կը ծառայեն ըսուած խօսքին արտայայտութեան եղանակը ճշգելու, արտասանելու ձեւը որոշելու համար: Այդ նշանները հետեւեալներն են:

Ա. Հարցականը ('). որ կը գրուի հարցական նախադասութեան այն բառին ու այն վանկին վրայ, ուր կ'իյնայ հարցին ուժը:

Զարմացականը ('), որ զարմանք, հիացում, գոհունակութիւն, հեղինանք, վարանում, տրգահատանք, վիշտ և ուրախութիւն, այսինքն ընդհանրապէս զգացումները արտայայտելու կը ծառայէ. կը գրուի նախադասութեան այն բառին ու այն վանկին վրայ, որուն երկարացումովը մեր զգացումը կը ցուցադրենք: Ուրեմն և բոլոր բացականչութիւններուն վրայ:

Բ. Շեւը ('), ձայնի մասնաւոր զարկն է: Ամեն նախադասութիւն իր շեշտը ունի, ամեն բառ իր շեշտը ունի, նոյնիսկ ամեն վանկ իր շեշտը ունի, այս բոլոր շեշտերը սակայն ընդհանրապէս չենք նշանակեր գրութեան մէջ:

Շեշտը պարտադրաբար կը դնենք.

1) Բոլոր հրաման եղող բառերուն վրայ: Պարզ բայերուն մէջ վերջին վանկին վրայ. ասոյթային բայերուն մէջ բայարմատին կամ անունին վրայ, ո՛չ իրենց օժանդակին. իսկ բաղադիր բայերուն մէջ դերբային վրայ, կրկնաբաղադիրներուն մէջ առաջին դերբային վրայ: «Կերէ՛ք, զա՛րկ տուր, չա՛փ տուր, ե՛փ տըլէք, կերա՛ծ եղէք, խաղալո՛ւ եղիր, նշա՛ն առ, դո՛ւրս բեր»:

11

2) Բոլոր դիմառնութիւններուն վրայ. եթէ դիմառնութիւնը իր առջեւը բացականչութիւն մըն ալ ունի, շեշտը կը դրուի այդ բացականչութեան վրայ. ճշդա՛յ, ա՛ տղայ, բարեկա՛մ, ա՛յ մարդ, ո՛վ տգիտութիւնն:

3) Յատուկ անունները, երբ կոչական կը դառնան, շեշտը կ'ըստանան իրենց առաջին վանկին վրայ, եթէ երկվանկ են. կ'ըստանան սովորաբար երկրորդ վանկին վրայ, եթէ վանկերուն թիւը երկուքէն աւելի է: Յա՛կոբ, Մի՛նաս, Մա՛րօ, Սե՛դա, Արտա՛շէս, Յարժ՛ութիւն, Աստուա՛ծատուր, Մի՛քայէլ, Համբա՛րժումն. բայց կրնան ստանալ միշտ առաջին վանկին վրայ:

4) Մակդիրներուն ուժը բարձրացընող շա՛ս, աւելի՛, ամենե՛ն և ե՛ն բառերուն վրայ:

5) Ուր դերանունին վրայ, եթէ իբրեւ մակդիր է առնուած. ճո՛ր գիրքը. որ կ'ուզես: Ալ շողկապը, եթէ իբրեւ մակբայ է առնուած. ճԱ՛լ սիրա չի մնաց: Այդպէս ալ շեշտուած շողկապներուն վրայ. ճե՛ւ ... ե՛ւ ..., թէ՛ ... թէ՛ ..., կա՛մ ... կա՛մ ..., ո՛չ ... ո՛չ ...: Եւ վերջապէս այո՛ւ և ո՛չ, հա՛ ու չե՛ բացականչութիւններուն վրայ:

6) Նախադասութեան մէջ շեշտ կը դնենք այն բառին վրայ, որ ուղղորութեան առարկայ դարձընել կ'ուզենք կամ իմաստի սխալ հասկացողութենէ կը վախնանք. ճարի՛ մը առաջ ես ալ այդ կարծիքէն էի:

Դ. Ընդգծումը ուղղորութիւնը կը հրաւիրէ այն բառին, այն նախադասութեան կամ պարբերութեան վրայ, որ ըստւածին մէջ ամենէն կարեւորը կը համարուի: Տպագրութեան մէջ ընդգծումը սովորաբար կը փոխարինուի տպարանական այլ տեսակի տառերու գործածութեամբ:

Դ. Ջակեթը (ա - - - -) կը դնենք այն բառին ու խօսքին սկիզբն ու վերջ, որ ուրիշի մը ըսածն է և որ հիմա կը հիւսենք մեր խօսքին և կ'ուզենք հասկըցնել, որ այդ կտորը փոխառութիւն մըն է:

Ջակերոններուն մէջ կ'առնենք նաեւ իրերու յատուկ անունները, մանաւանդ եթէ մէկ բառէ աւելի են. Սմայլսի ճնաւորութիւնը. ճԱռողջ Մարմին» մարմնամարզական ընկերութիւնը:

Ե. Անշարժ գծիկը (—) կը գործածենք նախ զրութեան խօսակցական ձևի ատեն տարբեր խօսողներու խօսքին սկիզբը. օրինակ՝

- Ո՞վ ըսաւ:
- Բարեկամէ՞ս լսեցի:
- Իսկ հա՞յրդ երբ վերադարձաւ:
- Երէկ գիշեր:

Անջատման գծիկ կը դնենք նաև, երբ մէկու մը խօսքերը մէջ-
բերելու ատեն իբրև հեղինակ քաջատրութիւն մը կու տանք կամ
կ'ըսենք. թէ ով էր խօսողը. անջատման գծիկը կը դնենք միշտ խօ-
սողի ու հեղինակի ըսածներուն մէջտեղը. օրինակ՝

— Այո՛. վճռեր ենք ներկայացում մը տալ. — պատասխանեց
դերասանը ոտքի ելլելով, կամ

— Ինչո՞ւ համար կը գարմանաս, — բացականչեց տղան, — մի՞թէ
օտարականը մարդ է՞:

Զ. Միացման գծիկը (-) գլխաւորապէս երեք գործածութիւն ունի.
Նախ երկու բառերուն մէջ դրուելով՝ իբրև մէկ բառ ըմբռնել ու
արտասանել կը պահանջէ. «Նոր-Տարի», «էշ-նահատակ», «չորս-հինգ
հոգի», «ուրախ-զըւարթ», «կամաց-կամաց»:

Երկրորդ՝ բառի մը հնչական կամ արմատական բաղադրիչ մա-
սերը իրարմէ զատելու կը ծառայէ. «բա-ցա-սա-կան» կամ «բաց-աս-
ական». «քա-ղա-քա-վա-րի» կամ «քաղաք-ա-վար-ի»:

Երրորդ՝ այս նոյն միացման գծիկն է, որ ճողադարձի նշան կ'ան-
ուանենք, երբ տողին վերջը բաւական տեղ չենք ունենար սկսուած
բառը լրացնելու համար և բառին մէկ մասը յաջորդ տողը անցընե-
լու կ'ըստիպուինք. տողին վերջը կիսատ գրուածին ետեւը կը դրուի
այդ միացման նշանը:

179. Արագրէ՛ հետեւեալ խօսակցութիւնը՝ դնելով գլխաղիւսներն ու
առողանութեան ամեն ճեսակի նշանները, ուր որ պէ՛տ է:

Կարդացածդ ինչ գիրք է. հարցուց յանկարծ մեր շրացին պար-
տէզի ցանկապատին ետեւէն:

պարոնեանի մէկ գրուածքը:

աս ուր պարոնեանն է:

մեր յայտնի երգիծաբան յակոբ պարոնեանը: չես իմացած:

գիտեմ: գրքին անունն ինչ է:

անունն է՝ իմ ձեռատետրս: կարդացած ես:

չէ, ճշմարիտ. դորձերս շատ. ուրկէ գտնեմ կարդալու ժամանակ:
կ'ուզես քեզի կտոր մը կարդամ: անպիտանը շատ համով կը գրէ:
է, կարդա տեսնենք՝ ինչ կը գրէ:

ու ես կարդացի իրեն հետեւեալ կտորը ճիշդ իմ ընդհատած տե-
ղէս:

180. Արագրէ՛ նոյն ձեւով Պարոնեանէն առնելով հետեւեալ կտորը:
միայն կիները չեն, որ միշտ նոր ձեւով խօսիլ կ'ուզեն:

կը ներկայացընեմ ձեզի պարոն գրասէր ատոմն, որ մասիսի մէջ

նոր կամ հին հրատարակութիւններ քննադատելու պաշտօն կը վարէ։ Ճաշակը կիրթ է և քննադատի մը հարկ ևղած զրամագլուխն ունի։ Քայքայ չատ անգամ դիրք մը քննադատած միջոցին կ'ըսկսի իր ցաւերը մեղի պատմել։ Երբեմն ալ ինքը խօսած ատեն լիտրէն ալ խօսքի մէջ կը նետուի. սա խօսքը չլրմնացած վիկտոր հիւկօ, վոլտէր, լամարդին և ուրիշ հարիւրաւոր հեղինակներ կու գան՝ խօսքի մէջ կը խառնուին, այնպէս որ կ'ըստիպուինք ըսել։

Կամ ամենքդ ալ լռեցէք, կամ մէկիկ-մէկիկ խօսեցէք, որ հասկընանք։

Օրինակի համար, եթէ դուն կ'ըսես՝ արշալոյսին արթընցայ, հագուստներս հագայ ու քիչ մը հաց կերայ, պարօն ատոմն պիտի ըսէ։

Արթընցայ արշալոյսին, զոր վարդամատն կ'անուանեն դասականք և հագայ հագուստներս. որք տձեւութիւն ծածկելու միայն ծածկելու են կ'ըսէ ժան ժաք ոռուսօ, և կերայ քիչ մը հաց, թէպէտ և ւեետարանը կ'ըսէ, թէ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ և բանիւ տեառն։

Ինչու համար մտքին ուղղութեան դէմ ապստամբիլ և ընթերցողներդ չարչարել, ու ատոմս, չիտակ ճամբադ գնա. ինչ հարկ կայ օմեն քայլափոխիդ մէյ-մէկ հեղինակի դուռը ավի առնելու։

ԱՇԽԱՑԱՆՔԻ ՈՒՂԵՑՈՑՑ

1. Այս պրակի իւրաքանչիւր գլխուն մէջ գծուած օրէնքները բոլորն ալ աշակերտները իրենք պէտք է դիտեն, հանեն ու ձեւակերպեն. ամեն ինչ հաւաքական աշխատանքով, ուսուցչի ղեկավարութեամբ ու դասարանի մէջ:

Ուսուցիչը կը դնէ հարցերը, Ժողովը կուտայ օրինակները և մատնանիշ է՛րնէ դիտելու ու մտածելու ուղղութիւնը, ուր հարկ է:

Աշակերտներէն մէկը կ'աշխատի գրատախաակին վրայ բացատրութիւնները գիւրացրնելու համար. բայց անպատճառ բոլոր աշակերտները կ'աշխատին միաժամանակ ամեն մէկը իր սեւագրութեան տետրակին վրայ:

Եղրակացութիւնները կը համեմատուին, կը լրացուին ու կը ձեւակերպուին ամբողջ դասարանի կենդանի աշխատակցութեամբ:

2. Այս հիմնական աշխատանքը կատարուելէն ետքն է միայն, որ ուսուցիչը կը պատուիրէ աշակերտներուն իրիւ պարտականութիւն կարգալ ուշադիր ու ամբողջութեամբ այս հատորիկի համապատասխան գլուխը: Պիտի կարգան տուանք, իրիկունք, ամեն մէկը իրեն համար:

Այս ուշադիր ու լրիւ ընթերցումէն ետքը կ'անցնին աշակերտները գրաւոր վարժութիւններու: Նորէն դուրսը, ամեն մէկը ինքը առանձին իր խելքով ու հիգով, բայց ուսուցչի մատնանշած ձեւով, կարգով ու չափով:

3. Բոլոր վարժութիւնները և հարցերուն բոլոր պատասխանները պէտք է կատարեն աշակերտները անպատճառ գրաւոր և միայն քերականութեան յատկացուած տետրակի մը մէջ:

Վարժութիւններուն պատուէրներն ու հարցերը տետրակին մէջ արտագրուելու բնաւ կարիք չկայ: Բաւական է իւրաքանչիւր հրահանգի գործադրութեան սկիզբը դրուի հրահանգին կամ հարցին թիւը ամեն շփոթութեան ու աւելորդ փնտռումներուն առջեւը առնելու համար:

Բայց ասոր փոխարէն հարցերուն պատասխանները միշտ պէտք է խմբաբաժին լրիւ կերպով, այսինքն այնպիսի ձեւով մը, որ ամեն ինչ բոլորովին պարզ դառնայ նոյնիսկ հարցը բնաւ չկարգացողներուն: Հարցի մը մասին յըստակ ու լրիւ պատասխանել փորձելը շատ խոր ու կարեւոր մարզանք է:

4. Կատարուած աշխատանքին ստուգումն ու սրբագրութիւնը կը կատարուի անսլոյման դասարանին մէջ և նորէն աշակերտներու կենդանի մասնակցութեամբ: Ամեն աշակերտ ինքը կը սրբագրէ իր սխալները և կը լրացնէ թերիները իր գրածին վրայ:

Պէտք չէ վախնալ ժամանակի կորուստէ և երբեք չըշտապել: Կարեւորը աշակերտներուն գիտական հետաքրքրութիւնը արթնցնելն է և գիտակից ինքնաշխատութեան, դիտելու ու որոնելու վարժեցնելը:

Այս տեսակի աշխատանքով այս պրակի ամբողջ նիւթը մշակելու ու իւրացնելու համար շարաթական երկու պահը կատարելապէս հերիք է:

5. Տարուայ ընթացքին ուսուցիչը մէջէմէջ ամեն մէկ աշակերտի տետրակները կ'առնէ ու կը տանի տուն թղթատելու, աչքէ անցընելու և ստուգելու համար տետրակին մաքրութիւնը, ուղղագրութիւնը, կատարուած աշխատանքներուն լրութիւնն ու լրջութիւնը և դասարանական սրբազրութիւններուն ինչ աստիճան ուղադիր հետեւած և շտկած ըլլալը:

Տետրակներու այս պարբերական ընդհանուր քննութիւնը հնարաւորութիւն կու տայ ուսուցչին ամեն մէկ աշակերտի ընդունակութիւններու, հակումներու ու կարողութիւններու մասին, ինչպէս և անոնց բնաւորութեան ու թերիներու մասին իր ունեցած կարծիքն ու գնահատանքը ճշդելու ու խորացնելու:

Իր դիտողութիւններն ու նկատողութիւնները անշուշտ կը յայտնէ տետրակի տիրոջ կամ ամբողջ դասարանին, նայելով ընելիք նկատողութեան բըռնոյթին: Բայց տետրակներուն վրայ սրբազրութիւններ կատարելու պէտք չունի: Աշակերտներուն համար ատիկա աւելորդ ու անկարելի բան մըն է, իսկ ուսուցչին համար անկարելի բեռ մը ու ժամաւաճառութիւն:



ԿԷՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերջակէս կը դնենք, երբ մէկ կամ քանի մը նախադասութիւններու միջոցով մեր ըսելիքի մէկ մասը արդէն լրացած է:

Միջակէս կը դնենք երկու վերջակէտներու մէջ ինկած նախադասութիւնները իրարմէ զատելու համար:

Ստորակէսը երեք դեր ունի.

ա. իրարու շաղկապուած նախադասութիւնները իրարմէ կը զատէ.

բ. նախադասութեան մէջ նոյն տեսակի անդամները իրարմէ կը զատէ.

գ. Բացականչութիւնները, կոչերը, կանչերը նախադասութեան միւս անդամներէն կը զատէ:

Ինչպէս ստորակէտի նման զատող նշան մըն է քիչ մը աւելի նուրբ գործածութեամբ:

Շեշտը, զարմացականը և հարցականը պէտք է դրուին ճիշդ այն բառին վրայ, որ ենթադրուած է շեշտի, հարցի ու զարմանքի. և պէտք է դրուին բառի շեշտը և ձայնաւորին վրայ:

10
30.

491.99-5

6 30

Արհ. Օրին.

Գ Ի Ն Ը

ԵՐԿՈՒ ԼԻԲԱՆԱԿԱՆ ՈՍԿԻ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0070108

A $\frac{III}{3868}$